Ինչպես արդեն վերևում նշվել է, 1991 թ. անկախացմանը նախորդած ու հաջորդած տարիներին ՀՀ-ը ստիպված է եղել դիմագրավել ինտենսիվ միգրացիոն գործընթացներով պայմանավորված տարաբնույթ մարտահրավերների: Վերջին երեսուն տարիներին էականորեն փոխվել են ինչպես ՀՀ-ին առնչվող միգրացիոն գործընթացները, դրանք ծնող պատճառներն ու հետևանքները, միգրացիոն գործընթացների մեջ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված խմբերն ու նրանց խնդիրները, այնպես էլ պետական կարգավորման միջոցով հիմնախնդրի լուծման մասին պատկերացումները: ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը միգրացիոն հիմնախնդիրների

[1] Տե՛ս «Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը», **Մարզպանյան Հ., Մարկոսյան Ռ., Խաչատրյան Ն.,** Երևան, 2016 թ.

[2] International Migration Institute, Working Papers, Paper 9, 2008, p. 4

[3] "Theories of migration: Conceptual review and empirical testing in the context of the EU East-West flows", **Lucia Kurekova,** London, 2011, p.5

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության N-747-Ն որոշումը, 20 մայիսի, 2004թ:

[5] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» 2017, էջ 24:

լուծմանն ուղղված պետական կառավարման համակարգի ստեղծման և զարգացման ընթացքը տարանջատել է հետևյալ երեք հիմնական փուլերի:[6]

Առաջին փուլը (1988-1999թթ.) կրում էր հիմնականում օպերատիվ-կառավարման բնույթ և գլխավորապես ուղղված էր Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից և նախկին ԽՍՀՄ այլ տարածքներից փախստականների ստվար զանգվածի հիմնախնդիրների լուծմանը: Երկրորդ փուլը, ըստ վերոհիշյալ հայեցակարգի, սկսվում է 1999թ. և ուներ ավելի ընդլայնված միգրացիայի պետական կարգավորման սպեկտր: Ընդունվեցին մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, որոնք դրեցին միգրացիայի ոլորտում ազգային օրենսդրության հիմքերը:[7] 3-րդ փուլն իր մեջ ներառում էր Եվրոպական հարևանության քաղաքականությամբ (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության ծրագրով (ԱլԳ) նախատեսված ՀՀ միգրացիոն կառավարման համակարգը օրենսդրական և ինստիտուցիոնալ առումներով Եվրոպական միության չափորոշիչներին մոտարկելու և համահունչ դարձնելու գործընթացի մեկնարկը:

Սակայն հարկ ենք համարում ընդգծել, որ բացի վերոհիշյալ երեք փուլերից կարելի է առանձնացնել ևս մեկը: Այդ փուլը մոտավորապես սկսվում է 2010-2011թթ, երբ, խիստ բացասական միգրացիոն ցուցանիշներով պայմանավորված, կառավարությունը միգրացիայի ոլորտում իներտ և պասիվ ոչ նախաձեռնողական քաղաքականությունից փոքրինչ անցում կատարեց ավելի արձագանքող քաղաքականության: Մասնավորապես, 2010թ. հաստատվեց «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ), 2011թ.՝ դրա իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագիրը:[8] Սիրիական ճգնաժամի հետևանքով 2012թ. սկսած պաշտոնական տվյալների համաձայն՝ Հայաստան ժամանեցին մոտ 20.000 սիրիահայեր:[9] Վերջիններիս վերաինտեգրման և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության նպատակով 2015թ. ՀՀ ԱԺ-ը փոփոխություններ և լրացումներ կատարեց «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում, որով ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստականների իրավունքները էլ ավելի ներդաշնակեցվեցին եվրոպական չափանիշներին: Այս շարքում վերջին ամենաթարմ իրողությունը կառավարության ընդունած միգրացիայի քաղաքականության 2017-2021թթ. ռազմավարությունն է (այսուհետ՝ Ռազմավարություն):[10] Մեր կարծիքով, անկախությունից ի վեր միգրացիոն քաղաքականության մշակման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման գործում նշանակալի է միգրացիոն քաղաքականության Հայեցակարգի և Ռազմավարության՝ որպես ոլորտի հիմնարար փաստաթղթերի դերը, քանի որ դրանցով սահմանվում են առաջնային լուծում պահանջող և գերակա հիմնախնդիրները, ինչպես նաև այդ խնդիրների լուծման գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը:

Փրինստոնի համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգ Դ.Մասին պնդում է, որ ժամանակակից միգրացիոն քաղաքականությունը քաղաքական գործընթացների արդյունք է, որում միմյանց վրա փոխազդում են օրենսդիր, գործադիր, դատական իշանության ճյուղերը և

[6] ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ (ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի №51 որոշում), // http://www. smsmta. am/?id=948:

[7] «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (3 մարտի, 1999թ. ՀՕ-288-Ն), «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (6 դեկտեմբերի, 2000թ., ՀՕ-120-Ն), «Քաղաքական ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (19 հոկտեմբեր, 2001թ. ՀՕ-229-Ն) և մի շարք այլ օրենքներ, *տե՛ս* ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ (ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի №51 որոշում) էջ 4:

[8] ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագիր (ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի N1593-Ն որոշում), // http://www.smsmta.am/?id=1011

[9] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի խոսքը ՀՀ ԱԺ-ում «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկման ժամանակ, 6 նոյեմբեր, 2011թ.// https://www.panorama.am/am/news/2015/11/06/hranush-hakobyan/1475885

[10] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թթ. ռազմավարությունը, ՀՀ կառավարության 2017թ. մարտի 23 N12 արձանագրայի որոշում

քաղաքացիական հասարակության սպեկտրը՝ նպատակ ունենալով խրախուսել կամ կարգավորել միգրացիոն հոսերքը:[11] Իր «Միջազգային միգրացիան 21-րդ դարի արշալույսին: Պետության դերը» աշխատանքում Դ.Մասին միգրացիոն քաղաքականության ձևավորման մեջ առանձնացնում է շահերի երեք կարևոր խմբեր՝ աշխատուժ, կապիտալ տնօրինողներ և հողի սեփականատերեր: Աշխատավորները սովորաբար միշտ պահանջում են բարձր աշխատավարձ և ենթագիտակցորեն պայաքարում են աշխատուժի առաջարկի դեմ: Կապիտալ տնօրինողները, մյուս կողմից, ամեն կերպ նպաստում են աշխատուժի առաջարկի ընդլայնմանը՝ նպատակ ունենալով ավելի էժան աշխատուժ ունենալ: Նրանց լոբբիստները ճնշում են գործադրում քաղաքական գործիչների վրա աշխատուժի սահմանափակումները վերացնող օրենքներ ընդունելու համար: Այս պայքարում նրանց են միանում նաև հողի սեփականատերերը, քանի որ միգրացիոն հոսքերի ներհոսքը բարձրացնում է հողի վարձավճարները:[12]

Փորձելով տեղայնացնել Դ. Մասիի այս տեսությունը հայաստանյան իրականության մեջ՝ տեսնում ենք, որ այստեղ կապիտալի հիմնական մասի տնօրինողները եղել և մնում են կա՛մ իշխանության մեջ, կա՛մ իշխանության բարձրագույն ներկայացուցիչների հետ սերտ հարաբերությունների մեջ: Այս փաստը նրանց հնարավորություն է տվել աշխատանքի շուկայում վարել կամայական քաղաքականություն, թելադրել միայն սեփական պայմանները, որն ի վերջո մի կողմից հանգեցրել է կապիտալի գերկենտրոնացման, իսկ մյուս կողմից՝ աշխատուժի զանգվածային արտահոսքի: Արդի ժամանակաշրջանում երկրի միգրացիոն կառավարման համակարգը կանգնել է բավական բարդ խնդրի առջև, քանի որ ստիպված է ընդունել ոլորտի պայթյունավտանգ իրավիճակը: Այդ իրավիճակը պատճառահետևանքային կապերի մեջ է հասարակության բնականոն զարգացումն արգելակող այնպիսի երևույթների և գործընթացների հետ, ինչպիսիք են լայնամասշտաբ գործազրկությունն ու աղքատությունը, ազգաբնակչության արտագաղթն ու ծերացումը, սոցիալապես խոցելի խավերի մեկուսացվածության աճը, բարձր աստիճանի հասնող սոցիալական անարդարությունն ու եկամուտների բևեռացումը:

ՀՀ միգրացիոն կառավարման համակարգի առջև ծառացած ներկայիս խնդիրները լուծելու համար պետք է հաշվի առնել ոչ միայն ներպետական, այլև համաշխարհային միտումները:[13] Մասնավորապես, 21-րդ դարն առանձնանում է ինտենսիվ համաշխարհայնացման տեմպերով, որը ենթադրում է նախևառաջ մարդկանց ազատ տեղաշարժի իրավունք, երբ մի կողմից վերանում են կամ խորհրդանշական են դառնում պետությունների միջև սահմանները, ամեն կերպ խրախուսվում է մարդկանց ազատ տեղաշարժը, մյուս կողմից էլ պետությունները, վերպետական միավորումները մշակում են քաղաքականություններ, որոնք միտված են մուտքի արտոնագրի ռեժիմի դյուրացմանը կամ ընդհանրապես վերացմանը: Այդ պայմաններում բազմաթիվ զարգացած և զարգացող երկրներ առնչվում են իրենց բնակչության ներքին միգրացիայի և արտագաղթի ռիսկերի հետ, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով, իսկ վերջիններս էլ չեն սահմանափակվում միայն սոցիալական բնույթի խնդիրներով:[14] Ուստի, չկարգավորվող միգրացիոն գործընթացներն անդառնալիորեն կարող են խաթարել պետության բնականոն զարգացման գործընթացը՝ ուղղակիորեն հարվածելով վերջինիս անտանգության շահերին: [15]

Միգրացիոն հիմնահարցերը քննարկելիս՝ հայաստանյան գիտավերլուծական շրջանակները հիմնականում կանգ են առնում արտա-

[11] **Massey, D.S.,** "International Migration at the Dawn of the Twnety-First Century: The Role of the State", Population and Development Review, Vol.25, No.2, 1999, pp. 303-322.

[12] Տե՛ս նույն տեղը:

[13] Տե՛ս «Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն»: Եր., ԱՄԿ, 2009, ***Aleksanyan A.***, Labor Migration of Armenians into Russia: Problems and Prospects, // Журнал «Мир России», 2015, Т. 24, № 2, с.105-128, ***Թադևոսյան Ջ.*** և ուրիշներ, Արտագնա աշխատանքային միգրացիա. Գնահատականներ և մտորումներ: Եր., 2014, ***Թորոսյան Գ.***, Վերաինտեգրացիա: Հին երևույթ, նոր մոտեցումներ: Եր., 2014, ***Գալստյան Մ.,*** Միգրացիան և մշակութային փոխակերպումները, // Լրաբեր Հասարակական Գիտությունների, 2013, № 2, էջ 184-193 և ուրիշներ:

[14] **Massey, D.S., Arango, J., Hugo, G., Kouaouci, A., Pellegrino A. & Taylor, J., E**., "An Evaluation of International Migration Theory: The North American Case", Population and Development Review, Vol. 20, No.4, 1994, pp. 699-751.

[15] **Buzan, B., Wæver, O., Wilde de J**. "Security: a new framework for analysis", London, 1998, pp. 21-49.

գաղթի խնդրի վրա: Եվ դա հասկանալի է, քանի որ այն հանդիսանում է ազգային անվտանգության լրջագույն մարտահրավերներից: Սակայն, տարածաշրջանային և համաշխարհային միգրացիոն գործընթացներին հավուր պատշաճի դիմագրավելու համար անհրաժեշտ է նաև հնարավոր ներգաղթը կարգավորող ինստիտուցիոնալ կարողություններ և օրենսդրական պրակտիկա ունենալ: Մասնավորապես, թեև Հայաստանում ապաստանի համար դիմումները ներկայումս բավական սակավաթիվ են, այդուամենայնիվ զանգվածային ներհոսքի դեպքում կարևոր է բոլոր հայցողների արագ գրանցումը, նրանց տվյալների պատշաճ վերամշակումը և դրանց իսկության ստուգումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայկական սփյուռքը տարածված է աշխարհով մեկ, այդ թվում և աշխարհաքաղաքական առումով անկայուն տարածաշրջաններում: Ոչ վաղ անցյալում Սիրիայում ծագած ճգնաժամի հետևանքով Հայաստան ժամանող սիրիահայերի հոսքը ցույց տվեց, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության ենթակայությամբ գործող "Հատուկ կացարան" ՊՈԱԿ-ը, որտեղ բնակվում են ապաստան հայցողները մինչև իրենց դիմումի վերջնական պատասխան ստանալը, բավարար հնարավորություններ չունի: Չնայած "Հատուկ կացարան" ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ[16] սահմանված չէ, թե քանի ապաստան հայցող կարող է միաժամանակ բնակվել այդտեղ, այնուամենայնիվ, կարող ենք պնդել, որ կառավարության կողմից վերջինիս հատկացված շենքը[17] կարող է միաժամանակ ընդունել առավելագույնը 40-45 մարդու: Միանգամայն անհասկանալի է, թե ինչպես է վերը նշված խիստ սահմանափակ կարողություններով հաստատությունը դիմագրավելու օրինակ զանգվածային ներգաղթին: Արդյո՞ք ժամանակը չէ ունենալ միջազգային չափանիշներին համապատասխանող հաստատություն: Ավելորդ չի լինի ընդգծել նաև, որ Հայաստանում ապաստան հայցողների համար որպես ժամանակավոր կացարան գործում է առայժմ միայն վերը նշված ՊՈԱԿ-ը, մինչդեռ, համեմատության համար նշենք, որ օրինակ Գերմանիայում այդպիսի կենտրոնների թիվը 274 է[18], Ֆրանսիայում՝ 303:[19]

Էլ ավելի ուշագրավ է հաջորդ հանգամանքը: Հայաստանում չկան ապաստան հայցողների համար հայերեն լեզվի ուսուցման կենտրոններ: Այս պայմաններում հարց է առաջանում. ինչպե՞ս ինտեգրել հասարակության լայն շերտերի հետ օրինակ Սիրիայից կամ Ուկրիանայից Հայաստան տեղափոխված ազգությամբ հայ, բայց հայերեն լեզվին չտիրապետող քաղաքացիներին: Այլ կերպ ասած՝ հանրապետությունում բացակայում են կամ թույլ են վերադարձած միգրանտներին հասարակության հետ ինտեգրման մեխանիզմները:

Հայաստանում գործում է միգրացիայի կառավարման ապակենտրոնացված համակարգ: Մասնավորապես՝ միգրացիոն հարցերը այս կամ այն չափով կանոնակարգվում են պետական մի շարք մարմինների, այդ թվում՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության, ՀՀ ազգային անվտանգության խորհուրդի, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից: Այս մարմիններից և ոչ մեկը ոլորտում առաջնային պատասխանատու գործադիր լիազորություններով օժտված չէ, և մեր կարծիքով դա է նաև պատճառը, որ Հայաստանում միգրացիոն գործընթացները պետականորեն ամենևին չեն կարգավորվում կամ շատ թույլ են կարգավորվում: Տագնապահարույց է այն, որ հանրապետության առկա բնակչության էմիգրացիոն ներուժը ոչ

[16] Տե՛ս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության "Հատուկ կացարան" պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն, http://www.smsmta.am/upload/Hatuk-kacaran1.pdf

[17] 2003թ. ի վեր կառավարության կողմից "Հատուկ կացարան" ՊՈԱԿ-ին հատկացված շենքն ունի ընդամենը 310 քառ. մետր տարածք: Տե՛ս ՀՀ կառավարության որոշում, 3 ապրիլի, 2003թ. N 407-Ն:

[18] Տե՛ս Գերմանիայի միգրացիայի և փախստականների դաշնային գրասենյակի տվյալները http://www.bamf.de/EN/Fluechtlingsschutz/Ankunftszentren/ankunftszentren-node.html

[19] Տե՛ս Ապաստանի տեղեկատվության եվրոպական շտեմարանի պաշտոնական վիճակագրությունը http://www.asylumineurope.org/reports/country/france/reception-conditions/housing/types-accommodation

միայն սպառված չէ, այլ, ամենայն հավանականությամբ, ունի աճի միտում: Այս համատեքստում ավելի արդյունավետ կլիներ կառավարության կազմում ունենալ գերատեսչական իրավասություններով օժտված մեկ միասնական պետական լիազոր մարմին, որը պատասխանատու կլիներ ոլորտի համար և կհամակարգեր երկրի ընդհանուր միգրացիոն քաղաքականությունը: Դրան զուգահեռ պետք է նաև քաղաքականության կողմնորոշիչների հստակեցում և դրանց հետևողական արտացոլում ընդունվող օրենքների, ծրագրերի, որոշումների մեջ: Դրա համար միգրացիոն քաղաքականությունը պետք է դուրս բերվի պասիվ տիրույթից՝ անցում կատարելով ակտիվ գործողությունների:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ անկախությունից ի վեր Հայաստանում ձևավորված միգրացիոն կառավարման համակարգն իր օրենսդրական դաշտով և ինստիտուցիոնալ կարողություններով առայժմ գտնվում է միգրացիոն գործընթացներին առնչվող երևույթների սոսկ գնահատողի կարգավիճակում: Միգրացիայի բացասական հետևանքները վերացնելու, Հայաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակը բարելավելու և միգրացիոն գործընթացներն արդյունավետ կառավարելու համար անհրաժեշտ են ավելի ակտիվ և նախաձեռնողական գործողություններ՝ ներդնելով միգրացիայի պետական կարգավորման և վերահսկման գործուն մեխանիզմ: Այդ գործողությունների համալիրում կարելի է օրինակ որոշ մասնագիտությունների (քաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, տնտեսագիտություն, կառավարում, իրավագիտություն, հոգեբանություն, լրագրություն և այլն) կրթական ծրագրերում ներառել «ժողովրդագրություն» առարկան: Դա հնարավորություն կտա պատրաստել ոլորտի մասին հստակ պատկերացում և գիտելիքներ ունեցող մասնագետների:

Գրականության ցանկ

1. «Միգրացիայի ռիսկերը և մարդկային կապիտալի վերարտադրությունը», **Մարզպանյան Հ., Մարկոսյան Ռ., Խաչատրյան Ն.,** Երևան, 2016 թ.
2. “Theories of migration: Conceptual review and empirical testing in the context of the EU East-West flows”, **Lucia Kurekova,** London, 2011
3. **Massey, D.S.,** “International Migration at the Dawn of the Twnety-First Century: The Role of the State”, Population and Development Review, Vol.25, No.2, 1999
4. «Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն»: Եր., ԱՄԿ, 2009, ***Aleksanyan A.***, Labor Migration of Armenians into Russia: Problems and Prospects, // Журнал «Мир России», 2015, Т. 24, № 2, с.105-128, ***Թադևոսյան Զ.*** և ուրիշներ, Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ: Եր., 2014, ***Թորոսյան Գ.***, Վերաինտեգրացիա: Հին երևույթ, նոր մոտեցումներ: Եր., 2014, ***Գալստյան Մ.,*** Միգրացիան և մշակութային փոխակերպումները, // Լրաբեր Հասարակական Գիտությունների, 2013, № 2, էջ 184-193 և ուրիշներ
5. **Massey, D.S., Arango, J., Hugo, G., Kouaouci, A., Pellegrino A. & Taylor, J., E**., “An Evaluation of International Migration Theory: The North American Case”, Population and Development Review, Vol. 20, No.4, 1994
6. **Buzan, B., Wæver, O., Wilde de J**. ”Security: a new framework for analysis”, London, 1998
7. **Asad Rehman, Shamas Ul deen** & **Sadaf Farooq**, Social Capital and Human Resources Development: A Knowledge, Attitudes and Practices (KAP) Analysis, International Journal of Innovation and Scientific Research, 2014, Vol 12, No 1
8. **Michela Ceccorulli**, Migration as a security threat: internal and external dynamics in the European Union, GARNET Working Paper No: 65/09, 2009
9. **David Held, Anthony McGrew, David Goldblatt** & **Jonathon Perraton,** Global Transformations: Politics, Economics and Culture, Standford University Press, 1999

Регион и мир, 2018, № 3

Հայրենադարձության խնդիրը Հայաստանի արդի քաղաքական դիսկուրսում. սիրիահայերի փորձը

Գրիգորյան Ն.Ն.
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության տեսության և պատմության ամբիոն /Հայաստան, Երևան/
narekkgn@gmail.com

Վճռորոշ բառեր՝ հայրենադարձություն, ներգաղթ, արտագաղթ, միգրացիա, փախստական, պետական քաղաքականություն, սիրիահայեր

Вопрос репатриации в нынешнем политическом дискурсе Армении:
Опыт сирийских армян

Григорян Н.Н.
Ереванский государственный университет,
кафедра теории и истории политологии факультета международный отношений
(Армения, Ереван)
narekkgn@gmail.com

Резюме: Массовый поток сирийских армян в Армению начался в 2012 году. Многие беженцы ожидали, что ситуация в Сирии будет быстро урегулирована, что и позволит им вернуться обратно. Но надежды на стабилизацию ситуации в Сирии вскоре исчезли, и большинство сирийских армян решили оставаться безопасным и стабильным беженцем в своей родной Армении. Для этнических армян Сирии, Армения считалась исторической родиной и христианской страной. Тем не менее возникли серьезные проблемы. Помимо социально-экономических трудностей, в Армении также не было законодательства, регулирующего процесс репатриации. Это также стало причиной того, что многие сирийско-армянские семьи не адаптировавщись к новой жизни в Армении, снова покинули страну. Юридический пробел в области репатриации нуждается в немедленном решении. Армения нуждается в сбалансированной миграционной политике и программе репатриации, которая будет подготовлена к будущим аналогичным ситуациям. В этом случае для иммигрантов будет проще и удобнее адаптироваться.
Ключевые слова: репатриация, иммиграция, эмиграция, миграция, беженец, государственная политика, Сирийские армяне.

Repatriation problem in Armenia's current political discourse:
Experience of Syrian Armenians

Grigoryan N.N.
Yerevan State University,
Department of Theory and History of Political Science of Faculty of International Relations
(Armenia, Yerevan)
narekkgn@gmail.com

Abstract: The mass inflow of Syrian Armenians into Armenia started in 2012. Many refugees expected that the situation would be resolved quickly, allowing them to return to their home country. However, after hopes of the situation improving in Syria were dashed, many ethnic Armenians decided to seek secure and stable refuge in their native Armenia. For Syria's ethnic Armenians, Armenia represents a safe choice as an ancient homeland and predominantly Christian country. Nevertheless, some big problems raised. Besides the existing socio-economic difficulties in the country, Armenia faced absence of legislative procedures due to the repatriation. And that is why there have been many families that left the country again due to hardship establishing a new life in Armenia. The absence of repatriation legislation in Armenia needs an urgent response. For the upcoming situations Armenia needs a balanced migration policies and a repatriation program which make it easier and possible for the newcomers to settle.
Keywords: repatriation, immigration, emigration, migration, refugee, state policy, Syrian Armenians.

Ազգային շահերին համահունչ միգրացիոն միտումներ ունենալու նպատակով աշխարհի մի շարք երկրներ (Ռուսաստան, Իսրայել, Հունաստան, Իռլանդիա) այսօր վարում են ներգաղթի կամ հայրենադարձության ակտիվ քաղաքականություն, այսինքն՝ պետական քաղաքականությամբ փորձում են այնպիսի նպաստավոր պայմաններ ստեղծել, որ մշտական բնակության նպատակով մարդիկ հայրենադարձվեն կամ տեղափոխվեն իրենց երկիր: Առհասարակ, ժողովրդագրական իրավիճակի բարելավման հայտնի գործիքներից են արտագաղթի ծավալների կրճատումը, ծնելիության խթանումը և ներգաղթը՝ հայրենադարձությունը: Եթե առաջին երկու բաղադրիչները այսօր գտնվում են հայաստանյան հասարակական-քաղաքական քննարկումների ոլորտում, ապա նույնը չենք կարող պնդել վերջինի մասին:

Հարկ է նշել, որ դարեր շարունակ գաղթի և բռնի տեղահանության ենթարկված հայ ժողովրդի պատմության մեջ մեծ կարևորություն ունեցող այս երևույթը ամբողջապես ուսումնասիրված չէ: Չնայած անկախության գրեթե երեսուն տարիների ընթացքում Հայաստանն առավելապես բախվել է հակադարձ գործընթացին, այն է՝ արտագաղթին, այնուամենայնիվ, հայրենադարձությունը կամ դրա հնարավորությունը, որպես միգրացիոն քաղաքականության ժամանակակից գործիքներից մեկը, ներկայիս հասարակական-քաղաքական դիսկուրսում համակողմանի ուսումնասիրության կարիք ունի: Սույն հետազոտությունը հենց այդպիսի նպատակ է հետապնդում:

Թեև հայկական սփյուռքը դարերի պատմություն ունի, և կազմակերպված հայկական համայնքներ վաղուց են ձևավորվել այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Եվրոպան, Մերձավոր ու Միջին Արևելքը, Հյուսիսային ու Հարավային Ամերիկան, այնուամենայնիվ, հայրենադարձությունը հայ քաղաքական մտքում համեմատաբար նոր գաղափար է: Հայրենի գիտական գրականության մեջ հայրենադարձությանն անդրադարձել են Հ. Մարությանը[1], Ս.Ավետիսյանը[2], Ա.Գևորգյանը,[3] Մ.Բազարյանը[4] և ուրիշներ: Նշված բոլոր հեղինակների մոտ այս եզրույթի սահմանումը սերտորեն առնչվում է արտագաղթած կամ սփյուռքում հաստատված հայ էթնոսի հավաքական ինքնության գիտակցման հետ: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով տվյալ ձևակերպման հետ՝ կարող ենք նշել, որ հայկական իրականության մեջ հայրենադարձությունն այլ պետություններում բնակվող հայկական ծագումով անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատելու գործընթացն է: «Հայրենադարձություն» եզրույթն առհասարակ առաջ է եկել լատիներեն ***repatriātus*** [*re+patri(a)+ātus)= վերադարձ հարենիք կամ հարազատ երկիր]* բառից և բնութագրում է երրորդ երկրներից մարդկանց տեղաշարժը իրենց ծագման երկիր: [5]

Հայաստանից դուրս հաստատված էթնիկ հայերի (տարբեր գնահատականներով Սփյուռքում ապրում է մոտ 7 միլիոն հայ) և Հայաստանի կապը հիմնականում պայմանավորված է անցյալի հիշողություններով, որտեղ նրանք իրենց իրական հայրենիք համարում են Հայաստանը: Այս առումով հատկանշական է սփյուռքագետ Վիլյամ Սաֆրանի սահմանումը, ըստ որի՝ աշխարհի որևէ Սփյուռքում հաստատված մարդիկ հավաքական հիշողություն ունեն իրենց իսկական հայրենիքի, դրա գտնվելու ֆիզիկական վայրի և ձեռքբերումների մասին: Նրանք նախնիների հայրենիքին վերաբերում են որպես իրենց իսկական, իդեալական հայրենիքի: Համոզված են, որ իրենք կամ իրենց զավակները պետք է վերադառնան, որի հետևանքով նրանք շարունակում են անձնապես կամ զգացականորեն կապված մնալ հայրենիքին: Այդ հանգամանքը նրանց մեջ ձևավորում է համերաշխություն և էթնոհամայնքային գիտակցություն: Հայրենիքից դուրս գտնվող հավաքական ուժերը նվիրաբերվում են հայրենիքի պահպանմանը

[1] **Մարության Հ**, «Հրեական հայրենադարձության փորձից. Ալիյա. 1», «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, 2007, N13

[2] **Ավետիսյան Ս**., «Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ», Երևան, 2015

[3] **Գևորգյան Ա**, «Էջեր հայրենադարձության պատմությունից», Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1969

[4] **Բազարյան Մ**, «Նամակներ սովետական դրախտից», Երևան, 1989

[5] Տե՛ս Օքսֆորդի էլեկտրոնային բառարանի բացատրությունը https://en.oxforddictionaries.com /definition/ repatriation

կամ վերականգնմանը, անվտանգությանն ու բարեկեցությանը: Նրանք հավատացած են, որ անհնար է ամբողջությամբ ինտեգրվել ընդունող հասարակությունում, որի հետևանքով նրանք օտարված են զգում:[6] Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այս ձևակերպումը ավելի շատ համապատասխանում է Մեծ Եղեռնի պատճառով բռնի տեղահանված և աշխարհի տարբեր անկյուններում հաստատված հայերին և նրանց սերունդներին, քան ասենք 1991թ. անկախությունից հետո Հայաստանից արտագաղթած հայերին:

Հայաստանյան արդի քաղաքական դիսկուրսում հաճախ փորձ է արվում զուգահեռներ տանել Հայաստանի և Իսրայելի միջև՝ հիմնականում նկատի ունենալով հայ և հրեա ժողովուրդների պատմական նմանությունը: Ըստ որում, համեմատության այդ փորձը սովորաբար դրական է ընդունում հասարակական և պետական նշանակության այս կամ այն հարցի լուծման իսրայելական բանաձևը: Մի կողմ թողնելով Իսրայել պետության ստեղծման և զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները՝ այս հետազոտության ակադեմիական հետաքրքրությունների շրջանակներում անհրաժեշտ ենք համարում փոքրիկ անդադարձ կատարել Իսրայելի՝ հայրենադարձության և ներգաղթի կազմակերպման տասնամյակների հաջողված բանաձևին: Այսպես, Իսրայելում «Հայրենադարձություն» կամ «Ներգաղթ» եզրույթներին որպես հոմանիշ հրեաները օգտագործում են ***Aliyah*** եզրը, որը թարգմանաբար նշանակում է «Վերելք» կամ «Վեր բարձրանալ» և մատնանշում է հրեաների ներգաղթը Պաղեստին և Իսրայել:[7] Ժամանակի հետ այն դարձել է հրեական ինքնության յուրահատուկ կոնցեպցիա և սիոնիզմի տեսության մեջ հիմնարար տեղ է զբաղեցնում:[8] ***Aliyah***-ը ունի ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր իմաստ:[9] Հրեաները հիմնականում կրթված են այն ոգով, որ այս «Վերելքը» վերադարձ է դեպի Ավետյաց երկիր՝ որպես Աստծո աստվածաշնչյան խոստման իրականացում: Էթնիկ ու հոգևոր ինքնության այս գիտակցման շնորհիվ անկախություն ձեռք բերելուց հետո Իսրայելում կազմակերպվեց հայրենադարձության մեծ ալիք: Այդ ներգաղթի և բնական աճի շնորհիվ 1948թ. 806.000-ի փոխարեն 2017թ. Իսրայելն ուներ 8.630.000 բնակչություն, այսինքն անկախության մոտ յոթ տասնամյակների ընթացքում Իսրայելի բնակչությունն աճել է ավելի քան 10 անգամ:[10] Սա, մեր համոզմամբ, Հայաստանի համար տպավորիչ օրինակ է:

Պատմական այս համեմատությամբ սույն ուսումնասիրությունը ցանկանում է ցույց տալ, որ 1991թ. ի վեր Հայաստանում պետության կողմից հայրենադարձություն կազմակերպելու իրական և արդյունավետ քայլեր չեն ձեռնարկվել: Չդադարող արտագաղթի ներկայիս պայմաններում որոշ հեղինակներ հայրենադարձության մասին խոսելն անգամ ժամանակավրեպ են համարում:[11] Այս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ Հայաստանը չունի այնպիսի կարողություններ, որոնք հնարավորություն կտան միգրացիոն բացասական ցուցանիշները մեղմելու նպատակով կազմակերպել հայրենադարձության խոշոր ծրագրեր: Այստեղ ճշմարտության հատիկն այն է, որ 90-ականներից մինչև մեր օրերը տեղի ունեցած հայրենադարձության մի քանի ալիքները տարերային են եղել՝ պետության կողմից չծրագրավորված: Թե՛ 1989-1991թթ. աղրբեջանահայերի, թե՛ 2003թ. իրաքահայերի և թե՛ 2011թ. սկսած սիրիահայերի ներհոսքը պետության կողմից կազմակերպված և ծրագրավորված չեն եղել: Ավելի՛ն, ներհոսքի այս օրինակների հետևանքով պետությունը բախվել է մի շարք սոցիալական խնդիրների, որոնք հետագայում Հայաստանը վերստին լքելու պատճառ են հանդիսացել ներգաղթածների մի զգալի մասի համար: Չնայած այս իրողությանը՝ կարելի է և պետք է պնդել, որ ծրագրավորված և գործուն հայրենադարձութ-

[6] **Safran W**. Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return. Diaspora, (1991), pp 83-84.

[7] Առավել մանրամասն տե՛ս «Իսրայելի համար հրեական գործակալության» սահմանումը, http://www.jewishagency.org/aliyah /

[8] **Brian Amkraut,** Between Home and Homeland: Youth Aliyah from Nazy Germany, The University of Alabama Press, 2006

[9] **Katy Long**, «The point of no return: Refugees, Right and Repatriation», Oxford University Press, 2013

[10] Տե՛ս հրեական էլեկտրոնային գրադարանի վիճակագրությունը http://www.jewishvirtuallibrary.org/population-of-israel-1948-present

[11] **Հովյան Վ.** «Հայրենադարձության խնդիրն արդի փուլում» http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=15058

յուն կազմակերպելու համար անհրաժեշտ է նախևառաջ համապատասխան օրենսդրական դաշտ և ներպետական ընթացակարգեր ապահովել: Դրանք հնարավորություն կտան «*միգրացիա և զարգացում*» ձևակերպման շրջանակներում լուծել ոչ միայն ժողովրդագրական հիմնախնդիրներ, այլև նորեկների մասնագիտական հմտությունները, գիտելիքները և ֆինանսական կարողությունները ուղղել երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Մինչդեռ ներկայումս Հայաստանում հայրենադարձությանը նպաստող միջավայրի ստեղծման խնդիր կա: Ավելի՛ն, արդի հասարակական-քաղաքական դիսկուրսում հայրենադարձության շուրջ ծավալվող քննարկումները, վերլուծություններն ու առաջարկները խիստ սակավաթիվ են: Անգամ 6-րդ գումարման Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների նախընտրական ծրագրերի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ այն քաղաքական այդ ուժերի կողմից օրակարգային հարց չի հանդիսանում: Այսպես, հայրենադարձությանն իրենց նախընտրական ծրագրերում անդրադարձել են միայն «Ելք» կուսակցությունների դաշինքն ու «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը: «Ելք»-ի ծրագրում նշված է, որ Հայաստանի բնակչության թիվը հնարավորինս կարճ ժամկետում կրկնապատկելու միջոցը մեծ հայրենադարձություն կազմակերպելն է, և անհրաժեշտ է Հայաստանը դարձնել բոլոր հայերի երկիր, այնպես, որ աշխարհի ցանկացած կետում գտնվող հայ իրեն նույնականացնի հայկական պետականության հետ և այն դիտարկի եթե ոչ իր, առնվազն իր սերունդների պոտենցիալ բնակավայր:[12] «Ելք»-ը այսքանով սահմանափակվում է հայրենադարձությանն իր անդրադարձի մեջ, և ծրագրում նկարագրված չէ գործողությունների այն համալիրը, որը կարող է ապահովել էթնիկ հայերի ներհոսքը դեպի Հայաստան: Գրեթե նույն պատկերն է նաև «Հայ հեղափոխական դաշնակցության» ծրագրում, որտեղ առաջարկվում է վարել ակտիվ հայրենադարձման քաղաքականություն և նպաստել, որ հայրենիքից հեռացած հայերը վերադառնան իրենց երկիր:[13] Այստեղ ևս պարզ չէ, թե ինչպես է պատրաստվում «Հայ հեղափոխական դաշնակցություն»-ը քաղաքական իշխանության անհրաժեշտ ռեսուրսներ տնօրինելու դեպքում կազմակերպել և վարել արդյունավետ հայրենադարձման քաղաքականություն: 2017թ. խորհրդարանական ընտրություններից հետո ՀՀ ԱԺ-ում հայտնված մյուս երկու ուժերը՝ «Ծառուկյան դաշինք»-ը և «Հայաստանի հանրապետական կուսակցություն»-ը առհասարակ իրենց ծրագրերում որևէ անդրադարձ չեն կատարել հայրենադարձությանը:

Վերևում նկարագրվածը ցույց է տալիս, որ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր քաղաքական էլիտան հայրենադարձության խնդիրը հավուր պատշաճի չի կարևորում կամ հնարավոր է անգամ՝ չի պատկերացնում խնդրի լուծման ուղիները: Ասվածի վառ վկայությունն է 2011թ. ի վեր Սիրիայում բռնկված պատերազմի հետևանքով սիրիահայերի զանգվածային ներհոսքով պայմանավորված հիմնահարցերի գոյացումը, որոնք հիմնականում նախորդող ժամանակահատվածում համանման խնդիրներին իրավիճակային լուծումներ տալու քաղաքականության հետևանք են: Մասնավորապես, Իրաքի 2003թ. պատերազմի օրերին Հայաստանում լայնորեն բարձրաձայնվեցին սփյուռքահայության առջև ծառացած վտանգներն ու մարտահրավերները, հայրենադարձության ծրագրերի անհրաժեշտությունը, և որոշակի քննարկումներ ծավալվեցին, սակայն զարգացումներ չեղան, ուստի քննարկումներն այդպես էլ պետական մասշտաբների ծրագրի ու քաղաքականության չվերաճեցին: Խնդիրը հետաձգվեց այնքան, մինչև հաջորդ՝ Սիրիայի ճգնաժամը կրկին արդիական դարձրեց այն: Պետական կարգավորումների բացակայության պատճառով Սիրիական պատերազմի հետևանքով տեղահանված հայերին օգնություն ցուցաբերելու նպատակով Հայաստանում և Սփյուռքում ստեղծվեցին հասարակական տարբեր նախաձեռնություններ: Դրանք ստիպված էին իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնք սովորաբար վերապահված են պետական ինստիտուտնե-

[12] Տե՛ս «ԵԼՔ դաշինք»-ի՝ ՀՀ ԱԺ 2017թ. ընտրությունների նախընտրական ծրագիր, http://www.parliament.am /library/AJ2017/cragrer/elq.pdf

[13] Տե՛ս «Հայ հեղափոխական դաշնակցության»՝ ՀՀ ԱԺ 2017թ. ընտրությունների նախընտրական ծրագիր, http://www.arfd.info/hy/?p=34346

րին: Մասնավորապես, այդպիսի նախաձեռնություններից էր հայտնի պետական-հասարակական գործիչ Վահան Հովհաննիսյանի կողմից կոորդինացվող և հատուկ սիրիահայերին աջակցելու համար ստեղծված «Օգնի՛ր եղբորդ» բարեգործական հիմնադրամը, որը 2012թ. հոկտեմբեր ամսից սկսեց հումանիտար օգնություն ուղարկել Սիրիա:[14] Հետագայում այն սկսեց մարդասիրական օգնություն ցուցաբերել նաև Հայաստան տեղափոխված սիրիահայերին:

Հայրենադարձությունը խթանող պետական ծրագրեր մշակելու, ժողովրդագրական ցուցանիշների բարելավման, համազգային խնդիրների լուծման գործում սփյուռքահայերի մասնակցությունն ապահովելու և այլ նպատակներով 2008թ. ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը, որը 2011թ. մշակեց «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:[15] Վերջինս սահմանում էր հայրենադարձության հետ կապված պետական քաղաքականության սկզբունքները, հայրենադարձության կազմակերպման և իրականացման կարգն ու պայմանները, հայրենադարձության կազմակերպաիրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, ինչպես նաև հայրենադարձի ինտեգրման և արտոնությունների տրամադրման կարգերը: Օրենքի նախագիծը սահմանում էր նաև «Հայրենադարձություն» և «Հայրենադարձ» հասկացությունները՝ նպատակ ունենալով կարգավորել հայրենադարձության հետ կապված իրավահարաբերությունները: Միևնույն ժամանակ սույն նախագծով հստակեցվում էր նաև հայրենադարձության համար դիմումի ներկայացման և ծագումով հայ լինելու որոշման կարգը, հայրենադարձի իրավունքներն ու կարգավիճակը, նրան տրամադրվող արտոնությունների շրջանակը և այլն: Նշենք, որ օրենքի կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ էին պետական բյուջեից որոշակի ֆինանսական հատկացումներ (Հոդված 12), և ըստ ամենայնի դրանով է նաև պայմանավորված, որ «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը կառավարության կողմից հաստատվելուց հետո առ այսօր չի քննարկվել Ազգային ժողովում և դեռևս չունի օրենքի կարգավիճակ:[16]

Հայրենադարձության ոլորտում իրավաքաղաքական անորոշությունը փոքր-ինչ մեղմեց 2010թ. կառավարության ընդունած «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման մասին» հայեցակարգը[17] ***(այսուհետ՝ Հայեցակարգ), որի հիմքում սակայն դրված*** է աշխարհասփյուռ հայության զանգվածային հայրենադարձության կազմակերպումը և այդ գործընթացի կանոնակարգումը: Այն վերաբերում է այն հայերին, որոնք կամավոր ցանկություն կհայտնեն բնակություն հաստատել Հայաստանի Հանրապետությունում: Հայրենադարձության գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով Հայեցակարգով նախատեսվում է Սփյուռքում և Հայաստանում անցկացնել նախապատրաստական աշխատանքներ, ստեղծել հայրենադարձությունը կազմակերպող, իրականացնող և այդ գործընթացին օժանդակող մարմիններ (Հայրենադարձության հարցերով գործակալություն, Հայրենադարձության հիմնադրամ և այլն), ինչպես նաև աջակցել հայրենադարձների ինտեգրման հարցերով հասարակական կազմակերպությունների, աշխատանքային խմբերի և ինտեգրման կենտրոնների կազմավորմանը: Նախատեսվում է նաև Սփյուռքում անցկացնել հայրենադարձությանը նպաստող կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, իսկ Հայաստան տեղափոխված հայրենադարձներին՝ հասարակությանն արագ ինտեգրվելու մեխանիզմներ:[18] Նշված նպատակներին հասնելու համար հետագայում կառավարության կողմից գործողության ծրագրեր կամ նորմատիվ-իրավական այլ ակտեր չընդունվեցին:

2011թ. Մերձավոր Արևելքում ծավալվող իրադարձությունների հետևանքով Եվրոպայում ծագած միգրացիոն ճգնաժամը համարվում է ամենախոշորը Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր: Միջազգային տարբեր գնահատականներով Սիրիայում 2011թ. մարտի 11-ին սկսված հակամարտութ-

[14] Տե՛ս մամուլի հրապարակումները https://armenpress.am/arm/news/697176/help-your-brother-initiative-will-also-help-the-syrian-armenians-settled-in-armenia.html ,

[15] Տե՛ս «Հայրենադարձության մասին ՀՀ օրենքի նախագիծ», http://www.mindiaspora.am/am/Projects

[16] Տե՛ս ՀՀ ԱԺ օրենքների նախագծերի գրադարանի տվյալները, http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5020&Reading=0

[17] Տե՛ս ՀՀ կառավարության N48 որոշման հավելված, 9 դեկտեմբերի, 2010թ

[18] Տե՛ս նույն տեղը

յան հետևանքով մահացել է մոտ կես միլիոն մարդ,[19] ավելի քան 11 միլիոն մարդ լքել է իր տունը, որից 5,5 միլիոնը դարձել է փախստական, իսկ 6,3 միլիոնը՝ ներքին տեղահանված:[20] Մինչև 2011թ. Սիրիայում բնակվում էր ավելի քան 100 հազար հայ, հիմնականում՝ Հալեպում, Դամասկոսում, Դեյր Զորում, Հասաքեում, Ռակկայում, Հոմսում, ինչպես նաև Լաթաքիայում, Քեսաբում և այլ շրջաններում:[21] Նրանց մեծ մասը լքել է Սիրիան, իսկ հեռացածների մի մասը հաստատվել է Հայաստանում:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում այժմ հանրային քննարկման դրված «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թթ ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի համաձայն (այսուհետ Ռազմավարության նախագիծ)՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունում հակամարտության սկսվելուց ի վեր ավելի քան 22.000 մարդ, առավելապես ազգությամբ հայեր, ինչպես նաև արաբներ, քրդեր, ասորիներ տեղահանվել և պաշտպանություն են գտել Հայաստանում:[22] Ռազմավարության նախագծի գլխավոր նպատակը Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր Հայաստան տեղափոխված անձանց հասարակական կյանքին ինտեգրման գործընթացի արագացումն է: Այս փաստաթուղթը փոքր-ինչ ուշացած, բայց անհրաժեշտ իրավական ակտ է: Ուշացած է, որովհետև սիրիահայերի մի ստվար զանգված, Հայաստանում առերեսվելով վարչարարության, իրավական փոխօգնության, ինքնուրույն տնտեսական գործունեությամբ զբաղվելու հետ կապված և այլ հիմնախնդիրների, ստիպված կրկին լքել է Հայաստանը: Հայաստանում բնակվելու սիրիահայերի հիմնական շարժառիթը ազգությամբ հայ լինելն ու սեփական երկրում հաստատվելն է: Այդուհանդերձ, սիրիահայերը հեռանում են Հայաստանից, քանի որ դժվարություններ կան աշխատանք, բնակարան ձեռք բերելու և որպես անհատ կայանալու հարցերում:[23] Փաստաթղթի ընդունումն անհրաժեշտ է այս ոլորտում օրենսդրական բացը լրացնելու, նպատակաուղղված պետական քաղաքականություն սահմանելու, սիրիահայերին Հայաստանում ինքնակայանալու հնարավորություններ ընձեռելու և վերջապես նրանց հնարավոր արտահոսքը կասեցնելու տեսանկյունից:

Սիրիահայերի ներգաղթը դեպի հայրենիք միանշանակ չի ընկալվում Հայաստանի ներքին և արտաքին հարթակներում: Եթե ներքին հարթակի հասարակական-քաղաքական քննարկումներում նրանք հիմնականում դիտվում են որպես հայրենադարձներ, և ըստ այդմ սպասելիքներ են ձևավորվում, որ պետությունը պետք է առաջնային դերակատարություն ունենա նրանց ամենատարբեր հարցերում նեցուկ լինելու գործում, ապա արտաքին հարթակում իրավիճակը լիովին այլ է: ԵՄ-ի մի շարք երկրների, ԱՄՆ-ի և աշխարհի այլ ուժային կենտրոնների կողմից նրանք որրակվում են որպես փախստականներ, և մեր կարծիքով շատ տրամաբանական կլիներ սպասել, որ Հայաստանը փորձեր օգտագործել սույն նշանակալի փաստը ԵՄ-ի համար անչափ ցավոտ միգրացիոն ճգնաժամի պատճառ դարձած այս հարցում: Մասնավորապես, փախստականների տեղավորելու ու կարգավիճակ տալու համար կարելի էր ստանալ թե՛նյութական և թե՛ քաղաքական աջակցություն: Ի վերջո, եվրոպական չափանիշներով 22 հազար սիրիացի փախստական ընդունելը (այն էլ՝ փոքր երկրի կողմից) հերոսություն է և

[19] ՄԱԿ-ի Սիրիայի հարցերով հատուկ հանձնակատարի գրասենյակի տվյալներով՝ 2016թ. սկզբին զոհերի թիվը հակամարտության ընթացքում հասել է 400 000-ի http://foreignpolicy.com/2016/04/22/u-n-envoy-revises-syria-death-toll-to-400000/, Քաղաքական հետազոտությունների սիրիական անկախ կենտրոնի տվյալներով՝ 2016թ. փետրվարի դրությամբ սիրիական հակամարտության զոհերի թիվը կազմել է 470 000 մարդ https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/syria

[20] **The UN Refugee Agency**, Global Trends, p.6, http://www.unhcr.org/5943e8a34

[21] Տե՛ս ՍԱՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը, http://www.mindiaspora. Am /res/Hamajoxovner/2017/6/Eluytner/44/Arshak_Poladyan.pdf

[22] Տե՛ս «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թթ ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/679/justification

[23] Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի հայտարարությունը ՀՀ ԱԺ-ում, 11 հունիս, 2015թ. https://www.pastinfo.am/hy/news/2015/11/06/4-000

արժանի է գնահատականի: Դա առավել արդիական է այն պահին, երբ եվրոպական որոշ երկրներ չեն ցանկանում կիսել համաեվրոպական այս աղետը, և որևէ այլ երկրի աջակցություն երախտապարտությամբ է ընդունվում: Հայաստանը գործնականում որևէ քայլ չի ձեռնարկում այս հարցում արևմտյան երկրներից աջակցություն ստանալու նպատակով: Արդյունքում Եվրոպայում քաղաքական որոշումների ընդունման կենտրոնները գրեթե անտեղյակ են, որ փոքր ու համեստ հնարավորություններով Հայաստանը շուրջ 22 հազար փախստական է ընդունել:

Սույն թվականի փետրվարի 23-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացած Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստի ընթացքում ՀՀ ԿԱ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Մ. Բիչախչյանը ընդգծեց, որ 2011թ. ի վեր 19 հազար 506 սիրիահայ ՀՀ քաղաքացիություն է ստացել:[24] Իսկ ***ի՞նչ խնդիրների են բախվում Սիրիայից եկած հայերը Հայաստանում, ինչպե՞ս են նրանք ապրում և ապագայի ի՞նչ տեսլական ունեն:*** Առաջին խնդիրներից, որին բախվեցին սիրիահայերը, աշխատանքի բացակայությունն էր և մասնագիտության անհամապատասխանությունը աշխատանքային շուկային: Գործազրկության պայմաններում նրանցից շատերը դեռևս չունեն աշխատանք: Սիրիահայերի մի մասը սեփական գործ հիմնեց, նրանց մի մասին պետությունը արտոնյալ պայմաններով վարկեր տրամադրեց: Շատերն իրենց արհեստները Սիրիայից տեղափոխեցին Հայաստան: «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Լենա Հալաջյանի կարծիքով սիրիահայերի խնդիրները Հայաստանում նույնն են, ինչ որ ցանկացած փախստականինը՝ այլ երկրներում:[25] Ըստ նրա դեռևս չլուծված խնդիրներ կան Հայաստանում գտնվող սիրիահայերի փաստաթղթերի ճանաչման, պատշաճ առողջապահության կազմակերպման, կրթության, աշխատանք գտնելու, բնակարաններով ապահովելու և հասարակությանն ինտեգրվելու գործում:

***Ընդգծենք, որ սրանք այնպիսի հիմնահարցեր են, որոնք եթե պետության կողմից անհրաժեշտ ուշադրության չարժանանան, ժամանակի ընթացքում կստիպեն Հայաստան տեղափոխած սիրիահայերին այլ երկիր տեղափոխվել: Ուստի, ժամանակի հրամայականն է Հայաստանում ունենանալ հայրենադարձությունը կարգավորող համապատասխան օրենսդրություն. խոսքը հայրենադարձության մասին օրենքի, ռազմավարության, հայեցակարգի և գործողությունների ծրագիր մշակելու մասին է, որտեղ պետք է ամրագրել հայրենադարձության բնագավառում պետական քաղաքականության մոտեցումներն ու սկզբունքները: Կարելի է ընդգծել նաև հայրենադարձության կազմակերպման որոշակի փուլեր, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա կոնկրետ գործողությունների ծրագիր: Օրենսդրական և ինստիտուցիոնալ համապատասխան հենք ունենալու պարագայում հնարավոր կլինի խուսափել տարերային և չհամակարգված գործողություններից: Այդ իսկ պատճառով պետք է արձանագրել, որ վերևում նշված հումանիտար օգնություն ցուցաբերող հասարակական տարբեր նախաձեռնությունների ստեղծումն անհրաժեշտ, բայց ամենևին ոչ բավարար պայման է նմանատիպ իրավիճակները հավուր պատշաճի կառավարելու տեսանկյունից: Մեր կարծիքով, այս ոլորտում օրենսդրական կարգավորումների բացակայությունը պայմանավորված է հիմնախնդրի նկատմամբ Հայաստանի քաղաքական դիսկուրսի անտարբեր վերաբերմունքով: Ակնհայտ է, որ աշխարհի թեժ անկյուններում սփյուռքի մեծ համայքներ ունեցող երկիրը միշտ կարող է բախվել տարերային հայրենադարձության երևույթին և ըստ այդմ իրավական ընթացակարգեր և օրենդրական դաշտ պետք է ունենա անհրաժեշտության դեպքում կիրառելու համար: Մինչդեռ այսօր պ*արզ չէ, թե որն է հայրենադարձության ոլորտում ՀՀ պետական քաղաքականությունը: Պետք է փաստել, որ ստեղծվել է մի վիճակ, երբ հայ ժողովուրդը ժողովրդագրական առումով տանուլ է տալիս իր բոլոր մահմեդական հարևան-

[24] Տե՛ս Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստը, 23 փետրվար, 2018թ., http://www.mindiaspora. am/am/News/5719

[25] Տե՛ս «Մեդիամաքս» լրատվական գործակալության «Սիրիահայերը Հայաստանում. խնդիրներ և ձեռքբերումներ» հոդվածը, http://www.mediamax.am/am/news/special-report/14208/

ներին, մինչդեռ դրանցից երկուսը Հայաստանին թշնամի-հակառակորդ պետություններ են: Ի վերջո, անհրաժեշտ է գիտակցել, որ Հայաստանի շուրջ ծավալվող ներկայիս աշխարահքաղաքական իրողությունների պարագայում հայրենադարձության գործընթացն ազգային ծրագրի էական բաղադրիչներից մեկը պետք է լինի:

Գրականության ցանկ

1. **Մարության Հ.**, «Հրեական հայրենադարձության փորձից. Ayilah 1», Գլոբուս վերլուծական տեղեկագիր, N13, 2007
2. **Ավետիսյան Ս**., «Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ», Երևան, 2015
3. **Գևորգյան Ա.,** «Էջեր հայրենադարձության պատմությունից», Բանբեր Երևանի արխիվների, 1969
4. **Բազարյան Մ.**, «Նամակ սովետական դրախտից», 1989
5. **Հովյան Վ.,** «Հայրենադարձության խնդիրն արդի փուլում», http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=15058
6. «ԵԼՔ» դաշինքի 2017թ. ՀՀ ԱԺ ընտրությունների նախընտրական ծրագիր http://www.parliament.am/library/AJ2017/cragrer/elq.pdf
7. **Խոջաբեկյան Վ.**, «Հայաստանի բնակչության արտագաղթը և միտումները մոտ ապագայում», 21-րդ Դար, N6, 2006
8. «ՀՅԴ» 2017թ. ՀՀ ԱԺ ընտրությունների նախընտրական ծրագիր http://www.arfd.info/hy/?p=34346
9. «Հայրենադարձության մասին ՀՀ օրենքի նախագիծ» http://www.mindiaspora.am/am/Projects
10. **Մարաշլյան Վ.**, «Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում: Խոչընդոտներ և հնարավորություններ», 2014
11. **Brian Amkraut,** Between Home and Homeland: Youth Aliyah from Nazy Germany, The University of Alabama Press, 2006
12. **Katy Long**, The point of no return: Refugees, Right and Repatriation, Oxford University Press, 2013
13. **Safran W**. Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return. Diaspora, 1991

Կրթության դերը քաղաքական իմիջի կերտման համատեքստում

Հովսեփյան Մ.Մ., Ծատրյան Հ.Զ.
Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոն /Հայաստան, Երևան/
htsatryan@ysu.am

Վճռորոշ բառեր՝ կրթություն, կրթված հասարակություն, քաղաքական գործիչ, թեկնածու, քաղաքական իմիջ, քաղաքական PR տեխնոլոգիաներ, մեդիա, նախընտրական գործընթացներ, ընտրություններ

Роль образования в контексте формирования политического имиджа

Овсепян М.М., Цатрян А.З.
Ереванский государственный университет, кафедра печатных и вещательных СМИ факультета журналистики (Армения, Ереван)
htsatryan@ysu.am

Резюме: Одним из основных инструментов демократизации общества - обеспечение образования. Однако, как ни странно это звучит, не во всех демократических странах глава государства становится образованный человек, который стоит на вершине иерархической системы управления. Похоже, что полученное образование должно еще больше обеспечить социальную мобильность человека, позволяя последнему проявляться в среде, в которой он или она первоначально хотел/а появиться, получив свое выбранное образование или специализацию. Однако в политике не все так ясно, как кажется. В статье представлена важная роль к образованию кандидата в контексте формирования политического имиджа и его значимость во время избирательных кампаний, когда создается позитивное отношение через СМИ.
Ключевые слова: образование, образованное общество, политический деятель, кандидат, политический имидж, политические PR технологии, медиа, предвыборные процессы, выборы

The Role of Education In the Context of Formation of Political Image

Hovsepyan M.M., Tsatryan H.Z.
Yerevan State University, Faculty of Journalism, Head of Printed and Broadcast Media Chair (armenia, Yerevan)
htsatryan@ysu.am

Abstract: One of the main instruments of democratization of the society is the proper provision of education. However, no matter how strange it sounds, not in all democratic countries the head of the state becomes an educated person, who stands on the top of a hierarchical system of governance. It seems that the education that he or she has received should further ensure the social mobility of the person, allowing the latter to appear in the environment in which he or she originally wanted to appear by gaining his / her chosen education or specialization. However, in politics not everything is as simple as it seems. This article presents the important role of candidate's education in the context of formation of political image and its importance during election campaigns when a positive attitude is created through the media.
Keywords: education, educated society, politician, candidate, political image, political PR technologies, media, pre-election processes, elections

Կրթված հասարակություն ունեցող երկիրն ունակ է առավել արագ ու սրընթաց զարգանալ, քան այն երկիրը, որտեղ հասարակության զգալի մասը չունի պատշաճ կրթություն: Կիրթ մարդն այնպիսի ռեսուրս է, որին կարելի է օգտագործել քաղաքական շրջապատում լուսավորություն տարածելու համար: Եթե քաղաքական լիդերը կրթված չէ, ապա դժվար է նրանից ակնկալել ինչ-որ զարգացում կամ առաջընթաց: Այստեղ կրթությունը ոչ միայն դիպլոմավորված մասնագետ լինելն է: Անկիրթ ղեկավարը հաճախ չի կարող գնահատել հնարավորությունները և հանդես բերել երկրի զարգացման իրական ծրագիր: Այս ամենի մասին գերազանց գիտեն քաղաքական PR տեխնոլոգիաներ ուսումնասիրողները և քաղաքական խորհրդատվությամբ զբաղվողները:

Վերոնշյալը պնդումները գրեթե ապացուցման կարիք չունեցող իրողություն են: Շատ

երկրներում այսօր քաղաքական գործիչների՝ պաշտոններ զբաղեցնելու համար առաջ է քաշվում կրթական եթե ոչ պարտադիր, ապա գոնե նվազագույն անհրաժեշտ ցենզ. օրինակ, եթե քաղաքացին ցանկանում է ԱՄՆ-ում կամ Մեծ Բրիտանիայում զբաղվել քաղաքականությամբ, քաղաքական գործիչ դառնալ ու պետական պաշտոն զբաղեցնել, ապա նա հետագա խնդիրներից՝ մամուլի կամ մյուս լրատվամիջոցների կողմից ծաղրի, պարսավանքի չենթարկվելու համար պետք է գոնե ունենա համապատասխան կրթական ցենզ, լինի դիպլոմավորված մասնագետ[1], որը թույլ կտա մի քանի տարիների ընթացքում հնարավորինս բարձրանալ քաղաքական աստիճաններով, հակառակ դեպքում մեդիան կարող է չար կատակ խաղալ նրա անվան հետ: Իրավիճակը նույնն է Ճապոնիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և բազմաթիվ եվրոպական երկրներում: Կիրթ առաջնորդների խնդիր ունի նաև Հնդկաստանը[2]: Գրեթե հնարավոր չէ քաղաքականության մեջ մտնել՝ առանց կրթվածության, ինչպես նաև կիրթ մարդու մեդիահիմիջ ստեղծելու: Հատկապես վերջինը շատ կարևոր է քաղաքական դրական PR-ի տեսանկյունից:

Կրթության դերը կարևոր է ոչ միայն քաղաքական հաջողված իմիջ ստեղծելու համար: Անձի, քաղաքացու ձևավորման ու զարգացման գործընթացը նախ սկսվում է խաղային ձևերի ընդօրինակմամբ, ապա անցնում է ուսումնառությանը, այնուհետև աշխատանքային գործունեության: Կան պնդումներ, որ համակարգված ուսուցումը պլանային ներգործություն է ունենում մարդու, քաղաքացու իմացական կարողությունների, հոգեկան հատկությունների ու ընդհանուր զարգացման վրա: Ուսումնառության տարիներին մարդը հաղորդակցվում է գիտությանը, զարգացնում իր գրավոր և բանավոր խոսքը, նաև տրամաբանական մտածողությունը: Ուսուցումն իրականացնում է նաև մարդու զարգացման ու դաստիարակման խնդիրներ[3]:

Հետևաբար, քաղաքական գործիչը նախևառաջ ձևավորվում է կրթության շնորհիվ: Այստեղ է, որ ներդաշնակվում է քաղաքացու մտավոր, ֆիզիկական ու հոգևոր կարողությունների փոխկապակցված զարգացումը: Մարդկային զարգացումն ընդհանրապես իր մեջ ներառում է պատշաճ կենսամակարդակ, կրթություն և առողջապահություն: Լավ կրթությունը ընդլայնում է մարդու հնարավորությունները գիտելիքների և մասնագիտական կարողությունների ձեռքբերման ոլորտում, ձևավորում է հանրույթի զարգացման կարևոր բաղկացուցիչներից մեկը՝ մարդկային կապիտալը, ստեղծում է կյանքի որակ և ծառայում որպես տնտեսական աճի աղբյուր: Ամենի համատեքստում պատահական չէ, որ զարգացած ու զարգացող երկրներում առավել մեծ ուշադրություն և միջոցներ են հատկացնում կրթության կարգավորման խնդրին[4]: Կրթությունը անձի ձևավորման և զարգացման, իմացական գործունեության եղանակների տիրապետման, գիտելիքների հաղորդման, կարողությունների, հմտությունների մշակման, նաև անցյալի փորձի յուրացման գործընթաց է, ասել է թե զարգացում ապահովող կարևոր բաղադրիչ: Մարդկային ներուժի զարգացման կարևորագույն խնդիրը հանրույթի կրթության մակարդակն է, որն էլ բնութագրվում է երկրի չափահաս քաղաքացիների գրագիտությամբ՝ ձեռք բերված տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Եվրոպական զարգացած երկրներում, ԱՄՆ-ում կրթված մարդը քաղաքականության մեջ ճկուն ռեսուրս է, որի ստացած կրթությունը օգտագործվում է հանրային շահի սպասարկման համար: Ըստ էության՝ ձևավորվում է այնպիսի քաղաքական իմիջ, որ կրթված քաղաքական գործիչն է միայն ունակ իր երկրի, հասարակության համար արդյունավետ որո-

[1] Տե՛ս Patel A., What it means to have an uneducated leader, liveMINT, հրապարակված է սեպտեմբերի 28, 2013թ., հասանելի է՝ [https://www.livemint.com/Leisure/JJBNMeTBDxPN187zJVOcOJ/What-it-means-to-have-an-uneducated-leader.html]:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս ***Բագինյան Հ.,*** Կրթության միջոցով մարդկային կապիտալի ձևավորումը՝ որպես կյանքի որակի և տնտեսական աճի աղբյուր, հրապարակվել է՝ մայիսի 1, 2007թ., հասանելի էր 18.02.2018-ին՝ [http://iravaban.net/1728.html]:

[4] Տե՛ս Hunt R.A., Does the U.S. President Need a College Degree?, Bloomberg, հրապարակված է փետրվարի 1, 2015թ., հասանելի է՝ [https://www.bloomberg.com/view/articles/2015-02-01/does-the-u-s-president-need-a-college-degree-]:

շումներ կայացնել: Ինչ-որ երկրի առաջնորդ կամ մի շրջանի ղեկավար նախևառաջ պետք է պատկերացում ունենա իր երկրի (շրջանի) խնդիրների մասին: Այս համատեքստում պընդումը, թե միայն կրթված քաղաքական գործիչն է ունակ հնարավոր առաջընթացի ուղին զանազանելու հետընթացից՝ անելով համապատասխան վերլուծություններ ու դիտարկումներ, տեղին է:

Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում կրթության հայեցակարգն այնպիսին է, որ թույլ չի տրվում լիարժեք կրթություն չստացած կամ թերուս մարդուն բարձր պաշտոն զբաղեցնել պետական հատվածում: Սա արդեն ամրագրված է այս երկրների քաղաքական մշակույթում: Օրինակ, առ այսօր Հարրի Թրումենից հետո ԱՄՆ-ում չեն ընտրել նախագահի, որը չի ունեցել բարձրագույն կրթության աստիճան: ԱՄՆ Սենատի բոլոր անդամները նույնպես ունեն կրթական աստիճան: Եթե ինչ-որ բացառություն է տեղի ունենում ու թեկնածուներից մեկը չունի կրթական աստիճան, ապա վերջինս կարող է դառնալ լրատվամիջոցների թիրախը՝ հասարակությանը ներկայանալով որպես ոչ ույալ, չդիպլոմավորված մասնագետ, ինչը կազդի վերջինիս դրական իմիջի[5]:

Սա թերևս ստիպում է շատերին ավագ դպրոցն ավարտելուց հետո մասնագիտություն ստանալ բարձրագույն ուսումնական հաստատություններում, քոլեջներում, ինչի արդյունքում մեծանում է նաև հետագայում լավ աշխատանքի անցնելու հնարավորությունը: Իրավիճակը նույնն է մյուս զարգացած երկրներում. չդիպլոմավորված քաղաքական գործիչները կարող են «ոչնչացվել»:

Ներկայում Արևմուտքում խիստ ընդունված է, որ քաղաքական գործիչն ունենա ոչ միայն մեկ կրթություն կամ կրթական աստիճան: Այս համատեքստում լավագույն օրինակը թերևս ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբաման է, որը կրթություն է ստացել ոչ միայն Օկսիդենտալ Քոլեջում, այլև Կոլումբիայի համալսարանում ու Հարվարդի իրավաբանական դպրոցում: Հատկապես Հարվարդում ունեցած դասախոսական կարիերայի և Իրավաբանական դպրոցում ծավալած ակտիվ գործունեության փաստն անընդհատ շեշտվում էր նրա՝ ԱՄՆ 2008 թ. նախագահական ընտրությունների նախընտրական շրջանում[6]: Նախագահի թեկնածու Բ. Օբամայի՝ որպես ամենակարևոր արժեք կամ մրցակիցների հանդեպ առավելություն ներկայացվում էր նրա որակյալ կրթությունը և գիտականի հաջող համբավը, ինչը, վերջիվերջո, որոշակի ազդեցություն ունեցավ ընտրողների շրջանում: Մեդիան ի դեմս Բ. Օբամայի ստեղծեց նաև բարեկիրթ մարդու իմիջ: Կրթական տարբեր աստիճաններ ունենալը օգնեց Բ. Օբամային, նախընտրական արշավը կազմակերպողներին կառուցելու ույալ քաղաքացու և պետական գործչի քաղաքական իմիջ:

Որոշ դեպքում քաղաքական իմիջի ձևավորման համար դրական ազդեցություն է ունենում նաև քաղաքական գործիչների, լիդերների արտասահմանում ստացած կրթությունը: Արտերկրում ստացած կրթությունը ներկայացվում է որպես տեղական կրթություն ունեցող մրցակիցների հանդեպ առավելություն: Օրինակ, տարիներ առաջ կատարված հետազոտության համաձայն՝ շուրջ 71 տոկոս են կազմում Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և Թուրքիայի՝ արտերկրում բարձրագույն կրրթություն ստացած քաղաքական լիդերները[7]: Գրեթե նույնօրինակ պատկեր ենք տեսնում նաև Քենիայի, Նիգերիայի և Հարավային Աֆրիկայի քաղաքական առաջնորդների մոտ: Հակառակ երևույթ է առկա Ավստրիայի, Գերմանիայի և Նիդեռլանդների քաղաքական էլիտայի շրջանում: Նշյալ երկրների քաղաքական լիդերների 96 տոկոսը ստացել է կրթություն սեփական երկրի սահմաններում: Մի փոքր

[5] Տե՛ս Hunt R.A., Running for high office without higher education, The International New York Times, հրապարակված է փետրվարի 2, 2015թ., հասանելի է՝ [https://www.nytimes.com/2015/02/02/us/politics/running-for-high-office-without-higher-education.html]:

[6] Տե՛ս ԱՄՆ Սպիտակ տան պաշտոնական կայքում երկրի 44-րդ նախագահի կենսագրության մեջ կարևոր կետ է նշվում Օբամայի՝ «Harvard Law Review» հանդեսի պատմության առաջին աֆրոամերիկացի խմբագիր լինելու փաստը: Առավել մանրամասն Բարաք Օբամայի կենսագրությանը կարող եք ծանոթանալ Սպիտակ տան պաշտոնական կայքում, տե՛ս The 44th US President Barack Obama էջը, հասանելի էր՝ 18.02.2018-ին՝ [https://www.whitehouse.gov/about-the-white-house/presidents/barack-obama/]

[7] Տե՛ս Blochinger S., What do the world's most successful people study?, British Counsil, հրապարակված է հունիսի 1, 2015թ., հասանելի է՝ [https://www.britishcouncil.org/voices-magazine/what-do-worlds-most-successful-people-study]:

քիչ՝ 91 տոկոս է կազմում Արգենտինայի, Բրազիլիայի, ինչպես նաև Մեքսիկայի քաղաքական լիդերների՝ սեփական երկրում բարձրագույն կրթություն ստացած լինելու ցուցանիշը[8]:

Ի տարբերություն ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի քաղաքական գործիչների՝ Հայաստանում շատ քչերը քաղաքական գործիչներից ունեն պատշաճ բարձրագույն կրթություն, որը, սակայն, ոչ մի կերպ չի էլ խոչընդոտում, որ վերջիններս ղեկավար պաշտոններ զբաղեցնեն երկրի օրենսդիր և գործադիր մարմիններում, պետական համակարգում, ընտրվեն որպես երկրի Ազգային ժողովի պատգամավոր: Այն, որ հայաստանյան քաղաքական գործիչներից, մասնավորապես Ազգային Ժողովի պատգամավորներից շատերի մոտ բարձրագույն կրթությունը բացակայում է, հայտնի փաստ է[9]: Իրավական և օրենսդրական նորմերով դա խախտում չի համարվում: Այդ կրթության բացակայության արդյունքն է, որ թույլ է տալիս Հայաստանի ԱԺ պատգամավորներից շատերին նիստերի դահլիճ բերել ոչ պաշտոնական, փողոցային բառապաշար, որը ազատորեն կիրառվում է նաև հանրության հետ շփումներում[10]: 2017 թ. ապրիլի 2-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում Հայաստանում ձևավորվեց Ազգային ժողովի 6-րդ գումարումը: Մի փոքր փոխվեց ԱԺ պագամավորների կազմը՝ ներառելով մեծապես կրթված գործիչներին[11]:

Մեդիան մշտապես ուշադրության կենտրոնում է պահում քաղաքական գործիչներին: Իմիջի ստեղծման առումով բարձրագույն կրթության առկայությունը հաճախ օգնում է թեկնածուին կամ արդեն պաշտոն զբաղեցնող գործչին ընտրողներին ներկայանալ հնարավորինս դրական հատկանիշներով[12]:

Մեդիան օգնում է կիրթ մարդկանց հանրահռչակվել: Անգամ համաշխարհային մեծ ճանաչում ունեցող, բայց մասնագիտական կրթություն չստացած մարդիկ, այդ թվում նաև՝ Բիլ Գեյթսը, Հենրի Ֆորդը, Ալբերտ Այնշթայնը մարդու՝ կրթություն ստանալու իրավունքը համարել են որպես առաջնահերթ, խիստ կարևորություն: Իհարկե, գուցե վերջիններիս օրինակից կարծիք ստեղծվի, թե կըրթված լինելը կարևոր չէ կամ որևէ արժեք չկա այն բանում, թե ինչ կրթական աստիճան ունի մարդը, սակայն քաղաքականության մեջ, ի տարբերություն բիզնեսի կամ այլ ոլորտների, կրթված լինելը պարտադիր է: Այն օգնում է նաև քաղաքական PR-ով զբաղվողներին հեշտորեն ռազմավարություն մշակել. մեկ բան է ներկայացնել կրթված մարդու, մեկ այլ բան՝ թերուսին:

Եթե քաղաքական լիդերը չունենա պատշաճ գրագիտություն, չկարողանա իրադարձությունների պատճառահետևանքային վերլուծություններն ինքնուրույն անել, շփվել հասարակության հետ, ապա շատ դժվար է կանխատեսել, թե ինչպես կարող է նա հաջողել քաղաքականության մեջ ու քաղաքական գործընթացների ժամանակ: 21-րդ դարում մեդիան չափազանց ուշադիր է և մեծ տեղ է տալիս քաղաքական գործիչների արտահայտած մտքերին: Հաճախ անզգույշ և հապշտապ արտահայտած մտքերը կարող են վերածվել ծաղրուծանակի առարկա: Օրինակ, քաղաքական և հասարակական գործիչների՝ 2017 թ.-ին արած տասը զավեշտալի հայտարարությունները ի մի էր բերել «ՍիվիլՆեթ» առցանց հեռուստաընկերությունը[13]:

Սեփական քաղաքական գործիչների անգրագիտությունը չարիք է հասարակության համար: Սա անգամ Թոմաս Հոբսն էր պնդում, ըստ որի՝ կրթությունը խիստ կարևոր պայման է երկրի քաղաքական կայունության համար: Կրթության՝ քաղաքական կայունության գործիք լինելու նշանակությունը տարիներ շարունակ եղել է նաև գիտնականների քննարկման

---

[8] Տե՛ս նույն տեղում:

[9] Տե՛ս ***Աբրահամյան Ա.,*** Ինչպես սարքել մեխանիզմը, «Առավոտ» օրաթերթ, հրապարակվել է՝ հունվարի 9, 2013թ., հասանելի է՝ [http://www.aravot.am/2013/01/09/315595/]

[10] Տե՛ս «Համբալների» և «կազյոլների» ժամանակը, «AraratNews» լրատվական, հրապարակվել է՝ դեկտեմբերի 23, 2013թ., հասանելի էր 18/02.2018-ին՝ [http://araratnews.am/համբալների-և-կազյոլների-ժամանակ/]

[11] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 6-րդ գումարման պատգամավորներ, ցանկը հասանելի է՝ [http://www.parliament.am/deputies.php?lang=arm]

[12] Տե՛ս Հակոբյան Ա., Արտասահմանում կրթված Շիրակի մարզպետի նորարարությունը, «Հրապարակ» օրաթերթ, հրապարակվել է՝ հունվարի 31, 2018թ., հասանելի է՝ [https://www.hraparak.am/posts/5a719b1219479f2b73018194]

[13] Տե՛ս «2017-ի 10 բոցերը», «ՍիվիլՆեթ» առցանց հեռուստաընկերություն, հրապարակվել է՝ դեկտեմբերի 30, 2017թ., հասանելի է՝ [https://youtu.be/W1DQM-8Ta-c]

շրջանակում[14]: Եթե հասարակությունը չունի լավ կրթված, բանիմաց լիդերներ և ղեկավարներ, ապա այն միտված է դեպի ոչնչացում: Կիրթ լիդերն է, որ կիրթ հասարակության կարիք ունի:

Կրթության վերաբերյալ Թոմաս Հոբսը բավականին հետաքրքիր մեկ օրինակ է բերում. «Ոչ ոք չի գնա կռվելու այն արքայի համար, ով ոչ լեգիտիմ է: Իհարկե, գուցե այդ ոչ լեգիտիմ թագավորը կկարողանա իր շարքերում մի քանի վարձու զինվորներ պահել, սակայն վերջիններս ամեն պահի կարող են լքել արքային, երբ նա չկարողանա վճարել իրենց գումար: Իսկ եթե արքան կրթված լինի, ապա նա իշխանությունը պահելու համար երբեք չի դիմի վարձկան զինվորներին՝ կանխատեսելով իր մոտալուտ վախճանը»[15]: Վստահաբար կրթված լիդերն ինքն առաջինը կլքի իր զբաղեցրած պաշտոնը, երբ կհասկանա, որ իր ընտրած ուղեգիծը ժողովրդին տանում է դեպի կործանում: Անկիրթ և ոչ լուսավորյալ գաղափարների հետևորդ լիդերը, ընդհակառակը, կարող է ապակայունացնել երկիրը[16]: Սա ոչ խրախուսելի միտում է Հայաստանում և հետխորհրդային մի շարք երկրներում, որը, սակայն, վաղուց հասկացել են ու քաղաքական կիրառությունից դուրս մղել բազում զարգացած երկրներում՝ այդ թվում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում, Ավստրալիայում, Մեծ Բրիտանիայում և Եվրոպական միության անդամ մի շարք երկրներում: Հասկանալով, որ լավ կրթությունը կարող է խարսխել քաղաքական գործչի դրական ու ցանկալի իմիջը մեդիայում ձևավորելու հարցում, նախընտրական արշավներ կազմակերպող մասնագետի համար կարևորություն ունի քաղաքական թեկնածու ունեցած կրթական ցենզը: Այն ոչ պատշաճ լինելու դեպքում կարող են ի հայտ գալ քննարկումներ, որոնք կարող են մեծ ազդեցություն ունենալ տվյալ քաղաքական գործչի կարիերայի վրա: Մեդիան կարող է ծաղրի առարկա դարձնել քաղաքական թեկնածուներին, եթե նրանք չունեն իրենց կողմից զբաղեցրած պաշտոնին համապատասխան կրթություն և անձնական հատկանիշներ, կամ ստացել են կեղծ դիպլոմ՝ «գնելով» սեփական կրթությունը[17]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զարգացած հասարակությունների քաղաքական էլիտաները հիմնականում կրթվածության բարձր մակարդակ ունեն: Բացի այդ, նրանք միտված են հասարակության շրջանում կրթության դերի բարձրացման: Հետազոտողները դեռ տարիներ առաջ եկել են այն եզրահանգման, որ գրեթե բոլոր հասարակական ցնցումները տեղի են ունեցել կրթված մարդկանց ջանքերով[18]: Վերջիններս կարողացել են շարժիչ լինել, զարգացող երկրներում ինչ-որ բաներ փոփոխել՝ տապալելով հին ռեժիմը կամ ստեղծելով նորը: Հեղափոխական առաջնորդներից շատերը հաճախել են բարձրակարգ դպրոցներ՝ ստանալով լավ ու որակյալ ուսուցում: Կրթությունը դարեր ի վեր եղել և շարունակում է մնալ քաղաքական զարգացման հիմնական գործիքը: Նշյալը հաշվի առնելով ու հիմք ընդունելով՝ քաղաքական գործիչների իմիջ կերտողները ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում մեծ դերակատարում են տալիս գործչի կրթությանը, անում են հնարավոր ամեն ինչ այն հանրային քննարկում դարձնելու համար, եթե քաղաքական գործիչն ունի լավ և նշանակալի կրթություն: Հակառակ դեպքում, ամեն ինչ արվում է իրականությունը թաքցնելու, կրթության դերն անձնական հատկանիշների կամ այլ արժանիքի հաշվին որոշակիորեն նսեմացնելու համար: Սակայն փակել այս բացը խիստ դժվար է:

Ի վերջո, ի՞նչ է տալիս կրթությունը քաղաքական գործչին: Առաջին հերթին կրթության շնորհիվ է մարդը կարողանում մտնել քաղաքականության և քաղաքական գործընթացների մեջ: Առանց պատշաճ գիտելիքների դժվար է 21-րդ դարում պատկերացնել հարգված քաղաքական գործչի: Բազմաթիվ երկրներում քաղաքական մշակույթը պահանջում է, որ քաղաքականություն մուտք գործելու համար

[14] Տե՛ս ***Anderson J.,*** The role of education in political stability, Hobbes Studies, Volume 16, Issue 1, 2003, pp. 95-99

[15] Տե՛ս նույն տեղում:

[16] Տե՛ս ***Meyer W.J., Rubinson R.,*** Education and Political Development, Review of Research in Education, Vol. 3 (1975), pp. 134-162

[17] Տե՛ս Ahmedzade T., The curious case of the Turkish President's degree, BBC News, հրապարակվել է՝ հունիսի 3, 2016թ., հասանելի է՝ [http://www.bbc.com/news/blogs-trending-36436200]

[18] Տե՛ս ***Meyer W.J., Rubinson R.,*** Education and Political Development, Review of Research in Education, Vol. 3 (1975), pp. 134-162

անհրաժեշտ է կրթական գոն նվազագույն աստիճան ունենալ, ինչը «մուտքի վիզա» է, որով հնարավորություն է տրվում քաղաքականության մեջ հանդես գալ որպես ակտիվ «խաղացող»:

Ամփոփելով նշենք՝ զարգացած երկրներում վիթխարի ուշադրություն է սևեռվում քաղաքական գործիչների ստացած կրթությանը: Քաղաքական իմիջմեյքերները գիտեն ճիշտ կողմնորոշվել իրենց գործատուների՝ քաղաքական գործիչների ստացած կրթությունը հանրությանը՝ ընտրելու իրավունք ունեցողներին ներկայացնելու այնպես, որ ակամայից ստեղծվի դրական իմիջ գործչի ստացած կրթության և որակավորումների վերաբերյալ: Օրինակ՝ ԱՄՆ-ում պատմականորեն ձևավորված ներկայիս քաղաքական համակարգն այնպիսին է, որ միայն կրթություն ստացած մարդն է ունակ առաջ շարժվելու քաղաքական աստիճաններով: Դոնալդ Թրամփի[19]՝ ԱՄՆ 45-րդ նախագահի՝ կենսագրության մեջ մեծ տեղ է գրավում ստացած կրթությունը, չնայած նախագահ Դ. Թրամփի կիրառած բառապաշարը և հանրային վարվելակերպը ստեղծել է հասարակական տարատեսակ քննարկումների առիթ:

[19] ԱՄՆ Սպիտակ տան պաշտոնական կայքում երկրի 45-րդ նախագահի կենսագրության մեջ նշված է, որ Դոնալդ Թրամփը Փենսիլվանիայի համալսարանի շրջանավարտ է և ուսումնառել է Ուհարթոն ֆինանսական դպրոցում, ինչը հիմք է հանդիսացել բիզնեսում հաջողություններ գրացնելու համար: Առավել մանրամասն Դոնալդ Թրամփի կենսագրությանը կարող եք ծանոթանալ Սպիտակ տան պաշտոնական կայքում, տե՛ս [https://www.whitehouse.gov/people/donald-j-trump/]

Հայաստանի մեդիա դաշտի արդի փուլը

Ծատրյան Հ.Զ.
Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոն /Հայաստան, Երևան/
htsatryan@ysu.am

Վճռորոշ բառեր՝ հայկական մեդիա, մեդիա դաշտ, ԶԼՄ-ներ, հեռուստատեսություն, ռադիո, թերթ, առցանց լրատվամիջոց, վճարովի բովանդակություն, հայալեզու ԶԼՄ-ներ, լրագրող, լրագրություն, այլընտրանքային մեդիա, սոցիալական ցանցեր, մեդիա ուսումնասիրություն

Нынешний этап армянских СМИ

Цатрян А.З.
Ереванский государственный университет, кафедра печатных и вещательных СМИ факультета журналистики (Армения, Ереван)
htsatryan@ysu.am

Резюме: В последние годы быстрое развитие традиционных и новых СМИ в Армении сделало их неотъемлемой частью социальной, политической и общественной сфер.
Информация, распространяемая через средства массовой информации, теперь является ценным оружием первой необходимости, существование или отсутствие которой зависит судьба государства. Изучение сферы СМИ в Армении - важный вопрос, который дает возможность понять все возможности армянских СМИ. Доступность информационных сетей в Армении, а также доступность высокоскоростного Интернета и глобальная распространенность этого ресурса несут беспрецедентное влияние на развитие медиа-сферы в Армении.
Представляя несколько полевых изучений и исследований в максимально возможной степени, была предпринята попытка представить особенности армянских СМИ, изменения различий, а также современные подходы к некоторым вопросам (информационная политика, публикация контента и контент для продажи, профессионализм журналистики).
Ключевые слова: СМИ в Армении, телевидение, радио, печатные СМИ, интернет-СМИ, платный контент, СМИ на армянском языке, журналист, журналистика, альтернативная медиа, социальная сеть, медиа-исследования

Current stage of Armenian mass media

Tsatryan H.Z.
Yerevan State University, Faculty of Journalism, Head of Printed and Broadcast Media Chair (armenia, Yerevan)
htsatryan@ysu.am

Abstract: In recent years, the rapid development of traditional and new media in Armenia has made them an integral part of the social, political and public spheres.
The information spread through the media is now a valuable weapon of the first necessity, the existence or absence of which depends on the fate of a state. The study of the Armenian media sphere is an important issue that gives an opportunity to understand all the capabilities of the Armenian media. The availability of information networks in Armenia, as well as the availability of high-speed Internet and global prevalence of it have an unprecedented impact on the development of the media sphere.
By presenting a few field research and studies as fully as possible, an attempt has been made to present the peculiarities of the Armenian mass media, modish differences as well as contemporary approaches to some issues (information policy, content publication and content sales, professionalism of journalism).
Keywords: Armenian media, media studes, mass media, television, radio, printed media, online media, paid content, Armenian language media, journalist, journalism, alternative media, social network, media studies

Հայաստանի նորագույն պատմության մեջ առաջին և վերջին անգամ լրատվադաշտի ամբողջական հետազոտություն կատարել էր Երևանի մամուլի ակումբը (ԵՄԱ)՝ փորձելով ամփոփ պարզել, թե ինչպիսի վիճակում է գտնվում հայկական մեդիան առ 2013 թվականը[1]: Հետազոտության արդյունքները ցույց

[1] «Հայաստանի մեդիա ինդուստրիայի ներկա վիճակը» հետազոտությունն իրականացրել է Երևանի մամուլի

էին տվել, որ Հայաստանի մեդիա շուկան բավական հագեցած է, ինչը լուրջ և բացասական կերպով ազդում է մեդիա ոլորտի զարգացման վրա[2]: Այս համատեքստում մրցակցությունը հիմնվում է ոչ թե որակի, այլ օպերատիվության վրա: Վերջին տարիներին երկրում նոր մեդիայի արագ զարգացման շնորհիվ հետաքրքրությունը հեռուստատեսությունից հեռանում էր՝ թեքվելով դեպի այլընտրանքային մեդիան, սակայն սոցիալական ցանցերը հանդես չեն գալիս որպես ինֆորմացիայի հիմնական աղբյուր և այս առումով պրոֆեսիոնալ լրատվամիջոցների դերը շարունակում է բարձր մնալ՝ ունենալով հանրային սպառում: Ուշադրության է արժանի փաստը, որ լրատվամիջոցների հանդեպ հասարակության վստահության աստիճանը բավական ցածր է, ինչի հիմնական պատճառը քաղաքական մեծ ազդեցությունն է ԶԼՄ-ների վրա: Վերջին 13 տարիներին Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (CRRC) կողմից իրականացվող Կովկասյան բարոմետր ծրագրի շրջանակում հարցվածների մեծամասնությունը շարունակում է չվստահել ԶԼՄ-ներին: 2017 թվականի Կովկասյան բարոմետրը փաստում է՝ 36 տոկոսը «ոչ վստահում է, ոչ էլ չի վստահում» լրատվամիջոցներին: Այս ցուցանիշը մտահոգվելու առիթ է տալիս, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին Հայաստանը նաև բարձր դիրքեր չի գրավում խոսքի և մամուլի ազատության առումով: Տոկոսայնությամբ երկրորդ արդյունքը՝ (21 տոկոս) ցույց է տալիս, որ Հայաստանի հասարակությունը հակված է «ավելի շուտ չեմ վստահում» տարբերակին: ԶԼՄ-ներին «ավելի շուտ վստահում եմ» տարբերակին հակված է հարցվածների ընդամենը 19 տոկոսը[3]:

Համաշխարհային մամուլի տպագրական ծավալների արագացված կրճատման, որոշ պարբերականների փակման փորձը հաշվի առնելով՝ դժվար է խոստումնալից ապագա տեսնել ժամանակակից հայկական տպագիր մամուլի համար, քանի որ այժմ հանրային հետաքրքրությունը թերթային տարբերակից արդեն սահուն անցում է կատարել դեպի շատ ավելի կիրառելի ԶԼՄ-ների ոլորտ՝ համացանցային, որը մատչելի է, էլ առավել հասանելի քաղաքացիներին[4]: Առցանց լրատվամիջոցների ավելացմանը զուգահեռ զարգանում է նաև հայաստանյան գովազդային շուկան[5], հատկապես՝ հեռուստագովազդի ոլորտում, չնայած առցանց լրատվամիջոցների մոտ գովազդը դեռևս այնքան մեծ առաջընթաց չի ապրում, որպեսզի ապահովի լրատվամիջոցի խմբագրության գործունեության ինքնաճածկում:

Հայաստանի բոլոր մարզերի 1403 տնային տնտեսությունների պատահական ընտրանքի արդյունքում CRRC-ի կողմից 2013թ. դեմ առ դեմ հարցում էր կատարվել՝ պարզելու համար Հայաստանի քաղաքացիների մտահոգություններն ու ակնկալիքներն ավանդական (հեռուստատեսություն, ռադիո, թերթեր) և այլընտրանքային (առցանց լրատվամիջոցներ, սոցիալական ցանցեր) մեդիայից: Հետազոտության ժամանակ հավաքագրված տվյալների ու կարծիքների վերլուծությունը թույլ է տվել պատկերացում կազմել մեդիա ինդուստրիայի ֆինանսական, օրենսդրական, բո-

ակումբը՝ «Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) միջոցով: «Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի նպատակն է Հայաստանում առավել հասանելի դարձնել անկողմնակալ և բազմակարծիք լրատվությունը ավանդական և այլընտրանքային միջոցներով՝ տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառմամբ: Ծրագիրը համատեղ իրականացրել են «Ինտերնյուսը» (ԱՄՆ), «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը», «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամը և Երևանի մամուլի ակումբը:

[2] «Փորձագետներն անխուսափելի են համարում մեծ լրատվամիջոցների կողմից փոքրերի կլանումը Հայաստանում», «Մեդիամաքս», հրապարակվել է՝ 10.02.2014թ., հասանելի է՝ [http://www.mediamax.am/am/news/media/9061/]

[3] Կովկասյան բարոմետր 2017, Հարավկովկասյան երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների հանրային ընկալումը (2017թ. նոյեմբերի դրությամբ), հասանելի է՝ [http://www.crrc.am/caucasusbarometer/documentation?lang=hy]

[4] Հովհաննիսյան Ա., Մամուլի «արտագաղթ». կդիմակայի՞ տպագիր մամուլը ցանցային մեծ աշխարհում, «ՀԵՏՔ», հրապարակվել է՝ 19 դեկտեմբերի, 2013թ., հասանելի է՝ [http://hetq.am/arm/news/31483/mamuli-artagaxt-kdimakayi-tpagir-mamuly-cancayin-mets-ashkharhum.html]

[5] Խաչատրյան Ռ., Հայաստանում գովազդային շուկայի հին ու նոր խնդիրները. զեկույց, MEDIA.am, հրապարակվել է՝ սեպտեմբերի 29, 2016թ., հասանելի է՝ [https://www.media.am/advertisement-market-report-armenia]

վանդակային խնդիրների մասին[6]: Ներկայում ընդգծված է՝ էլեկտրոնային, առցանց մամուլի դերը վերջին տարիներին Հայաստանում բարձրացրել է: Թեև հարցվողներն ամենահասանելի ու դիտելի մեդիա են համարել հեռուստատեսությունը, սակայն դիտողների թիվը զգալի կրճատվել է տարիների ընթացքում (2011թ. 82%, իսկ 2013թ. 76%), հեռուստացույցի առջև անցկացված ժամանակի ծավալը նույնպես վերջին մի քանի տարիներին կանոնավոր նվազել է (2011թ. 12 ժամից ավելի օրական հեռուստացույց է դիտել հարցվողների 9%-ը, իսկ 2013թ.՝ ընդամենը 2%-ը):

Որքան էլ զարմանալի է, սակայն հանրության կողմից վստահություն են վայելում առավելապես հարևաններն ու ծանոթները, և վերջիններիս փոխանցած տեղեկությունը: Այդ ցուցանիշից հետո միայն հաջորդում է հեռուստատեսության հանդեպ մարդկանց վստահությունը, երրորդ տեղում են առցանց լրատվամիջոցները, որոնք չափազանց արագ տեմպերով զարգանում են: Ներկա փուլում անգամ կարող են գերազանցել որոշակիորեն լճացած վիճակում գտնվող հեռուստատեսությանը: Վերջին տարիներին իրականացվել են նաև հայկական մեդիայի օբյեկտիվ լուսաբանումը գնահատող հետազոտություններ, և եթե կարծիքները համադրենք, ապա կարող ենք եզրակացնել, որ ՀՀ քաղաքացիները սկսել էին ավելի շատ վստահել թերթերին, առցանց լրատվամիջոցներին, թեև հեռուստատեսային լուսաբանման օբյեկտիվության գնահատումը այս ընթացքում գրեթե անփոփոխ էր մնացել[7]: Քաղաքացիների կողմից ոչ օբյեկտիվ լուսաբանման հիմնական պատճառ է համարվել ՋԼՄ-ների քաղաքական որևէ ուժից ունեցած կախվածությունը (62%) և գրաքննությունը (7%): Կանխատեսելով հայկական մեդիայի ժամանակից փուլի մոտ ապագան՝ վերջին տարիների հետազոտություններից փաստում ենք, որ անխուսափելի են հայկական մեդիա հոլդինգների ձևավորումն ու մեծ լրատվամիջոցների կողմից փոքրերի արագ կլանումը: «Հայաստանի մեդիա ինդուստրիայի ներկա վիճակը» հետազոտության համաձայն՝ մի քանի տարի անց հայաստանցիների բացարձակ մեծամասնությունը կդառնա համացանցի օգտատեր. նոր մեդիայի զարգացումն անհնար կդարձնի տեղեկատվության քողարկումը և ավելի շատ հնարավորություններ կստեղծի հանրային կարծիքի ձևավորման համար[8]:

Մինչև Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում թվային հեռարձակում սկսելը[9] առկա էին 7 համազգային սփռման, 9 մայրաքաղաքային սփռման, 25 մարզային սփռման (ներառյալ երկարաժամկետ լիցենզիա ունեցողները, որոնք 16-ն էին), 4 արբանյակային հեռարձակում ունեցող, 52 մալուխային (այդ թվում՝ մարզային՝ 30-ը) հեռուստաալիքներ և հեռուստաընկերություններ:

Իրադրությունը զգալիորեն փոփոխվեց ամբողջական թվային հեռարձակումից և անալոգային ազդանշանի անջատումից հետո: Անցնելով ամբողջական թվային հեռարձակման՝ Հայաստանի մարզերում բնակվող քաղաքացիները կարող են դիտել 9, իսկ Արարատյան դաշտավայրին և Երևանին հարակից տարածքներում բնակվողները՝ 18 հեռուստաալիք: Թվայնացման արդյունքում իրավիճակը բարդացավ մարզային մասնավոր հեռուստաընկերությունների համար: Անալոգային հեռարձակման անջատման արդյունքում մի շարք մարզային հեռուստաընկերություններ հանդես եկան բողոքի կոչով, քանի որ մարզային մասնավոր հեռուստաընկերությունները հայտնվեցին փակման եզրին[10]:

Ռադիոընկերությունների թիվը մեծ չէր մինչև թվային ամբողջական հեռարձակման անցնելու գործընթացի ավարտը. Հայաստանում կային ընդամենը 3 ռադիո ընկերություններ, որոնք ունեին մեկից ավելի մարզերում

---

[6] Հախվերդյան Ն., Մեդիա ինդուստրիայի հեռանկարներն ու խորշերը, MEDIA.am, հրապարակվել է՝ 13.02.2014թ., հասանելի է՝ [http://media.am/Armenian-Media-industry-perspectives-and-gaps]

[7] Առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի մեդիա ինդուստրիայի ներկա վիճակը», «ԵՄԱ պաշտոնական կայք՝ www.ypc.am, «Հետազոտություններ» բաժին»: [http://ypc.am/oldypc/media_research/ln/am]

[8] Հախվերդյան Ն., «Մեդիա ինդուստրիայի հեռանկարներն ու խորշերը», նույն տեղում:

[9] Անալոգայինից թվային հեռարձակման անցնելու գործընթացն ավարտված է, «ՀԵՏՔ», հրապարակված է 20 հոկտեմբերի, 2016թ., հասանելի է՝ [http://hetq.am/arm/news/71925/analogayinic-tvayin-herardzakman-ancnelu-gortsyntacn-avartvats-e.html]

[10] Հովհաննիսյան Լ., Մարզերում գործող հեռուստաընկերությունների վիճակը տագնապալի է. ի՞նչ լուծումներ են առաջարկվում, ԽԱՊԿ, հրապարակվել է՝ 24 նոյեմբերի, 2016թ., հասանելի է՝ [https://goo.gl/6SSEYf]

հասանելի սփռում, մարզային սփռում ունեին 4-ը, իսկ մայրաքաղաքային՝ 16-ը[11]: Վերջին տարիների ռադիոկայանների ցանկը հիմնականում մեծապես խմբագրվել՝ ըստ երաժշտական ժանրերի: Որոշ կայաններ անվանափոխվել են (օրինակ՝ «Ռադիո Ջազ»-ը, «Նոր ռադիո»-ն), առաջ են եկել զանգվածային երաժշտություն սփռողները («Ռադիո Ջան»-ը, «Լավ Ռադիո»-ն), մինչդեռ ռադիոյի ամենակարևոր՝ օպերատիվ տեղեկատվության գործառույթի կիրառումը հաճախ հետին պլան է մղվում, ինչը զգալիորեն թուլացնում է ռադիոյի դերը: Չնայած այդ հանգամանքին, ներկայում կանոնավոր կերպով օպերատիվ տեղեկատվություն են մատուցում «Ազատություն» ռադիոկայանը, «Ռադիոլուր» լրատվական ծառայությունը, Լրատվական ռադիոն և Sputnik Արմենիան: Տարբերվող և ամբողջական են հատկապես «Ազատություն» ռադիոկայանի լրատվական թողարկումները, որոնք ամբողջականորեն ներկայացնում են երկրում և դրա սահմաններից դուրս տեղի ունեցող իրադարձությունները: Բազմաթիվ արտահերթ թողարկումներից բացի «Ազատություն» ռադիոկայանը օրվա ընթացքում ունի լրատվության երեք թողարկում: Առավոտյան ծրագրում ներկայացվում են տեղական և միջազգային լուրեր, ռեպորտաժներ, հարցազրույցներ, տեղեկատվություն օրվա սպասվող իրադարձությունների մասին, մամուլի համառոտ տեսություն: Ցերեկային ծրագրի երեք թողարկումներում ներկայացվում են տեղական և միջազգային լուրեր, ռեպորտաժներ, հարցազրույցներ, տեղեկատվություն օրվա սպասվող իրադարձությունների մասին, մամուլի համառոտ տեսություն: Լրատվական ամփոփիչ թողարկման Երեկոյան ծրագրում ամբողջացվում է «Ազատություն» ռադիոկայանի օրվա հիմնական թողարկումը, որում ներկայացվում են տեղական և միջազգային լուրեր, ռեպորտաժներ օրվա կարեւորագույն իրադարձությունների մասին, մեկնաբանություններ, հարցազրույցներ, մամուլի տեսություն[12]:

Ռադիոլսարանի վերջին հետազոտությունը Հայաստանում անցկացվել է 2015 թ.-ին՝ ներառելով միայն Երևանը[13]: Չորս տարվա կտրվածքով վերցրած՝ 2011-2015 թվականների ընթացքում որոշակիորեն նվազել է ռադիոլսարանը. եթե 2011 թվականի ռադիո լսում էր 44 տոկոսը, ապա չորս տարի անց այդ 35 տոկոսն է միայն ռադիո լսում: Ռադիոն առավել հետաքրքրություն է սպառում ունի տղամարդկանց, քան կանանց շրջանում: Սա փաստում է նաև Հայաստանի ազգային վիճակագրության «Ժողովրդագրության և առողջության հարցեր 2016» հետազոտությունը: Ներկայում Հայաստանում ռադիոն որքան հայերեն, այնքան էլ ռուսերեն է: Խոսքը ոչ միայն ընտրված երգերի, ռուսական ռադիոկայանների, այլեւ ռադիոհաղորդումների մասին է: Սա լրացուցիչ ուսումնասիրության առանձին առարկա է:


Միայն Երևանում սփռում իրականացնող ռադիոկայանների ցանկը և ռադիոլսարանի նախապատվությունը՝ համաձայն 2015 թ.-ի հետազոտության (**տե՛ս Աղյուսակ 1**):

Հայաստանի պարբերական հրատարակությունները ևս մանրամասն հաշվարկել ենք: Հայաստանում տարածվում է ավելի քան 70 անուն թերթ (չհաշված՝ բացառապես գովազդ, հայտարարություններ, խաչբառներ, վիկտորինաներ և այլ թեմատիկա պարունակող հրատարակությունները), այդ թվում՝ նշյալ թերթերից 10 եղել են օրաթերթեր, ամենօրյա ընդհանուր (հայտարարված) տպաքանակը՝ 35,000 օրինակով: Կան 28 մարզային թերթեր, որոնց ամենօրյա ընդհանուր (հայտարարված) տպաքանակը՝ մոտ 20,000 օրինակ է, իսկ մանրածախ ցանցով տարածվում է մոտ չորս տասնյակ անուն ամսագիր: Առցանց ԶԼՄ-ների թվաքանակը, որն օրեցօր ավելանում է, 2017 թվականի վերջին կազմել է 321 անուն, ներկայում թիվը վստահաբար ավելացել է: Հետազոտության ժամանակ հաշվարկել ենք միմիայն տեղեկատվական և լրատվական կայքերը: Վերջին տարիներին տեղի ունեցան նաև օրաթերթերի վերփոխում շաբաթաթերթերի, կրճատվեց նաև դրանց տպաքանակը, ինչը կանոնավոր կերպով ազդեց ոլորտի վրա, արդյունքում՝ Ազգային վիճակագրական ծառայության թարմ՝ «Ժողովրդագրության և

[11] Առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի մեդիա ինդուստրիայի ներկա վիճակը», նույն տեղում:

[12] «Ազատություն» ռադիոկայանի հաղորդումներ, https://www.azatutyun.am/programs/radio

[13] Հախվերդյան Ն., Ռադիոն Հայաստանում հիմնականում դրվեց երաժշտական ռելսերի վրա, MEDIA.am, հրապարակվել է՝ հոկտեմբերի 28, 2015թ., հասանելի է՝ [https://media.am/Armenian-radio-stations]



առողջության հարցեր 2016» հետազոտության համաձայն՝ Հայաստանում ԶԼՄ-ների ազդեցությունը բարձր է քաղաքաբնակ, բարձրագույն կրթություն ունեցող և ամենաբարձր բարեկեցություն ունեցող մարդկանց վրա: Իսկ կանանց 6, տղամարդկանց 10 տոկոսն էլ չի օգտվում ԶԼՄ-ներից[1]: Չափազանցրած չենք լինի, եթե պնդենք, որ վերջին հինգ տարիներին ամեն ամիս ավելանում է առցանց լրատվամիջոցների քանակը: Պատճառը պարզ է՝ առցանց մամուլի դաշտը, թերևս, ամենից չկարգավորվածն է:

Հայաստանի մեդիա դաշտի զարգացման վրա ազդեցություն է թողել նաև լայնաշերտ ինտերնետի հանրապետության ամբողջ տարածքով տարածումը: Հայաստանի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայն՝ երկրում 71 ինտերնետային ծառայություններ մատուցող կազմակերպություն կա, որոնցից 4-ը միասին զբաղեցնում են շուկայի 90 տոկոսը: Այս 4 խոշոր ինտերնետ փրովայդերներից միայն մեկն է հայկական: Հայկական Ucom-ը՝ շուկայի մեծ՝ 40% մասնաբաժինն ունի, Արմենթելը (Բիլայն ապրանքանիշ)՝ 36%, ՎիվաՍել ՄՏՍ՝ 15% և Ռոստելեկոմ՝ 7%[2]: Դեռ 2016թ. ինտերնետը մեծ լսարան է ունեցել. հասանելի է բնակչության 58 տոկոսին. 2015-ին այն հասանելի էր միայն 46 տոկոսին: Չնայած դեռ չկան տվյալներ 2017թ. վերաբերյալ, բայց վստահաբար աճ ևս կա:

Հատկանշական է նաև, որ 2011թ. ընթացիկ իրադարձությունների և նորությունների մասին տեղեկատվության ամենակարևոր աղբյուրի դերում համացանցին բաժին էր հասնում քիչ՝ ընդամենը 6%-ը: Երկու տարի անց՝ 2013թ., համացանցով նորություններին ու ընթացիկ իրադարձություններին ծանոթանալն ավելացել էր 11%-ով: Ուղիղ հինգ տարի անց՝ ինտերնետային ԶԼՄ-ները դարձել է տեղեկատվության ստացման գլխավոր աղբյուր՝ ուժեղ պայքար մղելով մյուս տեսակների հետ:

Հայաստանյան տեղեկատվական շուկան ցավալիորեն կախված է սեփականատերերի քաղաքական շահերից ու ճաշակից[3]: Այն


[1] Մարող թերթեր ու ամսագրեր. ինչպե՞ս ենք տեղեկություն ստանում, Սիվիլնեթ, հրապարակվել է՝ 12 հոկտեմբերի, 2017թ., հասանելի է՝ [goo.gl/mBGttU]

[2] Բարսեղյան Ա., Անազատության եզրին. Ինտերնետի վիճակը՝ Հայաստանում, MEDIA.am, հրապարակվել է՝ նոյեմբերի 24, 2016թ., հասանելի է՝ [https://media.am/Net-Freedom-in-Armenia-2016%20/]

[3] Առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի մեդիա ինդուստրիայի ներկա վիճակը», նույն տեղում:

դեռևս բիզնես չէ, որն ուղղակիորեն կախված է լսարանից: Քիչ չեն դեպքերը, երբ իշխանությունը քաղաքական ճնշումների է ենթարկում լուրջ քննադատական լրատվամիջոցներին, ինչի արդյունքում շատ ԶԼՄ-ներ ստիպված են ընտրել ինքնագրաքննության ճանապարհը:

Կատարված դաշտային հետազոտության արդյունքում պարզել ենք՝ ինչ թեմաներ են նախընտրում օգտատերերը կարդալ առցանց հրապարակումներում և հայերեն թերթերում (տե՛ս Նկար 1-ում): Առանձնացրել ենք նաև առցանց գործող ԶԼՄ-ների ժանրային մի քանի նախապատվություններ (տես Նկար 2 և Նկար 3):



Առցանց ԶԼՄ-ների կողմից լսարանի շրջանում որպես նախապատվություն է շարունակում մնալ միջազգային քաղաքական իրադարձությունների լուսաբանումը: Այս համատեքստում առավելապես կարևորվում է հիմնականում ռուսերեն հրապարակումներից արվող և որոշ իմաստով ռուսաստանյան քաղաքական քարոզչության «կնիքն» ունեցող թարգմանական նյութերը: ԶԼՄ-ների զարգացման Բալթյան կենտրոնի հետազոտությունը՝ նվիրված ԵՄ Արևելյան գործընկերության 6 երկրներում ռուսերեն լրատվամիջոցների առաջ քաշած խնդիրներին, ցույց է տալիս, որ Հայաստանում ոչ այնքան ազդեցիկ դեր ունեն ռուսերեն հրապարակվող ԶԼՄ-ները, որքան հայերեն հայերեն մի շարք հրապարակումներում ռուսաստանյան լրատվական կայքերից արվող միջնորդավորվածություն պարունակող հրապարակումները[4]: Եթե համաշխարհային առումով ԶԼՄ-ների բովանդակությունը ստանալու համար նախ պետք է վճարել ու բաժանորդագրվել, ապա այս երևույթը միայն վերջին տարիներին է մտնել Հայաստան: Հեռուստատեսության թվային հեռարձակման նախապատրաստական շրջանում բազում դուստր հեռուստաընկերություններ բացեց «Արմենիա»-ն[5]: Թեմատիկ կաբելային հեռուստաալիքներ ուներ նաև «ATV»-ն: Այսօրինակ նորությունը կիրառվեց Ucom կաբելային հեռուստատեսային ցանցում[6]: Բարձր որակով, թվային առանձին հեռարձակումներ ստեղծվեց նաև Ռոստելեկոմի ցանցում: Կաբելային «Շանթ Պրեմիում» հեռուստաալիքն այդ ցանցում հեռարձակվում է 2017թ. սկզբից[7]:

Բովանդակության համար 2016թ. Ամսավճար ու բաժանորդագրություն է առաջարկում նաև «Լրատվական Ռադիո»-ն: Խմբագրությունը գնաց բաժանորդագրային մոդելի հնարավորին չափ ազատ և անկախ տեղեկատվական ռադիոալիք լինելու, եթերի ֆինանսական կայունությունը ապահովելու համար, ոչ միայն գովազդային շուկային վստահելով, այլև ուղղակիորեն դիմելով զանգվածային լսարանին[8]: Սա արդարացված է փորձով՝

[4] «Gap-Asset Analysis of Russian Language Media Skill Set in the Eastern Partnership» հետազոտություն արված Baltic Centre for Media Excellence-ի կողմից 2017 թվականին: Հայաստանին նվիրված հետազոտության մեջ ներկայացված է, որ հայերեն առցանց լրատվադաշտը, չունենալով խոշոր ֆինանսական ռեսուրսներ, գրեթե ամբողջությամբ արտատվում է միջազգային լրատվությունը ռուսաստանյան կայքերի միջնորդությամբ և ռուսերեն բովանդակության հայելային, ոչ մասնագիտական թարգմանությամբ:


[5] Վեց տարբեր Արմենիա՝ սեպտեմբերի 14-ից, «Արմենիա» ՀԸ-ի հայտարարությունը, հրապարակվել է՝ սեպտեմբերի 7, 2015թ., հասանելի է՝ [https://youtu.be/FlaZodeWiZc]

[6] Նոր ATV ալիքներ Ucom-ի ցանցում, UCOM-ի պաշտոնական կայք, հրապարակվել է՝ մայիսի 2, 2016թ., հասանելի է՝ [https://goo.gl/UQPyNH]


[7] Ժամանակակից բովանդակություն եվ հնարավորություններ «Ռոստելեկոմի» բաժանորդներին. ամանորյա նոր անակնկալն արդեն գործում է, Ռոստելեկոմ-ի պաշտոնական կայք, հրապարակվել է՝ դեկտեմբերի 28, 2016թ., հասանելի է՝ [https://www.rtarmenia.am/news/view/rostelecom-shant-tv-shant-premium-hd-exclusive]

[8] I have a dream կամ մտորումներ խոսքի ազատության և վճարովի կոնտենտի մասին, Lratvakan.AM, հրապարակվել է հոկտեմբերի 3, 2016թ., հասանելի է՝ [https://www.lratvakan.am/?p=76357]

Նկար 1 (Հետազոտված առցանց ԶԼՄ-ների ժանրային նախապատվությունները (տեքստային հրապարակումներ) 1in.am, Aravot.am, CivilNet.am, News.am կայքերում)



Նկար 2 (Հետազոտված առցանց ԶԼՄ-ների ժանրային նախապատվությունները (մուլտիմեդիա հրապարակումներ) 1in.am, Aravot.am, CivilNet.am, News.am կայքերում)



հատկապես Եվրոպայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Բաժանորդագրությամբ վճարովի բովանդակություն է տրամադրում, լրատվություն տալիս նաև Արմենպրես լրատվական գործակալությունը, չնայած այս դեպքում լսարանն ազատ է գործակալության հաղորդած տեղեկատվությունը առցանց կարդալու առումով: Վճարովի բովանդակությունը ավելի շուտ այլ ԶԼՄ-ների և կորպորատիվ բաժանորդների համար է:

Նկատելի է, որ Հայաստանի մեդիա դաշտի ժամանակակից փուլի մանրամասն հետազոտություն, ուսումնասիրություններ շատ չեն արվում, ինչը բավականաչափ դժվար է դարձնում հետազոտողների աշխատանքը: Տարատեսակ տվյալների բազան չափազանց ուշ-ուշ է թարմացվում: Օրինակ, մինչև այսօր չկա հանգամանալի հետազոտությունը, թե մեդիա

արտադրանքի սպառման հիմնական միջոցները որոնք են Հայաստանում:

Եթե համաշխարհային մեդիա ոլորտում այժմ շատ մեծ է մոբայլ սարքավորումներից՝ սմարթֆոններ, թաբլետներ, մուտքը ԶԼՄ-ների հարթակ, հատուկ բջջային հավելվածներ են ստեղծվում «Android», «iOS» կամ «Windows Phone» օպերացիոն համակարգ ունեցող սարքի՝ դեպի կայք անխափան մուտք ապահովելու համար, ապա շատ հայաստանյան ԶԼՄ-ների դեպքում դեռևս ոչ բոլորն են շարժական սարքերից օգտվողների համար ստեղծել հատուկ հարմարեցված բովանդակություն, որը կախված էկրանի թողտվությունից կարող հստակ և համապատասխանեցված պատկեր ցույց տալ:

Բովանդակային առումով հայկական մեդիան զարգանում է համաշխարհային փորձին համարժեք. այն միտված է կարճ տեքստերին և սյուժեներին: Ըստ փորձագետների՝ անգամ բլոգներն այսօր զիջում են միկրոբլոգներին, քանի որ ներկայիս մեդիա սպառողը շատ օպերատիվ և համառոտ փաստերը գերադասում է արհեստավարժ և երկարաշունչ լրատվանյութերից, վերլուծական հրապարակումներից[1]: Ընդհանրացնելով հայաստանյան մեդիա դաշտի արդյունքները՝ հասկանալի է դառնում, որ հայկական տպագիր և առցանց ԶԼՄ-ների դեպքում վերջին տարիներին նկատելի է բազմաժանր սեփական լրատվության արտադրություն: Չնայած քիչ չեն դեպքերը, երբ տեղի է ունենում նաև գործընկերների հեղինակային արտադրանքի ուղղակի արտատպելու դեպքեր, ինչը միանշանակ սխալ է: Երևույթն իր խիստ բացասական հետևանքն է թողել. ձգտելով ապահովել լրատվական օպերատիվությունը՝ տարեցտարի գնալով հայ լրագրողներն ավելի ու ավելի քիչ են աշխատում սեփական լրատվանյութերի որակի բարելավման վրա:

Հետաքննական լրագրությունը դարձել է չափազանց թանկ հաճույք, մինչդեռ սոցիալական ցանցերի օգտատերերից ուղղակի անձնական կարծիքներ պատճենելով լրատվանյութեր պատրաստելը՝ գնալով ավելի նորաձև է դառնում անգամ հեղինակավոր լրատվամիջոցների համար, ինչը լավագույն ապագա չի կարող կանխագուշակել:

Ցանցային ԶԼՄ-ներից շատերի շրջանում առկա է լրագրողական աշխատանքի հարաբերական ազատություն: Հաղորդակցության գերժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը հատկապես առցանց մեդիայում նկատելի է, թեև լրատվամիջոցներից շատերը դեռ խուսափում են նոր մեդիայի առանձնահատուկ օրենսդրական կարգավորումներից: ԶԼՄ-ները որպես բիզնեսի ենթաճյուղ համեմատաբար դեռևս կայացած չեն Հայաստանում, հետևաբար ժամանակակից մեդիա ինդուստրիայի քաղաքական կախվածությունն առավել քան նկատելի է Հայաստանում:

Ոչ պակաս կարևոր են Հայաստանում լրագրողների աշխատանքային պայմանները: Ընդլայնված հարցում է անցկացրել MEDIA.am-ը[2], որին մասնակցել է 73 լրագրող՝ 53 կին և 20 տղամարդ: Չնայած հարցման արդյունքները գուցե ոչ ամբողջությամբ են փոխանցում լրատվամիջոցներում տիրող իրավիճակը, բայց կարևոր տեղեկություն են հաղորդում արդի փուլի և ընդհանուր մեդիա դաշտի աշխատանքային պայմանների մասին:

Ըստ կատարված հարցման՝ հայաստանյան մեդիայում մասնագիտական ակտիվ գործունեություն իրականացնող լրագրողներն աշխատում են հիմնականում վեցօրյա աշխատանքային գրաֆիկով, օրական 8-10 ժամ, հաճախ չեն ստանում անգամ օրենքով նախատեսված արձակուրդ և հիմնականում չեն վարձատրվում արտաժամյա աշխատանքի համար: Ոմանք աշխատանքային պայմանագիր չունեն և գրանցված աշխատակիցներ չեն: Այսօրինակ պայմաններում որակյալ մեդիայի և բովանդակության կարևորության մասին մտածելը, վստահաբար, արդիական չէ:

Այսպիսով՝ կարող ենք հետևյալ դիտարկումներն անել՝

[1] Առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի մեդիա ինդուստրիայի ներկա վիճակը», նույն տեղում:

[2] Բարսեղյան Ա., Լրագրողներն՝ իրենց աշխատանքային պայմանների մասին, MEDIA.am, հրապարակվել է՝ դեկտեմբերի 13, 2017թ., հասանելի է՝ [https://media.am/Journalists-rights-survey]

- Հայաստանի մեդիայի արդի փուլը աչքի է ընկնում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությամբ,

- առցանց լրատվամիջոցների հաղթարշավն ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում շարունակվում է,

- շարժական տեխնոլոգիաների օգտատերերի թվաքանակի մեծացումը Հայաստանի ԶԼՄ դաշտի փոխակերպումների ժամանակակից փուլը բնորոշող հիմնական գործոններից է,

- նկատելի է ցանցային լրատվամիջոցների, բլոգոսֆերայի և սոցիալական ցանցերի ուժեղ ազդեցություն ոչ միայն լսարանի, այլև ավանդական լրատվամիջոցների գործունեության վրա:

Ամփոփելով՝ Հայաստանի մեդիա դաշտի արդի փուլում առցանց լրատվամիջոցներն առավել օպերատիվ են: Ճկուն, ընտրովի, բազմակողմանի և հասանելի լինելու շնորհիվ վերջիններս ուժեղ մրցակցության մեջ են մտել ավանդական ԶԼՄ-ների հետ, առաջին հերթին՝ տպագիր թերթերի, որոնց սպառումը գնալով նվազում է: Սպառողի կողմից պահանջարկ ունեցող լրատվամիջոցները փորձում են հնարավորության սահմանում օբյեկտիվ տեղեկատվություն ներկայացնել, չնայած հայաստանյան ԶԼՄ-ները որպես բիզնես համեմատաբար կայացած չեն, հետևաբար Հայաստանի մեդիա ինդուստրիայի քաղաքական կախվածություն է նկատվում:

Impact of introduction of technology into election process on voter turnout and election result

Simonyan V.A.
American University of Armenia (Armenia, Yerevan)
vigen_simonyan17@alumni.aua.am

Keywords: Serj Sargsyan , Raffi Hovhannisyan ELQ, PPA, election, voter Turnout, regression analysis

Նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունավետությունը ընտրությունների արդյունքերի և ընտրողների մասնակցության վրա

Սիմոնյան Վ.Ա.
Հայաստանի Ամերիկյան Համալսարան /Հայաստան, Երևան/
vigen_simonyan17@alumni.aua.am

Ամփոփում: Մենք վերանայել ենք Ընտրությունների Միջազգային Դիտորդական Առաքելության (ԸՄԴԱ) եւ ԵԱՀԿ / Ժողովրդավարական Հաստատությունների եւ Մարդու Իրավունքների Դիտորդական Առաքելության զեկույցները 2012 թ. խորհրդարանական 2013թ. նախագահական և 2017թ. նախագահական ընտրությունների նախնական վերլուծությունները: Այս զեկույցներում մենք կարեւորեցինք հայտնաբերված խոշոր մեղադրանքները եւ ընտրությունների անցկացման նոր ընտրական օրենսգրքի զարգացումները: Հայ ժողովրդի պատմության ընթացքում տեղի ունեցած խոշոր մեղադրանքը ընտրական ցուցակներն էին, որոնք միշտ քննադատվել են ընդդիմադիր կուսակցությունների, միջազգային առաքելությունների եւ քաղաքացիական հասարակության կողմից: Ունենալով իրավասու ընտրողների խոշոր ցուցակ բերում էր իր հետ բազմակի ընտրելու և լցոնումների ռիսկեր: Մեկ այլ խնդիր որը տեղի ունեցավ 2012 և 2013 թվականներին թիկնապահների բացակայություններ բազմակի քվեարկությունների դեմ: Ավելին, կար ընտրությունների հաշվարկի թափանցիկության բացակայություն Երևանից դուրս գտնվող տարացքներում: Հետեւաբար 2017 ընտրությունների համար նախատեսված ընտրական բարեփոխումը նպատակաուղղված է այդ հարցերը լուծելու նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով, ինչպես օրինակ, ընտրողների անձի հաստատման սարքերը եւ վեբ-տեսախցիկները: Այս բարեփոխումների ազդեցությունը գնահատելու համար արվել է էկոնոմետրիկ վերլուծություն և ՔՖԱ վերլուծությունները 2008թ. Նախագահական ընտրությունների համար: Այս ամենին ավելցրած տարվել են համեմատություններ հողվածուն քննարկվող ընտրությունների արդյունքների միջև օգտագործելով էկոնոմետրիկ մոդելներ:
Վճռորոշ բառեր՝ Սերժ Սարգսյան, Րաֆֆի Հովհաննիսյան, ԵԼՔ, ԲՀԿ, ընտրություն, ընտրողների մասնակցություն, ռեգրեսյոն վերլուծություն

Влияние внедрения технологии в избирательный процесс на явку избирателей и результаты выборов

Симонян В.А.
Американский Университет Армении (Армения, Ереван)
vigen_simonyan17@alumni.aua.am

Резюме: Мы рассмотрели доклады Международной Миссии по Наблюдению за Выборами (ММНВ) и Миссии БДПЧ / Бюро по Демократическим Институтам и Правам Человека по наблюдению за парламентских выборах 2012 года в президентских выборах 2013 года и предварительных докладах парламентских выборов 2017 года. В этих отчетах были обнаружены основные утверждения и разработки новых кодексов избирательной системы для проведения выборов. Главным утверждением в ходе истории Армении были избирательные списки избирателей, имеющих право голоса, которые всегда подвергались критике со стороны оппозиционных партий, международных миссий и гражданского общества. Наличие чрезмерного списка избирателей, имеющих право голоса, имело риск предоставить возможности для многократного голосования и набивки голосов в боксах. Еще одной серьезной проблемой, имевшей место в 2012 и 2013 годах, было отсутствие гарантий против многократного голосования. Другой проблемой была непрозрачность подсчета голосов, особенно на станциях за пределами Еревана. Поэтому избирательная реформа, предназначенная для выборов в 2017 году была направлена на решение этих проблем путем внедрения новых технологий, таких как устройства авторизации

избирателей и веб-камеры. Эта ситуация мошенничеством с голосованием и новыми изменениями в кодексе было мотивом для проведения эконометрических исследований по выяснению того, как изменения в избирательном кодексе повлияли на предотвращение подобных утверждений, используя методологии и концепции, представленные в Политическом Форуме Армения доклады о президентских выборах 2008 года. Боле того было проведена сравнения между иследоваемых выборах использую эконометрические модели.
Ключевые слова: Серж Саргсян, Раффи Оганесян, ЕЛК, ППА, явка избирателей, регрессивный анализ.

1. Data Of The Research Paper:

The data on election results for years 2012, 2013 and 2017 was obtained from the official website of the state central election committee-election.am. The number of voting stations in the year 2012 was 1982, in 2013 was 1988 and in 2017 was 2003 rows. After that we have calculated, analyzed and presented the voter turnout (VT) in each electoral station and the vote rates received by each party during 2012 and 2017 parliamentary elections and by each candidates in 2013 presidential elections. The participation rate/voter turnout in each station was calculated by taking into consideration the number of eligible voters and the number of voters who came to the election.

According to data presented by Central Electoral Commission in Armenia the number of eligible voters on 2017 parliamentary elections was 2,585,134, out of which 1,575,786 or 60.86% participated to elections. On 2012 parliamentary elections 2,522,962 people were eligible out of which 1,572,518 or 62.33% participated. On 2013 presidential elections 2,528,465 voters were eligible and 1,518,407 or 60.05% participated. The table below summarizes the parties that are considered in the paper.

Party	Short description
ELQ	ELQ political party participant of 2017 elections, English translation EXIT
ANC	Armenian National Congress Party, Participant of 2012 and 2017 elections
TA	Tsarukyan Alliance led by the founder of Prosperous Armenia Party, Participant of 2012 and 2017 elections
PPA	Prosperous Armenia Party led by the founder of Tsarukyan Alliance, Participant of 2012 and 2017 elections
ARP	Armenian Renaissance Party renamed version of OEK- Orinac Erkir Party, Participant of 2012 and 2017 elections
OEK	Orinac Erkir Party, currently named ARP- Armenian Renaissance Party, Participant of 2012 and 2017 elections
ORO	Ohanyan, Raffi, Oskanyan alliance affiliated with the Heritage Party and Raffi Hovhannisyan presidential candidate, Participant of 2012, 2013 and 2017 elections
HP	Heritage Party affiliated with ORO-Ohanyan, Raffi, Oskanyan alliance and Raffi Hovhannisyan presidential candidate, Participant of 2012, 2013 and 2017 elections
RPA	Republican Party of Armenia, affiliated with its party leader Serj Sargsyan also their presidential nominee, Participant of 2012, 2013 and 2017 elections. Also, this party is used to for better visual comparison of Serj Sargsyan's candidacy
ARA	Armenian Revolutionary Alliance Party, participant of 2012 and 2017 election
ORO	Ohanyan, Raffi, Oskanyan alliance is used to for better visual comparison of Raffi Hovhannisyan's candidacy

2. Voter Turnout Analysis

2.1. The testing of voter turnout distribution of the 2012 elections has shown following results:

- In Armenia (Figure 1), Yerevan (Figure 2) and outside of Yerevan (Figure 4) the distribution of voter turnout is close to normal with minor fast increases and slow decays, if we disregard some outliers on the right (100% voting turnout). This testing could indicate that the political commitment and new electoral code had possible positive influence on preventing fraud.
- If we compare the voting turnout and voting share of a party, we see that RPA (Figure 14) votes are close to the normal distribution, but have fast increase and slow decay while the voter turnout of Prosperous Armenia party (Figure 3) and Heritage Party (Figure 6) have even higher increase and slower decay with fatter left tale. This indicates that high frequency of voter participation could have minor negative effects mainly on other parties than the RPA and the faster increases and slower decays indicate possibility of falsification of the ballot counting process possibly in favor of RPA.

2.2. The testing of voter turnout distribution of the 2013 elections has shown following results:

- In Armenia (Figure 7) the distribution of voter turnout has a fast increase and a slow decay. This inconsistency with normal distribution

indicates that there is a probability of voter turnout fraud.

- In Yerevan (Figure 8) the distribution of voting turnout is close to normal, if we disregard some outliers on the right (100% voting turnout) and the very high frequency of some voting turnouts. On the other hand, voting distribution outside of Yerevan (Figure 10) shows fat right tale compared to the left one, which indicates the probability of voter turnout fraud is higher in the regions of Armenia.
- If we compare the voting turnout and voting share of a candidate, we see that Serj Sargsyan's votes are distributed more to the right having fatter right tale and a slow decay while Raffi's more to the left having fatter left tale and slow increase. This indicates that high frequency of voter participation could have been in favor of Serj Sargsyan. From this we can conclude that it could have been possible to fake ballot counting and voter turnout in favor of Serj Sargsyan.




Figure 1: Density function of Voting Turnout (VT1) in Armenia




Figure 2: Density function of Voting Turnout in Yerevan




Figure 3: Density function of voting share of Bargavach Armenia Party




Figure 4: Density function of Voting Turnout out of Yerevan




Figure 5: Density function of voting share of Republican Party of Armenia




Figure 6: Density function of voting share of Heritage Party




Figure 7: Density function of Voting Turnout (VT1) in Armenia




Figure 8: Density function of Voting Turnout in Yerevan




Figure 9: Density function of voting share for Serj Sargsyan (SS2)




Figure 10: Density function of Voting Turnout out of Yerevan




Figure 11: Density function of voting share for Raffi Hovhannisyan (RH2)

2.3. The testing of voter turnout distribution of the 2017 elections has shown following results:

- In Armenia (Figure 12), Yerevan (Figure 13) and outside of Yerevan (Figure 15) the distribution of voter turnout is close to normal, if we disregard some outliers on the right (100% voting turnout). This testing could indicate that investing new technologies had possibly positive influence on preventing voter turnout fraud.
- If we compare the voting turnout and voting share of a party, we see that RPA (Figure 14) votes are close to the normal distribution, but has fast increase and normal decay while the voter turnout of ELQ party (Figure 17) and Tsarukyan alliance (Figure 16) have fast increase and slow decay with fatter left tale. This indicates that high frequency of voter participation could not have an affect on the voting distributions. However, fast increase of all candidates and slow decay of only ELQ party and Tsarukyan alliance could indicate possibility of minor falsification in the ballot counting processes.




Figure 12: Density function of Voting Turnout (VT1) in Armenia




Figure 13: Density function of Voting Turnout in Yerevan




Figure 14: Density function of voting share Republican Party of Armenia (HHK2)




Figure 15: Density function of Voting Turnout out of Yerevan




Figure 16: Density function of voting share for Tsarukyan Alliance (TSD2)




Figure 16: Density function of voting share for ELQ party

3. Econometric Model And Estimation Results:

Due to new technological and legislative advancements were implemented in 2017 parliamentary elections, we take that year as a benchmark for making comparisons between elections. In this analysis we will use a test proposed by Sobianin and Sukhovolskiy which considers the relationship between the share of party/individual candidate and voter turnout. According to them, the slope coefficient of Ordinary Least Square (OLS) regression of party's/candidates share of total eligible voters on turnout should be positive and less than one. In addition, the authors argue that if the coefficient is higher than one it would indicate a possibility of ballot stuffing to support the party/candidate with that coefficient. Moreover, the coefficient more than one also indicates that there may have been voting counting fraud: votes were subtracted from other candidates and added to the party/candidate in question.

Also, we constructed two datasets where the first one contains data for 2012, 2017 elections and the second one for 2013, 2017 elections. To be able to make comparisons we kept those parties/candidates which appear both in 2012 and 2017 for first dataset and in 2013 and 2017 first second dataset. In should be noted that even though ELQ party does not appear in 2012 elections we kept it because of interesting results.

As an addition to the model suggested by Sobianin and Sukholskiy we added a dummy variable for an election and we created an interaction variable between that variable and voting turnout. The final model is

$$\frac{V_{ij}}{E_j} = \beta_0 + \delta_0 D + \beta_1 VT + \delta_1 DVT$$

where: V_{ij} is the number of votes for the i party/candidate and j election year,
E_j – total eligible voters for j election year,
D – Dummy variable, VT – Voting Turnout,
DVT – interaction variable between D and VT.

3.1. Regression results analyzing 2012 and 2017 elections:

The above described model is used for describing the data. At first multi-collinearity was checked for the independent variables using VIF test. In particular, it was checked for the case of Republican Party of Armenia and the results indicated an issue of multi-collinearity. However, as the multi-collinearity was on dummy variable and the interaction term between DVT it was omitted. Secondly, heteroscedasticity tests were done (using hettest) on all regressions and strangely, in all cases heteroscedasticity was present. To solve for heteroscedasticity robust errors were taken in all cases. All these results are the same for comparative analyzes between elections in 2013 and 2017.

Table 1: Regression analysis results summary

Parliamentary 2017*

Party	Intercept	Coefficient	t stat
ELQ	0.112143	-0.117676	-14.58
TA	0.073339	0.1447139	6.22
ARP	0.005186	0.0289024	3.51
ORO	0.005535	0.0121636	1.11
RPA	-0.20424	0.8388489	27.8
ARA	-0.02399	0.1098188	8.11

Parliamentary 2012

Party	Intercept	Coefficient	t stat
ANC	0.076062	-0.0609176	-10.79
PPA	0.0900352	0.1328413	5.3
OEK	0.0129095	0.0320969	3.73
HP	0.0887767	-0.0928965	-19.53
RPA	-0.3155339	0.9541082	32.5
ARA	0.0025603	0.05145	5.18

**Significances for 2017 were calculated using the same do file and the same dataset but the dummy variable was reversed: 2017 data was given 0 value and 2012, 1.*

First it should be noted that the coefficient of ORO (2017) is not significant, therefore we will not implement analyzes on that data. Overall, the results go along with the expectations for Sobianin and Sukholskiy. However, for the cases of ELQ (2017), ANC (2012) and ZHK (2012) the value is negative. That suggests a possibility that votes were taken from those parties and given to other ones. The coefficient of RPA decreased by 0.11 which indicates that for an additional 100 votes the party received 11 votes less in 2017. That can be considered as an indicator of fairer elections.

Table 2: Summary of coefficients of the parties for certain levels of voting shares

	Voting Turnout < 90%	Voting Turnout < 80%	Voting Turnout < 70%	Voting Turnout < 60%
TA (2012)	*0.173*	*0.202*	*0.185*	*0.131*
RPA (2012)	*0.911*	*0.868*	*0.742*	*0.449*
ORO (2012)	*-0.0997*	*-0.102*	*-0.0671*	*0.0565*
TA (2017)	*0.193*	*0.232*	*0.258*	*0.133*
RPA (2017)	*0.786*	*0.739*	*0.71*	*0.62*
ELQ (2017)	*-0.125*	*-0.125*	*-0.0758*	*0.15*

From the Table 2 it can be noticed that the lower is the level of voting turnout the lower is the coefficient of RPA for both elections while TA does not have any obvious pattern. The result for RPA indicates that the party was generally favored in stations were voting turnout was high in both election years. Alternative possible explanation is that in high voting turnout stations there was ballot stuffing in favor of RPA. Moreover, the results for ORO (2012) and ELQ (2017) indicate that there is possibility of stealing their votes in stations with above 60% voting turnout rates. So, even though 2012 and 2017 elections are assumed to be more or less fair especially in terms of voter turnout fraud prevention but the possible risk of ballot stealing still remained actual for both elections. However, 2017 has lower indications of possible ballot stealing compared to 2012.

3.2. *Regression results analyzing 2013 and 2017 elections*:

The same data analyzes as for the previous case was done and results are identical: there is multi-collinearity because of dummy variables and robust errors were taken. Though 2013 elections are of a president and 2017 is for parliament, the comparable analysis is valid due to constitutional changes making this new parliament the strongest power holder in the country from 2018. As Raffi Hovhannisyan is one of the co-founders of ORO alliance, we have considered the alliance comparable to him. The same applies to Serj Sargsyan, who is the president RPA which has endorsed his candidacy for the president.

The coefficient of ORO is negative in 2013 which indicates that there is a possibility of ballet counting fraud. In addition, the 1.41 coefficient of RPA reaffirms the possibility of fraud because it

means that for every additional 100 votes RPA received 141. To check whether RPA coefficient is significantly 1 or not a one tailed t test was done, with $H0: coefficient \leq 1$ and $H1: coefficient > 1$. $t = \frac{1.41-1}{0.03} = 13.7$. Thus H0 is rejected in favor of H1 at 1% significance. Therefore, with 99% of significance we can state that the coefficient of RPA is more than 1.

Table 3: Regression analysis results summary

Presidential 2013

Party	Intercept	Coefficient	t statistic
ORO	0.408	-0.34	-21.2
RPA	-0.493	1.41	76.8

Parliament 2017

Party	Intercept	Coefficient	t statistic
ORO	0.0055351	0.0121636	1.11
RPA	-0.204239	0.8388489	27.8

In contrast, in 2017 elections are fair from the perspective of RPA. The difference between fairness can be quantified by taking the difference between coefficients of RPA which 0.572. That indicates that in comparison to 2013 RPA received 57 less votes for every additional 100 voters.

Table 4: Summary of coefficients of the parties for certain levels of voting shares

	Voting Turnout < 90%	Voting Turnout < 80%	Voting Turnout < 70%	Voting Turnout < 60%
ORO (2013)	*-0.326*	*-0.263*	*-0.123*	*0.166*
RPA (2013)	*1.39*	*1.323*	*1.17*	*0.76*
RPA (2017)	*0.786*	*0.739*	*0.71*	*0.62*

To recheck the possibility of voter turnout fraud, the coefficients of candidates were calculated for certain voting turnout levels.

As can be seen OROs coefficient increases in 2013 as stations with high voting turnouts are taken out. On the other hand, the coefficient of RPA decreases in 2013. This implies a possibility that in stations were voting turnout was high, votes were taken from ORO and to RPA. In some sense, it can also be considered that as we take out high voting turnout stations elections become fairer. In comparison we do not observe such pattern for 2017. One reason that could have resulted in such difference between fairness is the effect of technological and legislative advancements.

4. Conclusion Of The Research Paper:

To sum up, in this research paper we have reviewed 2012 parliamentary, 2013 presidential and 2017 parliamentary election results by conducting econometric analysis of the major highlighted allegations discovered by the observation and the influence of the technological and legislative advancements. In specifically, we have conducted density testing for all the three electoral data in order to understand how the real image of voter turnout distribution compared to the normal is. Moreover, we have also tested the density of voting shared with the voter turnout distribution for understanding graphically how the voter turnout affected on the voting share of a candidate or a party. Even visually, we could see that in 2017, we had the closest normal distribution, which can be justified with the investment of new technologies and electoral code, which had possibly decreased the likelihood of voter turnout and ballot counting frauds. 2012 parliamentary was also more or less close to normal distribution, which was justified by higher level political commitments, but 2013 elections in this case were the most abnormal.

We have gone further analyzing the reported major allegation effect on the electoral data by using multiple regression analysis model developed by the Policy Forum Armenia, which has also shown 2017 as the most fair elections and 2013 the least. This regression model has shown that in 2013 President Serj Sargsyan has received about 141 votes per each 100 voters, which can present the effect of the likelihood of voter turnout and ballot counting frauds. On the other hand ELQ was the only party in the 2017, which had negative number for each additional 100 voters, which shows that though there was technological and legislative advancements still ballot counting frauds could have possibly happen.

In order to have better comparative analysis of these elections, we have developed our own model using the knowledge gained from the econometrics course, using the Introductory Econometrics textbook of Jeffrey M. Wooldridge. As the major advancements were implemented in 2017, we have chosen this year, as a benchmark to compare with 2012 parliamentary and 2013 presidential elections. Here is important to mention that though 2013 elections are of a president and 2017 is for parliament is anyways comparable due to constitutional changes that makes this new parliament the strongest power holder in the country from 2018. From the comparative analysis we have seen improvements of the data for both elections indicating less possibility of voter turnout and ballot counting fraud in 2017. As the main conclusion of

this paper, we can say that the technological and legislative advancements have played positive influence on preventing two of major voting irregularities in the electoral stations leaving the Armenian public to fight against other type of election frauds of voter-buying and abuse of power.

References

1. Policy Forum Armenia, 2008, *Armenia's 2008 presidential election: select issues and analysis.* Policy Forum Armenia
2. International Election Observation, 2012, *Statement of preliminary findings and conclusions*, OSCE IEOM
3. OSCE Office for Democratic Institutions and Human Rights, 2012, *Interim Report,* OSCE, IEOM
4. International Election Observation, 2013, *Statement of preliminary findings and conclusions*, OSCE IEOM
5. OSCE Office for Democratic Institutions and Human Rights, 2013, *Interim Report,* OSCE IEOM
6. OSCE Office for Democratic Institutions and Human Rights, 2017, *Interim Report,* OSCE IEOM
7. International Election Observation, 2017, *Statement of preliminary findings and conclusions*, OSCE IEOM

Հայաստանի հարևան երկրների տնտեսությունների ներկա գործընթացները և հիմնախնդիրները

Մանուկյան Ս.Ֆ., Բախշյան Ս.Մ.
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Հայաստան, Երևան)
sarkis.ar@gmail.com; bakhshyan1997@mail.ru

Վճռորոշ բառեր՝ գլոբալ տնտեսություն, տնտեսական հիմնախնդիրներ, ՀՆԱ-ի աճ, գնաճ, գործազրկություն, վերաֆինանսավորման տոկոսադրույք, պետական պարտք

Современные процессы и проблемы экономики в соседствующих с Арменией странах

Манукян С.Ф., Бахшян С.М.
Национальный политехнический университет Армении (Армения, Ереван),
sarkis.ar@gmail.com; bakhshyan1997@mail.ru

Резюме: Процессы и события экономики в соседних для Армении странах не только интересны для проведения параллелей и сравнений, но и прямо или косвенно влияют на экономику Армении, особенно по вопросам национальной безопасности. Армения имеет тесные торгово-экономические отношения с Ираном и Грузией, опосредованные отношения по торговле – с Турцией и нулевые отношения – с Азербайджаном. Во многих случаях в экономике Армении существуют экономические процессы и тенденции, характерные для соседних стран. Ознакомление с этими процессами и тенденциями, а также их оценка помогают правильно определиться в предприятии дальнейших шагов и стратегии развития. Ниже приведены краткие характеристики национальной экономики соседних стран за 2017 и текущий годы, а также макроэкономические проблемы этих стран.
Ключевые слова: глобальная экономика, экономические проблемы, рост ВВП, инфляция, безработица, ставка рефинансирования, государственный долг.

Current processes and problems of the economies of Armenia's neighboring countries

Manukyan S.F., Bakhshyan S.M.
National Polytechnich University of Armenia (Armenia, Yerevan),
sarkis.ar@gmail.com; bakhshyan1997@mail.ru

Abstract: The economic processes and events taking place in the economies of our neighbor countries are interesting not only to draw parallels and make comparisons, but they also directly or indirectly affect our economy, especially our national security. Armenia has close trade and economic relations with two of these neighbors, Iran and Georgia, mediated economic relationships with Turkey, and almost zero relations with Azerbaijan. In the same way, in many cases, Armenia has economic trends and processes similar to its neighbors. Acknowledgement and assessment of these developments helps to make the right decisions in order to develop further steps and strategy. Below are the short characteristics of the national economies of these countries in 2017 and in the current year, and the problems in their economies.
Keywords: global economy, economic problems, GDP growth, inflation, unemployment, interest rate, public debt.

Հանրապետության հարևան երկրների տնտեսություններում տեղի ունեցող տնտեսական գործընթացները և իրադարձությունները, ոչ միայն հետաքրքիր են զուգահեռներ և համեմատություններ անցկացնելու համար, այլ նույնպես ուղղակի կամ անուղղակի ազդում են մեր տնտեսության, առավել ևս ազգային անվտանգության վրա: Այդ հարևաններից երկուսի՝ Իրանի և Վրաստանի հետ Հայաստանը ունի սերտ առևտրատնտեսական հարաբերություններ, Թուրքիայի հետ միջնորդավորված առևտուր, իսկ Ադրբեջանի հետ զրոյական հարաբերություններ: Հայաստանի տնտեսությունում էլ շատ դեպքերում առկա են այնպիսի տնտեսական միտումներ և գործընթացներ, որոնք բնորոշ են մեր հարևաններին: Տեղի ունեցող այդ զարգացումներին ծանոթանալը և գնահատականը օգնում է ճիշտ կողմնորոշվել նաև մեր երկրի հետագա քայլերը և ռազմավարությունը մշակելու համար: Ստորև կներկայացվի այդ երկրների ազգային տնտեսություններում 2017թ.-ին և ընթացիկ տարում տեղի ունեցող գործընթացնե-

րը և տնտեսություններին բնորոշ հիմնախնդիրները:

Ընդհանուր գործընթացները:

Համաշխարհային տնտեսությունը 2017թ.-ին տարբերվեց նախորդ տարվանից առավել բարձր տնտեսական ակտիվությամբ, որտեղ գլոբալ տնտեսական աճը ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի նախնական տվյալների կազմեց մոտ 3,7%[1]: Ընդհանուր առմամբ նախորդ տարի համաշխարհային տնտեսության մեջ նկատվեց դրական բեկում և վիճակը կարելի է գնահատել բավարար: Աճ գրանցող Եվրամիության, Չինաստանի և ԱՄՆ-ի տնտեսությունների աճը զգալիորեն նպաստում է մյուս զարգացող երկրների տնտեսություններին: Նախորդ տարին բարենպաստ էր նաև Հայաստանի և իր որոշ հարևանների տնտեսությունների համար: Եթե հետևենք տվյալ երկրների պաշտոնական, ինչպես նաև միջազգային մասնագիտացված կառույցների վիճակագրությանը, ապա Հայաստանը, Վրաստանը և Թուրքիան գրանցել են բարձր տնտեսական աճ, իսկ Ադրբեջանը՝ գրեթե զրոյական աճ:

Նշանակալի ազդեցություն ունեցավ Իրանի, Ռուսաստանի և Ադրբեջանի համար, OPEC-ի և նրա կազմի մեջ չմտնող նավթ արդյունահանող երկրների համաձայնությունը նավթի արդյունահանման ծավալների կրճատման վերաբերյալ: Դա բերեց 2017թ.-ից նավթի գների աճին, իսկ դա էլ իր հերթին նավթ արտահանող երկրների տնտեսական վերականգնմանը և ազգային արժույթների ուժեղացմանը: Հիշեցնենք, որ 2016թ.-ի վերջին OPEC-ը և կարտելից դուրս նավթ արդյունահանող 11 երկրներ պայմանավորվեցին օրական 1,8 մլն. բարելով կրճատել նավթի արդյունահանման օրական ծավալները՝ համաշխարհային շուկայում նավթի առաջարկի և պահանջարկի ծավալների հավասարակշռություն ապահովելու համար, և դա շարունակվելու է մինչև 2018թ.-ի վերջը:

Մեր հարևաններից Վրաստանի տնտեսական աճին նպաստեց մետաղների գների աճով պայմանավորված արտահանման կտրուկ աճը, դրամական փոխանցումների հոսքի ավելացումը և ներգնա զբոսաշրջության եկամուտների աճը[2]: Մեր մահմեդական երեք հարևաններից մեկի՝ Թուրքիայի տնտեսական աճը պայմանավորված էր ԵՄ-ի կողմից պահանջարկի աճով, դրա հետևանք՝ արտահանման աճով և ֆիսկալ ընդարձակման քաղաքականությամբ: Քաղաքական անկայունությունը, լիրայի շարունակվող արժեզրկումը և բարձր գնաճային ճնշումները սակայն չլքեցին թուրքական տնտեսությանը: Ռուսաստանը ապահովեց 1,5% աճ, որին նպաստեց նավթի գների աճը, իսկ դրա արդյունքում բարելավեց արտաքին առևտրի հաշվեկշիռը, գնաճը ցածր էր և ռուբլու փոխարժեքը կայունացավ: Այս դրական զարգացումները փոխանցվեցին Հայաստան՝ դրամական փոխանցումների և առևտրի խողովակներով: Հայաստանի տնտեսությունը օգտվեց նաև մետաղների աճող գներից, որը խթանեց արդյունաբերության և արտահանման աճին: Ադրբեջանը նավթի գների աճի հաշվին կարողացավ դուրս գալը տնտեսական անկումից, սակայն իրական ՀՆԱ-ի աճը շատ ցածր է եղել: Իրանը կարողացավ խելացիորեն օգտվել նավթի գների աճից և սանկցիաների թուլացումից, ապահովեց տնտեսական աճ, սակայն չկարողացավ խուսափել սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված հուզումներից, գնաճի միտումներից և ազգային արժույթի արժեզրկումից:

Վրաստան: Վրաստանի ՀՆԱ-ն նախորդ տարի կազմել է 15,1 մլրդ. ամերիկյան դոլար: Վրաստանի համախառն ներքին արդյունքի աճը՝ 5%, որը զգալիորեն պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության և ծառայությունների բարձր աճով: Գյուղատնտեսությունը անկում է գրանցել 2,7%-ով[3]: Գործազրկությունը կազմել է 11,8%: Ներդրումները կազմել են՝ 1,86 մլրդ. ամերիկյան դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է 260 մլն. դոլարով:

Ընդհանուր առմամբ, 2017թ.-ը լավ տարի էր Վրաստանի համար: Դա նկատելի էր արտահանման և ներդրումների աճով, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտի ցուցանիշների զգալի առաջընթացով: Մտահոգիչ է համախառն արտաքին պարտքի ցուցանիշը, որն

[1]Перспективы развития мировой экономики, www. imf.org

[2] The Georgian economy in 2017 – a year in review, https://www.finchannel.com/opinion/analysis-3/71565-the-georgian-economy-in-2017-a-year-in-review

[3] National Statistics Office of Georgia, http://geostat.ge/index.php?action=page&p_id=119&lang=eng

արդեն գերազանցում է 15,7 մլրդ. ամերիկյան դոլարը[4]: Իսկ պետական պարտքը գերազանցում է 6,6 մլրդ. դոլարը, որտեղ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է 43,9%: Ընթացիկ հաշվի պակասորդը (դեֆիցիտ) համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նկատմամբ և պետական բյուջեի պակասորդը ՀՆԱ-ի նկատմամբ նույնպես բարձր ցուցանիշներ են գրանցել նախորդ տարի՝ 4% և 13,3% համապատասխանաբար:

Վրաստանի կառավարությունը շարունակում է քայլեր անել փոքր և միջին բիզնեսի զարգացման, արտահանման դիվերսիֆիկացիայի, բիզնեսի կողմից ֆինանսների ձեռք բերման հեշտացման և ինովացիաների խթանման վրա: Սպառողական և գործարար վստահության բարելավումը, պետական ծախսերի և մասնավոր վարկերի աճը, ինչպես նաև կորպորատիվ եկամտահարկի բարեփոխումները, խթանում են ներքին ներդրումների և սպառման աճին: Վրաստանը բարելավում է իր դիրքերը միջազգային ֆինանսական վարկանիշներում, որն էլ իր հերթին լրացուցիչ խթան է հանդիսանում Վրաստանի նկատմամբ վստահության աճի և ներդրումների հոսքի համար: Բացի այդ, Եվրամիության և Ռուսաստանի տնտեսական ակտիվացումը վրացական տնտեսության վրա դրական ազդեցություն ունեցավ:

Արտաքին առևտուր: Վրաստանի արտաքին առևտուրը դրական դինամիկա գրանցեց, որի շրջանառությունը աճել է 13,8%-ով: Արտահանումը աճել է 29,1%-ով, հասնելով 2,7 մլրդ. դոլարի, ներմուծումը՝ 9,4%-ով, կազմելով՝ 7,9 մլրդ. դոլար: Առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 5,2 մլրդ. դոլար: Վրաստանի արտահանման կառուցվածքում ամենամեծ բաժինը կազմում են Եվրամիությունը և Ռուսաստանը[3]: Արտահանման խթանումը հիմնականում պայմանավորված է արտաքին պահանջարկի բարելավման պայմաններով և մետաղների գների աճով՝ ֆեռոհամաձուլվածքների և պղնձի գները զգալիորեն աճել են նախորդ տարի: Արտահանման աճի մյուս հիմնական ապրանքներն են՝ ավտոմեքենաների վերաարտահանումը (+41% տարեկան), գինին (+50,6% տարեկան), դեղամիջոցները (+30,9% տարեկան) և սպիրտային խմիչքները (+37,8% տարեկան)[2]: Սակայն վրացական արտահանման կառուցվածքը դեռևս բնութագրվում է ցածր դիվերսիֆիկացիայով, տասը արտահանման ապրանքներին բաժին են ընկել ընդհանուր արտահանման 63,3%-ը:

Ներմուծման կառուցվածքը ավելի դիվերսիֆիկացված է, ներմուծման ամենախոշոր ապրանքները կազմել են ընդհանուր ներմուծման 34,8%-ը: Ակցիզային հարկի ավելացումը զգալի ազդեցություն է ունեցել վառելիքի ներմուծման ծավալների նվազման վրա:

2017 թ.-ին առևտրի աշխարհագրական կազմը նույնպես փոխվել է: Դեպի ԱՊՀ երկրներ արտահանումը աճել է 59,9%-ով և կազմել է ընդհանուր արտահանման 43,3%-ը: Այս աճը հիմնականում պայմանավորված էր արտահանման աճով դեպի Ռուսաստան (+91,3%) և Ադրբեջան (+78,1% տարեկան): Արտահանումը դեպի ԵՄ երկրներ աճել է 13,2%-ով, իսկ մյուս երկրներ՝ 12%-ով: Վրաստանին դեռևս ժամանակ է պահանջվում ԵՄ-ի հետ ներդաշնակեցման գործընթացը ավարտելու համար՝ լիարժեք օգտվելու Եվրամիության հետ առևտրի ընձեռնած հնարավորություններից:

Գնաճ: 2017 թ.-ին տարեկան միջին գնաճը կազմել է 6%: Գնաճի վրա ազդել են հետևյալ գործոնները՝ վառելիքի, ծխախոտի և մեքենաների ներկրման ակցիզային հարկերի աճը, միջազգային շուկայում վառելիքի գների աճը: Դա պատճառ դարձավ տրանսպորտի գների բարձրացմանը, ինչպես նաև անուղղակի կերպով ներքին արտադրական ծախսերի աճին: Բացի այդ 2015-2016թ.-ին վրացական լարիի անվանական արժեզրկումը գործընկեր երկրների ազգային արժույթների նկատմամբ, նույնպես նպաստել էր ներմուծվող ապրանքների գների բարձրացմանը, դա էլ իր հերթին գնաճի վրա:

Բանկային հատված: Բանկային հատվածի եկամուտը աճել է 13%-ով: Առևտրային բանկերի կողմից ձեռնարկություններին և տնային տնտեսություններին տրամադրված ընդհանուր վարկերը աճել են 15,5%-ով: Այս աճը հիմնականում պայմանավորված է սպառողական վարկերով, ինչը իր հերթին աճել է 20,3%-ով: Բիզնես վարկերը 2017 թ.-ին աճել են 10,2%-ով: Նվազում է նաև դոլարայնացման մակարդակը բանկային համակարգում՝ դոլա-

[4] Внешний долг Грузии – насколько тревожен этот груз, https://sputnik-georgia.ru/reviews/20180301/239506529/Vneshnij-dolg-Gruzii-naskolko-trevozhen-jetot-gruz.html

րային ավանդների տեսակարար կշիռը նվազել է 5,8%-ով, իսկ վարկերինը իր հերթին նվազեցրել են 7,5%-ով: Այն փաստը, որ դոլարայնացման մակարդակը տարեվերջին նվազել է, չնայած լարիի անվանական փոխարժեքի տատանումներին, ցույց է տալիս, որ Վրաստանի ազգային բանկի կողմից իրականացվող մակրոտնտեսական մեխանիզմները ցանկալի արդյունք են ունեցել[2]: Միևնույն ժամանակ վարկավորման տոկոսադրույքները ազգային արժույթով և արտարժույթով ավելի են էժանացել: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը կազմում է 7,25%:

Բնակչության պարտքը շարունակել է աճել: Տնային տնտեսությունների պարտքը վերջին տարիներին աճել է. 2017 թ.-ի 3-րդ եռամսյակում հասնելով 31,9%-ի ՀՆԱ-ի կառուցվածքում, որը 4%-ով բարձր է, քան 2016թ.-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ: Չնայած տնային տնտեսությունների պարտքային ցուցանիշների աճին, չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի կառուցվածքում նվազել է: Դա կարող է մասամբ բացատրվել առևտրային բանկերի վարկավորման խիստ չափանիշներով:

Փոխանցումներ: Ընդհանուր դրամական փոխանցումների ծավալը 2017 թ.-ին կազմել է 1,4 մլրդ. դոլար, որն ավելացել է 19,8%-ով: Դեպի Վրաստան դրամական փոխանցումների հիմնական աղբյուրներն են Եվրամիությունը և Ռուսաստանը (համապատասխանաբար՝ 31% և 33%): Այսպիսով, դրամական փոխանցումները լրացուցիչ արտաքին գործոններից մեկն էր, որը խթանեց վրացական տնտեսական աճին: Բացի այդ, դրամական փոխանցումները երկրի ներսում արտարժույթի ներհոսքի աղբյուր են և կարևոր են լարիի փոխարժեքի կայունության համար:

Զբոսաշրջություն: 2017թ.-ը հաջող էր Վրաստանի համար միջազգային զբոսաշրջության տեսանկյունից: Զբոսաշրջությունը տնտեսական աճի գլխավոր խթաններից է և արտարժույթի ներհոսքի հիմնական աղբյուրներից մեկը:

2017թ.-ին Վրաստան է մուտք գործել 7,5 միլիոն այցելու, որը 18,8%-ով բարձր էր նախորդ տարվա ցուցանիշից: Այցելուների 77,8%-ը Վրաստան մուտք է գործել ցամաքով, 20,7%-ը՝ օդային ուղիներով, 1%-ը՝ երկաթգծով և 0,5%-ը՝ ծովով: Ինչպես սովորաբար Վրաստան այցելողների ամենաբարձր բաժինը կազմել են հարևան երկրներից՝ Հայաստանից, Ադրբեջանից, Ռուսաստանից և Թուրքիայից, որը կազմում է ընդհանուր այցելուների հոսքի 80,1%-ը: Բացի այդ Իրանից (+118,3%) և Սաուդյան Արաբիայից (+164.6%) նույնպես այցելուների կտրուկ աճ է նկատվել:

Զբոսաշրջիկների թիվը (այցելուները, ովքեր գտնվել են Վրաստանի տարածքում 24 ժամ և ավելի) կազմել է 3,5 մլն. մարդ, որն աճել է 27,9%-ով: Այս զբոսաշրջիկները 2,2 մլրդ. դոլար են ծախսել Վրաստանում 3-րդ եռամսյակի դրությամբ, որը 29%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: Ակնկալվում է, որ 2018 թ.-ին զբոսաշրջային ծառայություններից եկամուտները կլինեն ավելի բարձր, քան արտահանվող ապրանքների ընդհանուր ծավալը, որը 2017 թ.-ին, ինչպես նշեցինք, կազմել էր 2,7 մլրդ. դոլար:

2018 թ.-ին Վրաստանում տնտեսական ակտիվության դինամիկան պահպանվում է. հունվար-փետրվարին տնտեսական աճը կազմել է՝ 4,9%, աճել են նաև 25,5%-ով արտահանման և 13,3%-ով ներմուծման ցուցանիշները: Գնաճը մարտին կազմել է 2,8%:

Ադրբեջան: Ադրբեջանի համար 2017թ.-ը նշանավորվեց տնտեսության անկման վիճակից մի կերպ դուրս գալով: Ի տարբերություն 2016 թ.-ի, երբ այս երկրի ՀՆԱ-ն անկում էր գրանցել 3,8%-ով, նախորդ տարին ամփոփվեց 0,1% աճով[5]: Այդ աննշան աճն էլ իր հերթին պայմանավորված էր նավթի գների կայուն աճով, այլապես կրկին անկում կգրանցվեր և ոչ փոքր չափով:

Անցյալ տարի ադրբեջանական տնտեսության ոչ նավթային հատվածը աճել է 2,6%-ով, իսկ 5%-ով կրճատվել է նավթագազային հատվածը: Տնտեսության մեջ լճացումը շարունակվում է: Ադրբեջանական պաշտոնական վիճակագրության համաձայն, գյուղատնտեսության ոլորտում, նկատվել է համեմատաբար դրական դինամիկա: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանումը ավելացել է 60%-ով և պատճառն այն է, որ պատժամիջոցների պատճառով Թուրքիան ավելի քիչ ապրանք-

[5] The State Statistical Committee of the Republic of Azerbaijan, *https://www.stat.gov.az/?lang=en*

ներ է մատակարարել ռուսական շուկա, որից օգտվել է Ադրբեջանը:

Ըստ ադրբեջանցի տնտեսագետ Նաթիգ Ջաֆարլիի, ներդրումները տնտեսության մեջ կրճատվում են, երկիրը լքում են բազմաթիվ օտարերկրյա ներդրողներ, տնտեսության մեջ որևէ լուրջ բարեփոխումներ չեն իրականացվում, որոնք ներդրողներին կհամոզեն ներդրումներ անել տնտեսության մեջ, իսկ Ադրբեջանի բնակչությունը 2017թ.-ը կհիշի որպես դեպրեսիայի և իրական եկամուտների նվազման տարի, բարձր է արտագաղթի տեմպերը և սոցիալական դժգոհությունը[6]: Ըստ բրիտանական Association Chartered Certified Accountants (ACCA) գնահատականի, Ադրբեջանում ստվերային տնտեսությունը կազմում է տնտեսության 66,12%-ը: Կառավարության վարկանիշը Moody's միջազգային վարկանիշային գործակալության կողմից նվազել է Ba2-ից մինչև Ba1: Moody's-ի կարծիքով, նոր վարկային վարկանիշը «արտացոլում է տնտեսության, պետական ֆինանսների և բանկային համակարգի խոցելիությունը նավթային գների անկայունության մեջ»:

Ադրբեջանական տնտեսության կարևորագույն իրադարձություններից կարելի է համարել «Դարի պայմանագրի» երկարաձգումը և Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու բացումը: Նոր «Դարի պայմանագիրը» ստորագրվել է 2017թ.-ի սեպտեմբերին՝ Ադրբեջանի և նավթային միջազգային ընկերությունների միջև «Ազերի-Չիրաղ-Գյունեշլի» նավթագազային բլոկի հետագա մշակման համար, որով պայմանագրի գործունեությունը երկարաձգվում է ևս 25 տարով, 2024թ.-ից մինչև 2050թ.-ը:

Գնաճ: Ադրբեջանում իրականացվող կոշտ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությամբ այդպես էլ չկարողացան զսպել գնաճի տեմպերը և այն կազմեց 13,4%: Դա հիմնականում հարվածել է աղքատ բնակչության գրպանին, որն առավելապես երևում է սննդամթերքի գնաճի տեսքով, ինչը կազմել է 19% է: Որոշ ապրանքների գները բարձրացել են նույնիսկ մինչև 50%, ոչ պարենային ապրանքներինը՝ 12%-ով, ծառայությունների գները աճել են 10%-ով[7]: Չնայած այն բանին, որ Ադրբեջանում միջին ամսական անվանական աշխատավարձը 7,2%-ով աճել է 2016թ.-ի համեմատ, սակայն քաղաքացիները չեն զգացել եկամուտների աճի արդյունքը՝ բարձր գնաճի պատճառով:

Գնաճի պատճառներից է նախորդ տարիների մանաթի կրկնակի արժեզրկումը: Բացի այդ, ներմուծումը տնտեսությունում կարևոր դեր է խաղում, քանի որ տեղական ապրանքների արտադրության մեծ մասը կախված է արտերկրից ստացվող հումքից: Բնականաբար, երբ մանաթը արժեզրկվեց, ներմուծվող ապրանքներն ավելի թանկացան արտադրողների համար: Տեղական արտադրանքի վնասը փոխհատուցելու համար արտադրողները բարձրացրել են իրենց վերջնական արտադրանքի գինը, ինչը հանգեցնում է գների ընդհանուր աճին:

Պետական բյուջեի ծախսերը նույնպես նվազեցին 0,9%-ով՝ կազմելով 10,35 մլրդ. դոլարին համարժեք ադրբեջանական մանաթ: Իմիջիայլոց պետական բյուջեի ծախսերը 2014, 2015 և 2016 թվականներին անկում են գրանցում: Իսկ պետական բյուջեի եկամուտները կազմել են 9,7 մլրդ. դոլար, ինչը ակնկալվող եկամուտներից ցածր է եղել:

Բանկային համակարգը շարունակում է թուլանալ, պրոբլեմային վարկերի ծավալն աճում է, վարկավորումը նվազում է, իրացվելիության հետ կապված խնդիրներ կան: Բանկային հատվածը ուժեղ աջակցություն է ստանում պետությունից, առանց որի բանկերը դժվար թե կարողանային դուրս գալ ներկայիս իրավիճակից, այլապես դրանք կամ կփակվեն կամ կմիավորվեն:

Կենտրոնական բանկը շարունակելու է հնարավորինս սեղմել դրամական զանգվածը, խիստ դրամավարկային քաղաքականությամբ գնաճի տեմպերը վերահսկելու համար, որի արդյունքում տնտեսությունը խեղդվում է փողի պակասից: Միաժամանակ Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամը (Sofaz) բավարար արտարժութային ռեսուրսներ ունի արտարժույթի պահանջարկը բավարարելու համար: Վերջին 2 տարիներին ԿԲ-ի փոխարեն այդ գործառույթը կարծես թե իր վրա է

[6]Экономика Азербайджана в 2017 году: бегство инвесторов и инфляция,https://eadaily.com/ru/news/2017/12/28/ekonomika-azerbaydzhana-v-2017-godu-begstvo-investorov-i-inflyaciya

[7] Итоги: Экономика Азербайджана в 2017 году, http://ru.echo.az/?p=66132

վերցրել Sofaz-ը, քանի որ մանաթի փոխարժեքի պահպանման արդյունքում ԿԲ-ի պահուստները վերջին տարիներին գրեթե կեսով չափ կրճատվել էին: Այսպես, մոտ 1,46 մլրդ. դոլար է ուղղվել Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամից (Sofaz) Կենտրոնական բանկ՝ «մակրոտնտեսական կայունության ապահովման» նպատակով: Այնումենայնիվ ԿԲ-ի արտարժութային պահուստները մի փոքր աճել են 2018թ.-ի ընթացքում, կազմելով ներկա պահին 5,5 մլրդ դոլար[8]: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը կազմում է 11%:

Ինչ վերաբերում է բանկային հատվածին, ապա այս ոլորտում վիճակը վատ է: Ֆինանսական հատվածում ընթացող խնդիրները և առևտրային բանկերի նկատմամբ բնակչության վստահության կորուստը հանգեցրել են բանկային համակարգի ձախողումներին և տոկոսադրույքների աճին: Նվազել է բանկերի վարկային պորտֆելը՝ բանկերի կողմից տրամադրված վարկային ներդրումների ծավալները տնտեսության մեջ 2018 թ.-ի մարտի 1-ին Ադրբեջանում գնահատվել են 11,1 մլրդ. Մանաթ, իսկ 2016 թ.-ին այդ ցուցանիշը կազմել էր 15,9 մլրդ. մանաթ: 2017թ.-ին Ադրբեջանի բանկային հատվածի ակտիվները տարեսկզբից նվազել են ավելի քան 16%-ով: Բնակչության ավանդները նվազել են 2,45%-ով, իսկ ընկերությունների միջոցները՝ 6,55%-ով: Ադրբեջանական 45 բանկերից 2017 թ.-ի դրությամբ գործող բանկերի թիվը հասել է 30-ի: Այդ 30 բանկերի ակտիվները 2017 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 26,3 մլրդ. մանաթ, ընդհանուր պարտավորությունները՝ 23,2 մլրդ մանաթ, մնացորդային կապիտալը՝ 3.095 մլն մանաթ:

Ադրբեջանի խոշորագույն բանկը, Ադրբեջանի միջազգային բանկը (IBA), դադարեցրել է իր արտաքին պարտքերի վճարելը և 2017թ. մայիսին սնանկ է հայտարարվել: Անարդյունավետ կառավարումը, անբավարար ներդրումային քաղաքականությունը, ցածր իրացվելիությունը և կոռուպցիոն գործունեությունը ստիպեցին վերաձևակերպել բանկի 3,3 մլրդ. ԱՄՆ դոլար պարտքը: Այդ բանկի վերակազմավորման արդյունքում Կառավարության արտաքին պարտքը ավելացավ 2,45 մլրդ. ամերիկյան դոլարով[9]:

Ադրբեջանում սեպտեմբերին ստեղծվել էր «Վարկերի երաշխավորող հիմնադրամ», վարկերի խթանման և փոքր բիզնեսի սեփականատերերին ռազմավարական նշանակություն ունեցող հատվածներում, մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում, նախագծերը ֆինանսավորելու նպատակով: Պատճառն այն է, որ բանկերը չեն ցանկանում փոքր բիզնեսին տրամադրել վարկեր:

Sofaz: Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամի բյուջեի եկամուտը նավթի գների բարձրացման պատճառով աճել է և կազմել է 6,3 մլրդ. ԱՄՆ դոլար, նախատեսված 4,9 մլրդ. դոլարի փոխարեն: Միևնույն ժամանակ, հիմնադրամի ծախսերը սահմանվել էին 8,9 մլրդ. դոլար, ինչը հանգեցրել է 2,6 մլրդ. դոլար բյուջեի դեֆիցիտի, որը 2016 թ.-ի դեֆիցիտի համեմատ զգալիորեն մեծ է եղել: 2017-ի հոկտեմբերի դրությամբ հիմնադրամի ակտիվները կազմել են 36 մլրդ. դոլար: Հիմնադրամից պետական բյուջե փոխանցումները կազմել են 3,6 մլրդ. դոլար, ինչը 2016-ի մակարդակից ցածր է եղել 891 մլն. դոլարով: Մյուս կողմից, դեպի պետական բյուջե 2018 թվականի տրանսֆերտների վերին սահմանը սահմանվել է 5,4 մլրդ. ԱՄՆ դոլար, ինչը ենթադրել է տալիս, որ 2018թ.-ին պետական բյուջե փոխանցումներն ավելի բարձր կլինեն նախորդ տարվա համեմատ[9]:

Մանաթի փոխարժեք: 2017 թ.-ին 1 ամերիկյան դոլարի միջին փոխարժեքը կազմել է 1.7 մանաթ և համեմատաբար կայուն է եղել: Սա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է Կենտրոնական բանկի և Նավթային պետական հիմնադրամի արտարժույթի շուկայում ակտիվ միջամտությամբ, որպեսզի փոխարժեքը կայուն լինի, չնայած այն բանին, որ պաշտոնական քաղաքականությունը ենթադրում է լողացող փոխանակման ռեժիմ: 2017թ.-ին մանաթը կայուն է մնացել ամերիկյան դոլարի նկատմամբ, սակայն կորցրել է արժողությունը այլ արտարժույթների՝ եվրոյի, ֆունտ ստեռլինգի և յուանի նկատմամբ:

[8] Central Bank of Azerbaijan, https://en.cbar.az/lpages/statistics/key-macroeconomic-indicators/

[9] Center for Economic and Social Development. The Economy of Azerbaijan in 2017 -Brief Overview, http://cesd.az/

Ըստ ֆինանսների նախարարության պետական արտաքին պարտքը 2018 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 9,4 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի 22,8%-ը:

Արտաքին առևտուր: Ըստ Ադրբեջանի մաքսային կոմիտեի տվյալների, արտահանումը կազմել է 13,8 մլրդ. դոլար, ներմուծումը՝ 8,8 մլրդ. դոլար: 2017 թվականին Ադրբեջանի արտաքին առևտրաշրջանառությունը աճել է 27,8%-ով, արտահանումը՝ 51,1%-ով, ներմուծումը՝ 2,9%-ով: Արտահանման կառուցվածքում գերիշխում է նավթի (77,52%), նավթամթերքների (2,46%), բնական գազի (8,64%) տեսակարար կշիռները:

Գործազրկություն: Ըստ պաշտոնական տվյալների, երկրում գործազրկությունը մնում է ցածր մակարդակի վրա՝ 5%: Այս ցուցանիշը մի քանի տարի շարունակ չի փոփոխվում: Անկախ փորձագետները կարծում են, որ իրականում գործազրկության մակարդակը մի քանի անգամ գերազանցում է նշված ցուցանիշը: 2016 և 2017 թթ.-ին բավականաչափ մեծ թվով մարդիկ կորցրել են իրենց աշխատատեղերը:

Նավթի և գազի արդյունահանում: Ըստ պաշտոնական ցուցանիշների, 2017 թ.-ին Ադրբեջանում նավթի արդյունահանումը կազմել է 36,7 մլն. տոննա, նախորդ տարվա 2016 թ.-ի համեմատ նվազելով 5,7%-ով, իսկ 2010 թ.-ի համեմատ նվազել է 24%-ով կամ 12,1 մլն. տոննայով: Օրական միջին արդյունահանումը կազմել է մոտ 800 հազար բարել: Բնական գազի արդյունահանումը նախորդ տարի կազմել է 28,6 մլրդ. մետր խոր: Միաժամանակ աճել են ադրբեջանական նավթի արդյունահանման ծախսերը: Ադրբեջանի պետական նավթային ընկերության (Socar) համաձայն, ծովում նավթի արդյունահանման համար ծախսվում է միջինը 20 ամերիկյան դոլար մեկ բարելի համար, սակայն իրականում այն մի փոքր բարձր է: Արդյունահանման նվազող տեմպերի և ծախսերի նման մակարդակի դեպքում, Ադրբեջանի Պետական նավթային հիմնադրամի (Sofaz) տարեկան եկամուտը կկազմի մոտ 6-7 միլիարդ դոլար՝ նավթի 60-70 դոլար գների դեպքում:

Ադրբեջանի Պետական վիճակագրական կոմիտեի տվյալներով, համախառն ներքին արդյունքը 2018-ի հունվար-փետրվարին աճել է 1,3%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ[10]: Իսկ գնաճը կազմել է՝ 4,7%:

Իրան: ՀՆԱ-ի աճը կազմել է 4,6% 2017 թ.-ի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ[11]: Իրանական տարվա 1396 թ.-ի (2017-2018 թ.-ի) առաջին կիսամյակի դրությամբ արտաքին առևտրի դրական հաշվեկշիռը կազմել է 10,7 մլրդ. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 44,2 մլրդ. դոլար, իսկ ներմուծումը՝ 33,5 մլրդ. Դոլար: Արտահանման 82%-ը կազմել է նավթի և գազի արտահանումը: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի Իրանի պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 17,7%:

Ազգային արժույթի արժեզրկման տեմպերը պատկերացնելու համար նշենք, որ 2017թ.-ի սկզբին 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմել է 32500 իրանական ռիալ, որը ներկայումս հասել է 42 000 իրանական ռիալի: Ընդ որում, փոխարժեքը բարձրացել է հատկապես այս տարվա ապրիլ ամսվա ընթացքում:

ՀՆԱ-ի աճը պայմանավորված է եղել հիմնականում նավթի արտահանման ծավալների ավելացման և նավթի գների աճի արդյունքում ստացված եկամուտներով: Վերջին տվյալներով 2017 թ.-ի առաջին եռամսյակում նավթի արտահանման ծավալները աճել են 17%-ով, երկրորդ եռամսյակում 10%-ով:

Ընդհանուր առմամբ, չնայած տնտեսական աճին և որոշակի հաջողություններին, տնտեսական իրավիճակը մնում է բարդ: 2015թ.-ին կնքված միջուկային գործարքը և պատժամիջոցների աստիճանական վերացումը չարդարացրեց սովորական իրանցիների դրական սպասումները: Տնտեսության հիմնական խնդիրներից են եղել գնաճը, ռիալի փոխարժեքի անկումը և գործազրկության բարձր մակարդակը: Նախորդ տարվա ավարտը Իրանում մթագնվեց փողոցային բուռն հուզումներով և անկարգություններով:

2016-2017 թվականներին Իրանը վերականգնել է իր մասնաբաժինը համաշխարհային նավթի շուկայում, 2012-2015թթ.-ին միջազ-

[10] The State Statistical Committee of the Republic of Azerbaijan*https://www.stat.gov.az/*

[11] Իրանի տնտեսության վիճակագրական տվյալների համար հիմք ենք ընդունել https://tradingeconomics.com կայքէջի և Իրանի կենտրոնական բանկի՝ www.cbi.ir հրապարակած ցուցանիշները:

գային ֆինանսական և տնտեսական կոշտ պատժամիջոցներից հետո, որը կիրառվում էր Իրանի նկատմամբ: Իրանական կողմը նույնպես ակտիվ և մտածված է գործում: 2016 թ.-ին OPEC-ը որոշեց ընդհանուր նավթի արդյունահանումը 1,8 մլն. բարելով կրճատել: Սակայն Իրանը, որը երրորդ խոշոր նավթ արդյունահանողն է OPEC-ում, Սաուդյան Արաբիայից և Իրաքից հետո, բացառություն է արել իր համար: Թեհրանը պնդում էր վերականգնել իր նախնական վաճառքի շուկայական մասնաբաժինը այնքան, որքան մինչև նավթի արտահանման սահմանափակումներն էին: Այս իրավիճակում ԻԻՀ-ն կարողացավ լիարժեք օգտվել ընթացիկ իրավիճակից, չենթարկվելով OPEC-ի որոշումներին:

Ներկայումս Իրանը արդյունահանում է օրական ավելի քան 3,8 մլն. բարել նավթ: Ակնկալվում է, որ 2018 թ.-ի ընթացքում Իրանում նավթի օրական արդյունահանումը կաճի մինչև 4 միլիոն բարել: Իսկ նավթի օրական արտահանումն այժմ գերազանցում է 2,6 միլիոն բարելը: Իրանական նավթի արդյունահանման ինքնարժեքը բավականին ցածր է և կազմում է մոտ է 5 դոլար մեկ բարելի համար: Հատկանշական է, որ Թեհրանը վերականգնել է ոչ միայն նավթի համաշխարհային շուկայում իր քանակական մասնաբաժինը, այլև, եթե կարելի է ասել, նաև «աշխարհագրական» տիրույթները: Իրանի նավթի արտահանման 60%-ը առաքվում է ասիական երկրներ, իսկ մնացած 40%-ը՝ եվրոպական երկրներ[12]:

Ամեն դեպքում, երկրի տնտեսական հաջողությունների ճանապարհը հանդիսանում է արդյունաբերության բոլոր ոլորտների զարգացումը և հատկապես բարձրագույն, թվային և տեղեկատվական տեխնոլոգիաները:

Իրանը լուրջ աշխատանքներ է կատարում տարբեր խոշորամասշտաբ ենթակառուցվածքային նախագծեր իրականացնելու համար: Նախորդ տարի Իրանը ստորագրել է խոշոր վարկային գործարքներ Հարավային Կորեայի բանկերի հետ, որոնք գնահատվում են մոտ 8 միլիարդ եվրո: Նման վարկային գործարքներ է կնքվել Չինաստանի CITIC Trust-ի և հինգ իրանական բանկերի միջև, որի արդյունքում 10 մլրդ. դոլար արժողությամբ վարկային միջոցներ է տրամադրվում Իրանին: Ինչպես նաև վարկային համաձայնություններ են կնքվել ռուսական բանկերի հետ, որի արդյունքում ռուսական կողմը մեծ ծավալի վարկեր կտրամադրի Իրանում զարգացման ծրագրերի ֆինանսավորման համար:

Տարբեր խոշոր ենթակառուցվածային համատեղ նախագծեր են իրագործվում հատկապես Չինաստանի հետ, ինչպես օրինակ՝ «Նոր մետաքսի ճանապարհի» շրջանակներում 3200 կմ երկաթգծի կառուցման նախագիծը, որի մի հատվածը կառուցվելու է Իրանում: Այն կապում է Չինաստանի արևմուտքը Իրանի մայրաքաղաք Թեհրանին, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի տարածքով:

Ներդրումներ: Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2011 թ.-ի 4,3 մլրդ. դոլարից նվազել են մինչև 2015 թ.-ի 877 մլն. դոլարի մակարդակի, որը սակայն 2016թ.-ից նորից սկսել է աճել: Իրանին միայն նավթի արդյունահանման ենթակառուցվածքների զարգացման համար անհրաժեշտ է 50 մլրդ. ամերիկյան դոլար ներդրումներ:

Իրանական 80 միլիոնանոց շուկան հսկայական է, նրա կարողությունները դժվար է գերագնահատել: Այս առումով Ֆրանսիան օրինակ է հանդիսանում, որն արագորեն հաստատվում է իրանական շուկայում՝ առաջարկելով մի շարք ապրանքների տեսականի: Ֆրանսիական ավտոարտադրողները՝ Renault-ն եւ Peugeot-Citroen-ը ոչ միայն վաճառում, այլ նաև Իրանում արտադրում են ավտոմեքենաներ: Ֆրանսիան պայմանագիր է կնքել նաև օդանավերի մատակարարման մասին: Գերմանիան այս հարցում արդեն Ֆրանսիայից հետ է մնում: Իտալիան նույնպես ջանքեր է գործադրում իրանական շուկայում հաստատվելու համար: Այս երկրների հետ համագործակցությունը շարունակում է մնալ Իրանի կարևորագույն առաջնահերթություններից մեկը[13]:

Գործազրկությունը շարունակում է մնալ լուրջ խնդիր Իրանում և առաջիկա տարիներին այն կշարունակվի արդիական լինել իրանական տնտեսության համար: Ըստ Իրանի

[12]Триумфальное возвращение: Иран снова на рынке нефти https://ru.sputnik-tj.com/world/20171005/1023509895/triumfalnoe-vozvrashchenie-iran-snova-rynke-nefti.html

[13]После санкций: экономический пейзаж Ирана изменился, http://ru.euronews.com/2017/05/17/iran-s-post-sanction-economy-doing-well-one-year-after-nuclear-deal

կենտրոնական բանկի տվյալների իրանական 1396 թ.-ի (2017-2018թ.) երկրորդ եռամսյակին գործազրկությունը կազմել է 11,7%: Երիտասարդների շրջանում իրավիճակը ավելի վատ է, գործազրկությունը հասնում է 28,8%:

Գնաճը կազմել է 9,9%: Դիզելային վառելիքի, բենզինի և այլ անհրաժեշտ ապրանքների, սննդամթերքի գները բարձրացել են նախորդ տարում, որը սոցիալական խոցելի շերտերի համար լուրջ դժգոհության է առաջացրել[14]:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2018թ.-ի դրությամբ կազմել է 18%: Ընթացիկ հաշվի դրական հաշվեկշիռը ավելացել է ավելի քան 80%-ով, հասնելով ՀՆԱ-ի շուրջ 6,3%-ը, հիմնականում նավթի արտահանումից եկամուտների աճի արդյունքում: Այն 2015 թ.-ին կազմում էր 2,3%:

Սոցիալական բողոքները: Իրանում տեղի ունեցած զանգվածային բողոքի ակցիաները դեռևս շարունակվող ծանր տնտեսական վիճակի արդյունք են, չնայած պատժամիջոցների վերացմանը խոստացած «տնտեսական գարունի»: Իհարկե, դրա հիմնական պատճառը նախևառաջ արևմտյան պատժամիջոցների հետևանքներն են: Բացի դրանից, այս վիճակի համար հաճախ մեղադրվում է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ): Իրանում կարևոր խնդիր է մնում Իսլամական հեղափոխության կորպուսի տնտեսական ազդեցության չեզոքացումը: Իրաքի հետ պատերազմից հետո երկրի ղեկավարությունը թույլատրել էր իսլամական հեղափոխության պահապաններին զբաղվել բիզնեսով: Գրեթե երեք տասնամյակ շարունակ ԻՀՊԿ-ը ստեղծել է մի ամբողջ տնտեսական կայսրություն՝ ներխուժելով իրանական տնտեսության բոլոր ոլորտներ: Հիմնականում ԻՀՊԿ-ի գործունեությունն է արգելակում իրանական տնտեսության և բիզնեսի ազատ զարգացմանը, կարծում են ընդդիմադիրները, քանի որ այն «մահացու գրկախառնումով» խեղդում է տնտեսությունը: Արդյունքում երկրի բարձրագույն ղեկավարը Այաթոլլա Ալի Խամենեին հրամայեց Իսլամական հեղափոխության պահպանության կորպուսին սահմանափակել իր ներգրավվածությունը բիզնեսում:

Բացի այդ, Իրանը ուղղակի և անուղղակի ներգրավված է այսօր Սիրիայում, Իրաքում, Լիբանանում, Եմենում, Բահրեյնում, Գազայում հակամարտություններում: Իրանցի շատ քաղաքացիների համար այդ հակամարտություններին Իրանի մասնակցությունը և կատարվող հսկայական ծախսերը անհիմն են թվում: Եթե ավելացնենք նաև վերջին շրջանի բազմաթիվ կոռուպցիոն սկանդալները, որոնցում ներգրավված են իրանցի պաշտոնյաները, ապա կարելի է որոշակի գաղափար ստանալ դժգոհության պատճառների մասին[15]: Նշենք, որ այս դժգոհությունները ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև քաղաքական ենթատեքստ ունեին, որոնք շատ հնարավոր է, որ ուղղորդվում էին արտերկրի հատուկ ծառայությունների կողմից:

Ամեն դեպքում Թրամփի կողմից Իրանի հետ միջուկային գործարքի չեղարկման սպառնալիքները, հնարավոր նոր պատժամիջոցները ենթադրում են նավթի եկամուտների կրճատում: Ինչպես նաև Սիրիայում, Իրաքում և Մերձավոր Արևելքի մյուս երկրներում լայն թափ հավաքող կոնֆլիկտները ենթադրում է Իրանի կողմից ռազմական ծախսերի ավելացում և հավանաբար մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացում, որի արդյունքում սոցիալ-տնտեսական խնդիրների հրատապությունը դեռևս օրակարգում կմնա:

Թուրքիա: Թուրքայի տնտեսությունը նախորդ տարի, հատկապես երկրորդ կիսամյակում բարձր աճ գրանցեց: ՀՆԱ-ի աճը 2017թ.-ին կազմել է 7,4%, իսկ համախառն ներքին արդյունքը կազմել է 858 միլիարդ դոլար[16]: 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 14071 դոլար: Այս պահի դրությամբ 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը կազմում է 4,09 լիրա, որն իր հերթին 2017 թ.-ի ընթացքում 2,9 լիրայից հասել էր 3,8 լիրայի: Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2015 թ.-ի 42,3% ցուցանիշից հասել է 28,3%-ի 2017թ.-ին: Սակայն շատ բարձր է մասնավոր հատվածի պարտքի տեսակակար կշիռը ՀՆԱ-ում:

Ռազմական չհաջողված հեղաշրջումը 2016 թ.-ին արգելակեց տնտեսական աճը, սակայն այն չեզոքացվեց կառավարության կող-

[14]2017: Iran's Economy in Review, https://financialtribune.com/articles/domestic-economy/79122/2017-iran-s-economy-in-review

[15]Unemployment rate down, economic growth rate up in Iran, https://theiranproject.com/blog/2018/01/23/unemployment-rate-economic-growth-rate-iran/

[16] Turkish statistical Institut, http://www.turkstat.gov.tr

мից իրական սեկտորի աջակցությամբ և երկրորդ կիսամյակին նորից աճ նկատվեց: Աճ գրանցեցին տեղեկատվական-հեռահաղորդակցության սեկտորը, ֆինանսական և ապահովագրական ոլորտը, շինարարական ոլորտը, ինչպես նաև արդյունաբերական սեկտորը: Փոքր և միջին բիզնեսին աջակցությունը կտրուկ նպաստեց արտադրության աճին:

Թուրքիայի տնտեսության այս աճը պայմանավորված է եղել սպառման, ներդրումների և արտահանման ծավալների աճով: 123 մլրդ դոլար է կազմել օտարերկրյա ուղղակի ներդրումները, որը 2016 թ.-ի համեմատ աճել է: Իսկ տնային տնտեսությունների կողմից 6,1% ավելացվել է սպառումը: Սակայն աճի հիմնական աղբյուրը եղել է արտահանումը, որը ակտիվացել էր թույլ լիրայի հաշվին: Տնտեսական աճը պայմանավորված է եղել նաև կառավարության կողմից բիզնեսին ուժեղ աջակցությամբ և հարկերի իջեցումից: Վարկերը տնտեսության մեջ շատանում են, որոնք զգալի էժանացել են: Կարճաժամկետ հեռանկարները կարծես թե խոստումնալից են, ի հակադրություն գնաճային ճնշումների և վատթարացող ընթացիկ հաշվի[17]: Սակայն Թուրքիայի իշխանությունները հավակնոտ հայտարարություններ են անում նաև գնաճի կարգավորման, բյուջեի դեֆիցիտի և գործազրկության նվազեցնելու ուղղություններով[18]:

Արտահանում: Տնտեսական ակտիվության խթանման համար պետության կողմից շեշտը դրվեց ավելի շատ արտահանման վրա, քան ներքին սպառման խթանման վրա: Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 76,8 մլրդ. դոլար, որտեղ արտահանումը կազմել է 157 մլրդ. դոլար, իսկ ներմուծումը՝ 233,8 մլրդ. դոլար: Արտահանումը աճել է 10%-ով: Արտահանման աճին զգալի աջակցություն տվեց «Վարկերի երաշխավորման հիմնադրամը»: Այս հիմնադրամի կողմից արտահանման ոլորտին ուղղվեցին մեծ ծավալի վարկեր: Արտահանման կառուցվածքում ամենամեծ մասնաբաժին ունեցել է ավտոմոբիլների արտահանումը: Անցյալ տարի թուրքական ավտոմոբիլային արդյունաբերությունը արտադրել էր ավելի քան 1,54 մլն. ավտոմեքենա, այդ թվում՝ Renault, Peugeot և Toyota: Նրանց 75%-ը արտահանվել է եվրոպական երկրներ[19]: Այս տարի Թուրքիան ակնկալում է արտահանման ավելի լավ արդյունքներ:

Զբոսաշրջություն: Քանի որ անվտանգության խնդիրները բարելավվում են, եվրոպացիները (հատկապես բրիտանացիները) կրկին հետ են վերադառնում Թուրքիայի հարավային ափերը: Զբոսաշրջիկների թիվը ավելացել է նաև հատկապես ռուս զբոսաշրջիկների հաշվին, մոտ 5 մլն. տուրիստ: Այն լրացուցիչ արտարժույթ ներարկեց թուրքական տնտեսություն, որը կազմել է մոտ 4,5 մլրդ. դոլար[20]:

Գնաճը նախորդ տարի բարձր է եղել, տարեկան միջին գնաճը կազմել է՝ 10,23%: Գնաճի պատճառ են եղել նավթի գների աճը և լիրայի հերթական դեվալվացիան: Գնաճի տեմպերը ակտիվացել էին 2016թ.-ի կեսերից՝ ձախողված հեղաշրջումից հետո: Հատկապես սննդամթերքի գներն են թանկանում, թեև լիրայի արժեզրկումը խթանում է տուրիզմին: Բնակչությունը ընկել է ինֆլացիոն-դեվալվացիոն պարույրի մեջ[21]:

Թուրքիայի կենտրոնական բանկը ճիշտ է համարում բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքները, որպեսզի գնաճի ցուցանիշը ավելի կայուն լինի: Սակայն Թուրքիայի նախագահ Էրդողանը դեմ է հանդես գալիս ԿԲ-ի տոկոսադրույքի բարձրացման քաղաքականությանը, այն բնորոշելով դավաճանություն և կարծիք հայտնելով, որ գնաճը չի կարող նվազել բարձր բանկային տոկոսադրույքներով: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը 8% է:

Գործազրկություն: Զբաղվածությունը լուրջ խնդիր է Թուրքիայում՝ գործազրկության մակարդակը մոտ 10,9% է: Կառավարությունն ակտիվորեն միջոցներ է ձեռնարկում գործազրկության դեմ պայքարելու համար: Գործազրկության մեծ մասը երիտասարդության շրջանում է: Վիճակագրության համաձայն,

[17]Turkey: Growth is the headline, but inflation is a worry, https://www2.deloitte.com/insights/us/en/economy/emea/turkey-economic-outlook.html

[18]Турецкая экономика: ожидания и реальность, http://mk-turkey.ru/economics/2018/02/22/tureckaya-ekonomika-ozhidaniya.html

[19] Тенденции в экономике Турции в 2018 году, https://www.propertyturkey.com/ru/blog-turkey/turkish-economy-2018-snapshot

[20] Примирение с Россией не спасло экономику Турции, https://vz.ru/world/2017/12/15/899472.html

[21] Turkey's 11% Economic Growth Fuels Expectations of Rate Hike, https://www.bloomberg.com/news/articles/2017-12-11/turkey-s-economy-grows-faster-than-expected-in-third-quarter

ամեն հինգերորդ երիտասարդը ներկայումս գործազուրկ է: Էրդողանը նշել է, որ կառավարությունը ձգտում է ավելի շատ աշխատողներ վերապատրաստել վերականգնվող էներգետիկայի և SS ոլորտի համար: Բացի այդ, տվյալ միջոցառումները կնպաստեն կանանց շրջանում զբաղվածության աճին:

Պետությունը ավելացնում է նաև պետական ծախսերը և այդ ծախսերի զգալի մասը ընկնում է ենթակառուցվածքային մեգանախագծերի և բնակարանային սեկտորի շինարարության վրա, արդյունքում ստեղծվել են տասնյակ հազարավոր աշխատատեղեր**:**

Անշարժ գույքի նկատմամբ պահանջարկը Թուրքիայում աճում է: Ստամբուլը շարունակում է առաջատար դիրք զբաղեցնել օտարերկրացիների կողմից Թուրքիայում բնակարան ձեռք բերելու վայրերի շարքում, այնուհետև հաջորդում են Անթալիան և Բուրսան: Անշարժ գույքի գնորդների շրջանում առաջին տեղում զբաղեցնում են Իրաքի քաղաքացիները, որոնց հաջորդում են Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և Ռուսաստանը:

Ներդրումներ: Կարճաժամկետ ներդրումները, որոնք հաճախ կոչվում են «տաք փողեր», նպաստել են 2017թ.-ին տնտեսական աճին և ակնկալվում է, որ ներդրումների հոսքը կշարունակվի այս տարի: Ներդրումների աճը պայմանավորված էր ժամանակավոր գործոններով, ինչպիսիք են Մերձավոր Արևելքի հակամարտությունները, որի արդյունքում արաբական երկրներից ներդրումները հոսեցին տարածաշրջանի համեմատաբար անվտանգ տարածքը՝ Թուրքիա:

Եվ այսպես Թուրքիայի հիմնախնդիրներից է բյուջեի դեֆիցիտը, որը կազմել է նախորդ տարի 41,9 մլրդ. դոլար, իսկ 2016թ.-ին այն կազմել էր 33,7 մլրդ. դոլար: Այն աճում է պետական ծախսերի ավելացման հաշվին, որն ուղղված է տնտեսության խթանմանը, ինչպես նաև ներմուծումից կախվածության արդյունք է:

Սակայն Թուրքիայի տնտեսության վերելքին թերահավատությամբ են մոտենում որոշ թուրք և միջազգային փորձագետներ՝ դա բնորոշելով որպես Էրդողանի կառավարության հերթական բլեֆ կամ ագրեսիվ քարոզչություն: Քանի որ այդքան տնտեսական աճ ունենալու դեպքում սովորաբար ազգային արժույթը չի արժեզրկվում, որովհետև տնտեսության աճը բերում է զբաղվածության աճի, սպառման և պահանջարկի աճի: Թուրքական տնտեսությունը ոչ թե բուռն աճի, այլ անցումային փուլում է, կարծում են նրանք: Իսկ այդ ակտիվացումը դեռևս բեկումնային չէ: Միջազգային վարկանիշային կազմակերպությունների գնահատականը հիմնականում բացասական են թուրքական տնտեսության վերաբերյալ:

Միաժամանակ քաղաքական դաշտի անկայունությունը, Թուրքիայի ռազմական ներգրավվածությունը Սիրիայում և Իրաքում տեղի ունեցող հակամարտություններին, քրդական խնդիրը, դիվանագիտական լարվածությունը ԱՄՆ-ի, Իսրայելի և ԵՄ որոշ երկրների հետ, թուրքական պետությանը դրել են միջազգային մեկուսացման մեջ: Ընթացիկ տարում, այս ամենը կրկին լուրջ ազդեցություն է ունենալու Թուրքիայի տնտեսական անվտանգության և մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Ստորև ներկայացված է Հայաստանի և հարևան երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 2017թ.-ի դրությամբ, որտեղ Հայաստանի, Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի համար տրված են այդ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և կենտրոնական բանկերի վիճակագրական ցուցանիշները, իսկ Իրանի դեպքում հիմնականում www.tradingeconomics.com և Իրանի ԿԲ-ի ցուցանիշները:

Ամփոփում կամ մի քանի զուգահեռներ մեր հարևանների հետ

Հայաստանում, ինչպես նշեցինք, ըստ ԱՎԾ-ի գրանցվել է ՀՆԱ-ի 7,5% իրական աճ, իսկ տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 7,7%: Մեր տնտեսության 5 ոլորտներից 4-ում արձանագրվել է աճ, իսկ գյուղատնտեսությունում գրանցվել է 3% անկում: Դրական է արտահանման ծավալների նշանակալի աճը 25,2%-ով, որտեղ արտահանվել է 2,2 մլրդ. դոլարի արտադրանք: Ներմուծումը աճել է 27,8%-ով: Արտահանման աճին նպաստել են պատրաստի ապրանքները, հատկապես սննդի և գյուղատնտեսական արտադրանքները, ինչպես նաև հանքահումքային արտադրանքը՝ պայմանավորված պղնձի գների աճով (2016-17թթ.-ին պղնձի գները բարձրացել են 4400 դոլարից հասնելով 7100 մեկ

տոննայի դիմաց)։ Սակայն արտահանման կառուցվածքում դեռևս դիվերսիֆիկացիան ցածր է։

-Հայաստանի և մեր բոլոր հարևանների մոտ նախորդ տարի արտահանումը բարձր աճ է գրանցել։ Բացառությամբ Թուրքիայի, բոլոր երկրներում արտահանման աճը հիմնականում ունեցել է հումքային բնույթ՝ պայմանավորված մետաղների և նավթի գների աճով։ Բոլոր երկրների տնտեսական աճին զգալիորեն նպաստել է նաև արտահանման աճը։

-Նախորդ տարի մեր բոլոր հարևանների տնտեսություններին բնորոշ էր բարձր գնաճը՝ այն բարձր էր Ադրբեջանում՝ 13,4%, Թուրքիայում՝ 10,23%, Իրանում՝ 9,45%, ինչպես նաև Վրաստանում՝ 6%։ Հայայստանում ըստ պաշտոնական վիճակագրության գնաճը բավականին ցածր է եղել։ Այսինքն, մեր հարևան երկրները գնաճի արդյունավետ կառավարման բարդություններ են ունեցել։

-Ազգային արժույթների փոխարժեքի կայուն պահպանման ջանքերը չեն հաջողվել Իրանում և Թուրքիայում, իսկ Ադրբեջանը մեծ ջանքերի և ֆինանսական ռեսուրսների հաշվին է կարողացել պահպանել մանաթի փոխարժեքը։ Թուրքիայում սակայն լիրայի արժեզրկումը զգալիորեն նպաստել է արտահանման աճին։

-Ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի համար կարևոր գործոն է հանդիսացել դրամական փոխանցումների ներհոսքի ավելացումը, հատկապես Ռուսաստանից, որն էլ տնտեսական աճի վրա էական նպաստ է ունեցել։ Երկու երկրների համար էլ արտահանման և տրանսֆերտների աճը նպաստել է սպառման ծավալների ավելացմանը, որի մասին է հուշում ինչպես առևտրի ծավալների, այնպես էլ ներմուծման ծավալների աճը։

-Հայաստանում անցած տարի բնակչության եկամուտների իրական աճ ներքին աղբյուրների հաշվին չի եղել, այսինքն կենսաթոշակների և պետական համակարգի աշխատավարձերի էական բարձրացում տեղի չի ունեցել։ Անվանական աշխատավարձը բարձրացել է Ադրբեջանում, որը սակայն գնաճի բարձր տեմպերի պատճառով եկամուտների իրական աճ չի գրանցել։ Նմանատիպ իրավիճակ է նաև Թուրքիայում։

-Վրաստանի և Թուրքիայի համար կարևորվել է զբոսաշրջության ճյուղը, որն էլ էական ազդեցություն է ունեցել այդ երկրների ՀՆԱ-ի աճի վրա։ Մեզ մոտ նույնպես զգալի աճ կա այս ոլորտում և տնտեսական ակտիվության վրա որոշակի նպաստ է ունեցել։

-Վերաֆինանսավորման տոկոսադրույքը ամենաբարձրը Իրանում և Ադրբեջանում է, իսկ ամենացածրը մեզ մոտ է, սակայն այս հանգամանքը էական դեր չի խաղացել տնտեսությանը էժան վարկերով սնուցելու համար։ Մեզ մոտ վարկավորման այլ արդյունավետ մեխանիզմներ են պետք տնտեսության ակտիվացման համար։

-Հայաստանում տնտեսական աճի 7,7% ցուցանիշը չի նպաստել աղքատության և գործազրկության ծավալների կրճատման կամ բնակչության բարեկեցիկության վրա։ Այսպես, գործազրկության տարեկան միջին մակարդակը 2017թ.-ին կազմել է 17,8%՝ 2016 թ.-ի 18%-ի դիմաց, այսինքն այն նվազել է ընդամենը 0,2%-ով, իսկ աղքատության 30% մակարդակը դժվար թե էական չափով նվազած լինի։

-Ընթացիկ տարում Հայաստանում բարձր տնտեսական աճի համար անհրաժեշտ են, որ պահպանվեն այն դրական միտումները, որոնք եղել են համաշխարհային տնտեսությունում։ Խոսքը մետաղների բարձր գների, Ռուսաստանի տնտեսության կայունության, այնպես էլ երկրի ներսում իրականացվող տնտեսական արդյունավետ քաղաքականության մասին է։ Սակայն Ռուսաստանի շուրջ ընթացող բացասական գործընթացները հուշում են, որ Ռուսաստանին դժվարին ժամանակներ են սպասվում, որոնք անշուշտ բացասական կազդեն նաև մեր տնտեսության վրա։

Որպես ամփոփում նշենք, որ ի տարբերություն մյուս հարևանների հիմնախնդիրների, մեր հիմնախնդիրները ավելի վտանգավոր և խոցելի են։ Դրանք են արտագաղթը և բնակչության ծերացումը, որոնք ոչ միայն ժողովրդագրական, այլ նաև սոցիալ-տնտեսական և ազգային անվտանգության խնդիրներ են, ինչպես նաև աղքատության և գործազրկության բարձր մակարդակները, եկամուտների կրճատումը, կապիտալի արտահոսքը, պարտքի աճը (պետական, մասնավոր բիզնեսի և տնային տնտեսությունների), ներդրումների կրճատումը, սոցիալական բևեռացվա-

ծությունը, տարածաշրջանների անհավասարաչափ զարգացումը, խոշոր ենթակառուցվածքային նախագծերի ձգձգումը և վարկային միջոցների վատնումը, տնտեսության որոշ ճյուղերի գերկենտրոնացումը, կոռումպացվածության բարձր մակարդակը և մենաշնորհների առկայությունը:

Տնտեսական հիմնախնդիրները միշտ էլ եղել են և բնորոշ են բոլոր ազգային տնտեսություններին: Պետք է հետևել և սթափ գնահատել, թե տնտեսական գործընթացների միտումները ինչպիսին են աշխարհում և մեր հարևան երկրներում, ինչպես են հիմնախնդիրները հաղթահարվում, վերլուծել դրանք և խելամիտ տնտեսական հարաբերություններ վարել մեր հարևանների հետ:

Գրականություն

1. Перспективы развития мировой экономики, www.imf.org
2. The Georgian economy in 2017 – a year in review, https://www.finchannel.com/opinion/analysis-3/71565-the-georgian-economy-in-2017-a-year-in-review
3. National Statistics Office of Georgia, http: // geostat.ge/index.php?action=page&p_id=119&lang=eng
4. Внешний долг Грузии – насколько тревожен этот груз, https://sputnik-georgia.ru/reviews /20180301/ 239506529/Vneshnij-dolg-Gruzii-naskolko-trevozhen-jetot-gruz.html
5. The State Statistical Committee of the Republic of Azerbaijan, https://www.stat.gov.az/?lang=en
6. Экономика Азербайджана в 2017 году: бегство инвесторов и инфляция https://eadaily.com /ru /news /2017/12/28/ekonomika-azerbaydzhana-v-2017-godu-begstvo-investorov-i-inflyaciya
7. Итоги: Экономика Азербайджана в 2017 году, http://ru.echo.az/?p=66132
8. Central Bank of Azerbaijan, https://en.cbar.az/ lpages/statistics/key-macroeconomic-indicators/
9. Center for Economic and Social Development. The Economy of Azerbaijan in 2017 -Brief Overview, http://cesd.az/
10. The State Statistical Committee of the Republic of Azerbaijan*https://www.stat.gov.az/*
11. Իրանի տնտեսության վիճակագրական տվյալների համար հիմք ենք ընդունել https: //tradingeconomics.com կայքէջի և Իրանի կենտրոնական բանկի՝ www.cbi.ir հրապարակած ցուցանիշները:
12. Триумфальное возвращение: Иран снова на рынке нефти, https://ru.sputnik-tj.com/ world /20171005/1023509895/triumfalnoe-vozvrashchenie-iran-snova-rynke-nefti.html
13. После санкций: экономический пейзаж Ирана изменился, http://ru.euronews.com/2017/05/17/iran-s-post-sanction-economy-doing-well-one-year-after-nuclear-deal
14. 2017: Iran's Economy in Review, https: //financialtribune.com/articles/domestic-economy/79122/2017-iran-s-economy-in-review
15. Unemployment rate down, economic growth rate up in Iran, https://theiranproject.com/blog/ 2018/01/23 /unemployment-rate-economic-growth-rate-iran/
16. Turkish statistical Institut, http://www.turkstat.gov.tr
17. Turkey: Growth is the headline, but inflation is a worry, https://www2.deloitte.com/insights/us/en/ economy/emea/turkey-economic-outlook.html
18. Турецкая экономика: ожидания и реальность, http://mk-turkey.ru/economics/2018/02/22/tureckaya-ekonomika-ozhidaniya.html
19. Тенденции в экономике Турции в 2018 году, https://www.propertyturkey.com/ru/blog-turkey/turkish-economy-2018-snapshot
20. Примирение с Россией не спасло экономику Турции, https://vz.ru/world/2017/12/15/899472.html
21. Turkey's 11% Economic Growth Fuels Expectations of Rate Hike, https://www.bloomberg. com/news/articles/2017-12-11/turkey-s-economy-grows-faster-than-expected-in-third-quarter

Երկիր	ՀՆԱ	ՀՆԱ-ի ԱՃ, %	Վերաֆին. տոկոսադրույք, %	Գնաճ, %	Գործազրկություն, %	Պետ. բյուջեի պակասորդ, %	Պետական պարտք/ ՀՆԱ, %	Ընթացիկ հաշիվ/ ՀՆԱ, %	1 ԱՄՆ դոլարի փոխարժեք
Թուրքիա	858	7.30	8.00	10.23	10.90	-1.10	28.30	-3.80	4.09
Իրան	393 (2015թ.)	4.60	18.00	9.90	11.70	-2.10	17.7	6.30	42000
Ադրբեջան	38	0.10	11.00	13,4	5.10	-1.60	22.80	5.60	1.70
Վրաստան	15,1	5	7.25	6	11.80	-4.00	43.90	-13.30	2.40
Հայաստան	11,6	7,5	6.00	1	17.80	-4.78	52.60	-3.40	481

Регион и мир, 2018, № 3

Համաշխարհային տնտեսությունը 2017թ-ին. գործընթացներ և զարգացումներ (անալիտիկ հայացք)

Մանուկյան Ս.Ֆ., Բախշյան Ս.Մ.
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Հայաստան, Երևան)
sarkis.ar@gmail.com; bakhshyan1997@mail.ru

Վճռորոշ բառեր՝ գլոբալ տնտեսություն, տնտեսական քաղաքականություն, տնտեսական հիմնախնդիրներ, պահանջարկի անկում, պարտքային բեռի մեծացում, ներդրումների անկում, գործազրկության բարձր մակարդակ, աշխարհատնտեսական կենտրոններ

Мировая экономика в 2017: процессы и развития (аналитический взгляд)

Манукян С.Ф., Бахшян С.М.
Национальный политехнический университет Армении (Армения, Ереван),
sarkis.ar@gmail.com; bakhshyan1997@mail.ru

Резюме: Армения - это небольшая частица мировой экономики, на которое значительное влияние оказывают мировое экономическое развитие, а также процессы, происходящие во всех основных геоэкономических центрах. Обеспечение объективной оценки этих событий и явлений помогает принимать правильные решения для осуществления экономической политики. Необходимо также воспользоваться теми возможностями, которые сегодня способствуют подъему мировой экономики, в то же время предотвратить опасности, связанные с глобальной экономикой.
Ключевые слова: глобальная экономика, экономическая политика, экономические проблемы, снижение спроса, увеличение долговой нагрузки, снижение инвестиций, высокий уровень безработицы, геоэкономические центры.

World Economy in 2017: processes and progress (analytical view)

Manukyan S.F., Bakhshyan S.M.
National Polytechnich University of Armenia (Armenia, Yerevan),
sarkis.ar@gmail.com; bakhshyan1997@mail.ru

Abstract: Armenia comprises a small part of the world economy, on which the global economic progress along withthe processes taking place in all the major geo-economic centers, have some impact. Providing an objective assessment to these phenomena as well as to the progress helps to make the right orientation in order to implement further economic policies. It is also important to take advantage of the opportunities that contribute to the rise of the global economy today meanwhile preventing the threats brought on by the global economy.
Keywords: world economy, economic policy, economic problems, demand reduction, increase in debt load, reduction of investments, high unemployment rate, geo-economic centers.

Համաշխարհային տնտեսության ընդհանուր վիճակի նկարագիրը 2017 թ.-ին. Համաշխարհային տնտեսությունը 2017թ.-ին տարբերվեց նախորդ տարվանից իր առավել մեծ տնտեսական ակտիվությամբ, որտեղ տնտեսական աճը ըստ Միջազգային Արժութային Հիմնադրամի նախնական տվյալների կազմեց մոտ 3,7%[1]: ԱՄՆ-ն և Եվրագոտու երկրները, ինչպես նաև Հնդկաստանը և Չինաստանը գրանցեցին ոչ վատ արդյունքներ, նախնական տվյալներով ԱՄՆ-ում ՀՆԱ-ի աճը կազմեց 2,3%, Եվրագոտում՝ 2,4%, Չինաստանում՝ 6,8%, Հնդկաստանում՝ 6,7%, Ճապոնիայում՝ 1,8%, Կանադայում 3%, Ավստրալիայում՝ 2,8%, Հարավային Կորեայում՝ 3%: Մի փոքր ցածր աճ գրանցվեց Մեծ Բրիտանիայում 1,7%, ՀԱՀ-ում՝ 0,8%, Բրազիլիայում՝ 1,1% և Ռուսաստանում՝ 1,8%: Իսկ Վենեսուելայում գրանցվել էր 18,6% անկում, նաև 741% հիպերգնաճ: Ընդհանուր առմամբ նախորդ տարի համաշխարհային տնտեսության մեջ նկատվեց դրական բեկում և վիճակը կարելի է գնահատել բավարար: Դա կարևոր է, քանի որ Եվրամիության, Չինաստանի և ԱՄՆ-ի աճը զգալիորեն նպաստում է մյուս զարգացող երկրների տնտեսություններին:

[1]Перспективы развития мировой экономики, www. IMF.org

Ինչպես միշտ միջազգային շուկաները սուր էին արձագանքում քաղաքական հակամարտություններին, որոնք նախորդ տարի քիչ չէին: 2017թ.-ը կարևորվեց հատկապես ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի (ԴՊՀ) դրամավարկային քաղաքականության խըստացմամբ, կրիպտոարժույթների փոխարժեքի զգալի բարձրացմամբ, ֆոնդային բորսաների ինդեքսների բարձր աճով, գրանցվեց հումքային ապրանքների գների աճ և զարգացող երկրների տնտեսական աճի արագացում:

Կարևորագույն իրադարձություն էր OPEC-ի և նրա կազմի մեջ չմտնող երկրների համաձայնությունը նավթի արդյունահանման ծավալների կրճատման վերաբերյալ: Դա բերեց 2017 թ.-ից նավթի գների աճին, իսկ դա իր հերթին նավթ արտահանող երկրների ազգային արժույթների ուժեղացմանը: Հիշեցնենք, որ 2016 թ.-ի վերջին OPEC-ը և կարտելից դուրս նավթ արդյունահանող 11 երկրներ պայմանավորվեցին 1,8 մլն. բարելով կրճատել նավթի արդյունահանման օրական ծավալները՝ համաշխարհային շուկայում նավթի առաջարկի և պահանջարկի ծավալների հավասարակշռություն ապահովելու համար, դա շարունակվելու է մինչև 2018թ.-ի վերջը:

Արտարժույթի շուկան նույնպես հանգիստ չէր: Եվրոն, ինչպես նաև չինական յուանը արժեվորվեցին ամերիկյան դոլարի նկատմամբ: Դոլարը կորցրեց իր դիրքերը նաև այլ արտարժույթների նկատմամբ, այդ թվում բրիտանական ֆունտի, շվեյցարական ֆրանկի, ռուսական ռուբլու: ԱՄՆ-ի ԴՊՀ-ն 3 անգամ անդրադարձավ բազային տոկոսադրույքին, բարձրացնելով 0,5-0,75%-ից մինչև 1,25-1,5%: Չնայած դրան դոլարի փոխարժեքը թուլանում էր: Այս տարի նույնպես սպասվում է բազային տոկոսադրույքի բարձրացում ԴՊՀ-ի կողմից: Երկար տարիներ ԴՊՀ-ն և տարբեր երկրների կենտրոնական (ազգային) բանկերը իրենց տոկոսադրույքները պահում էին ցածր մակարդակի վրա, դա էլ իր հերթին ազդում էր գլոբալ ֆինանսական և տնտեսական միտումների վրա: Արդյունքում համաշխարհային տնտեսության մեջ հայտնվեցին ավելի շատ փողեր, որոնց փոխարժեքները թեև նվազում էին, սակայն օգնեց այդ պետություններին որոշակիորեն ակտիվացնել իրենց տնտեսությունները և խուսափել տնտեսական խիստ անկումից: Մի շարք երկրների ԿԲ-երի կողմից ազգային արժույթների բազային տոկոսադրույքների բարձրացման միտումները նշանակում է էժան փողերի դարաշրջանի ավարտը, որը ոչ միայն մեծ ազդեցություն կունենա ԱՄՆ-ի և այդ երկրների, այլ նաև համաշխարհային տնտեսության վրա:

ԱՄՆ-ի տնտեսությունից ավելի արագ աճում են իր մրցակից կենտրոնները: Անսպասելի արագ տնտեսական աճ տեղի ունեցավ Եվրոպայում և Ասիայում: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի 120 երկրներում նկատվեց տնտեսական աճ, դա ամենամեծ սինխրոնիզացված աճն էր, որ նկատվեց 2010 թ.-ից հետո[2]: Մի շարք երկրներում նկատվեց նաև զբաղվածության աճ: Սակայն աշխատավարձի բարձրացման տեմպերը մնացին ցածր: Միջազգային առևտրի տեմպերը ավելի արագ աճեցին, քան ՀՆԱ-ի աճի տեմպն էր: Ներդրումները նույնպես աճ գրանցեցին, որոնք էներգետիկ սեկտորում թույլ ներդրումների պատճառով 2016թ.-ին թուլացել էին: Գնաճը չափավոր էր և վերահսկելի: Չնայած քաղաքական անկայունությանը, համաշխարհային ֆոնդային բորսաները նույնպես գրանցեցին բարձր աճ: Հատկապես ամերիկյան տնտեսությունը աչքի ընկավ բորսաներում աճի միտումներով՝ S&P 500, Dow Jones և Nasdaq Composite-ի ինդեքսները հասան իրենց առավելագույն սահմաններին երկնիշ աճով: Nikkei 225, DAX 30, FTSE 100, Hang Seng-ը նույնպես ոչ պակաս տեմպերով աճ գրանցեցին: Աճեցին նաև անշարժ գույքի գները: Զգալի աճեցին նաև սև և գունավոր մետաղների գները[3]:

Շարունակում էր մեծանալ Չինաստանի աշխարհաքաղաքական և տնտեսական նշանակությունը: Եթե տարվա սկզբում տնտեսական աճի տեմպերը ցածր էին, ապա տարին Չինաստանը փակեց բարձր աճով: Չինաստանը աստիճանաբար դառնում է համաշխարհային տնտեսության հիմնական արտադրողը, իսկ մոտակա մի քանի տարիների ընթացքում այն կարող է դառնալ աշխարհի ամենամեծ ներմուծում ունեցող երկիրը, առաջ անցնելով ԱՄՆ-ից: Դա դրական կազդի համաշխարհային տնտեսության վրա, քանի որ լուրջ խնդիր է մնում դեռևս գլոբալ տնտեսության ցածր

[2] *World Economic Outlook Update, January 2018, http://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2018/01/11/world-economic-outlook-update-january-2018*

[3] http://metallicheckiy-portal.ru/index-cen-lme

պահանջարկը: Միջազգային տնտեսական հանրության ուշադրության կենտրոնում է եղել չինական պարտքի արագ ավելացումը, որի աճի տեմպերը գերազանցում էին այդ երկրի ՀՆԱ-ի աճի տեմպերին՝ ինչը կարող է ֆինանսական ցնցումների պատճառ դառնալ, որը շատ ռիսկային է: Չինաստանը հանել է օտարերկրյա ներդրումների սահմանափակումները իր տարածքում, որն աննախադեպ քայլ էր, քանի որ ներդրումների գրավչությունը նվազել էր ներքին շուկայի ուժեղ կանոնակարգման պատճառով[4]:

Միջազգային ֆինանսական շուկաների համար առավել դինամիկ և հետաքրքրական եղավ կրիպտոարժույթների սեկտորը, հատկապես կապված բիտքոյնի հետ: 2017 թ.-ի ընթացքում այդ թվային արժույթը թանկացավ տասնյակ անգամ, դեկտեմբերին հասնելով առավելագույն 19,6 հազար դոլարի: Եթե Չինաստանը արգելեց դրանցով գործարքները և կրիպտոարժույթով զբաղված բորսաների գործունեությունը, ապա Ճապոնիան այն ընդունեց որպես պաշտոնական վճարման միջոց:

ԵՄ-ում և ԱՄՆ-ում տնտեսական ակտիվությունը, ինչպես 2017 թ.-ին, այնպես էլ 2018թ.-ին բարձր կլինի, մոտավորապես 2-3% սահմաններում: Պահպանել աճի բարձր տեմպերը, տեխնոլոգիական առաջընթացի օգուտներից ակտիվ օգտվել, սա Եվրամիության խնդիրն է ընթացիկ տարում: Տնտեսապես զարգացած երկրները նպատակ են դնում 2%-ի սահմաններում պահպահել գնաճը:

Շատ երկրներ հակվում են ներքին շուկաների պահանջարկի խթանմանը: Առավել բարձր տնտեսական աճ է ենթադրվում Ասիայի զարգացած երկրներում, որոնք առավել զգայուն են միջազգային առևտրի և գլոբալ ներդրումների նկատմամբ: Առավել կատիվանա տնտեսությունը Լատինական Ամերիկայում, դա բացատրվում է Մեքսիկայում վիճակի բարելավմամբ, որն էլ պայմանավորված է ԱՄՆ-ի տնտեսական ակտիվացմամբ, Բրազիլիայի հնարավոր վերելքով, բորսայական ապրանքների գների աճով: Սակայն Վենեսուելայում տնտեսության վիճակը ավելի կվատանա, քաղաքական անկայունության պատճառով:

[4] 10 экономических хайпов года, http://www.vestifinance.ru/articles/95689

Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Պակիստանում մոտակա երկու տարիների ընթացքում տնտեսական աճի տեմպերը կարագանան: Նավթի գների առկա մակարդակը կնպաստի հումք արտահանող երկրների ներքին պահանջարկի ավելացմանը, այդ թվում նաև Սաուդյան Արաբիայում: Աֆրիկյան մի շարք երկրներում քաղաքական անկայությունը զսպում է ներդրումների աճը: ԱՊՀ-ում տնտեսական աճը 2% կգերազանցի, պայմանավորված Ռուսաստանում աճի հանգամանքով[2]:

Գլոբալ ռիսկերից են՝ Եվրոպայում բանկային համակարգի թուլությունը, Չինաստանի ներքին պարտքի ծավալների աճը, ԱՄՆ-ի մաքսատուրքերի կոշտացման քաղաքականությունը, ԱՄՆ-ում անցումը կոշտ ֆինանսական կառավարման: ԵՄ-ից դուրս գալուն հակված պոպուլիստական ուժերը ուժեղանում են, հատկապես Ֆրանսիայում և Իտալիայում, այսինքն ԵՄ-ի ապաինտեգրացման ուժերի աշխուժացումը նույնպես ռիսկեր են գլոբալ տնտեսության համար: Թրամփի մտադրությունները մաքսային քվոտաների միջոցով սահմանափակել ԱՄՆ ներմուծվող ապրանքները, ֆինանսական շուկաներում անհանգստություն է առաջացնում: Անհանգստություն է առաջացնում նաև վարկավորման պայմանների խստացումը, որը կփոխարինի մեղմ վարկավորմանը:

2018թ.-ին վերլուծաբանները կանխատեսում են համաշխարհային տնտեսության դրական դինամիկա: Լարվածությունը Մերձավոր Արևելքում, գուցե նաև Հյուսիսային Կորեայի շուրջը՝ կպահպանվի: Աֆղանստանը և Ուկրաինան նույնպես լարվածության օջախներ են: Կենտրոնական բանկերի քաղաքականությունը կմնա համաշխարհային տընտեսության վրա ազդեցության կարևոր գործոն: Ռիսկերից են բազմաթիվ երկրներում պահանջարկի անկումը և պետական պարտքի աճը: Իսկ պրոտեկցիոնիզմի աճի վտանգը միջազգային առևտրում ռիսկեր է ստեղծում գլոբալ արտադրության աճի համար:

Համաշխարհային խոշոր կենտրոններում տնտեսական զարգացումները

Միացյալ Նահանգներ: Չնայած տնտեսական ակտիվությանը, երկարաժամկետ կտրվածքով ամերիկյան տնտեսությունը լուրջ

ռիսկեր է պարունակում: 2018 թ.-ին տնտեսական աճը կանխատեսվում է 2-3% սահմաններում[5]: Գնաճի նպատակային նիշից ցածր մակարդակը կապահովվի նաև այս տարի: Սակայն, Դաշնային պահուստային համակարգը տնտեսության կտրուկ ակտիվացման և բարձր գնաճի դեպքում հնարավոր է, որ կբարձրացնի տոկոսադրույքները: Ցածր է գործազրկության մակարդակը՝ 4,1%:

Ըստ USdebtclock.org-ի Միացյալ Նահանգները ամենամեծ պարտատուն է՝ 21,1 տրիլիոն դոլար է ներկայումս պետական պարտքը կազմում, որը գերազանցում է ՀՆԱ-ի ցուցանիշը (19,8 տրիլիոն դոլար): Սակայն հաշվի առնելով ֆինանսական, ոչ ֆինանսական և տնային տնտեսությունների համախառն պարտքը, ապա այն գերազանցում է 70 տրիլիոն դոլարը: Իսկ 2011 թ.-ի գնահատականներով, սոցիալական պարտավորությունների պարտքը կազմում է 112 տրիլիոն դոլար, այդ բոլորը միասին գերազանցում է 182 տրիլիոն դոլար: Այն դեպքում, երբ ԱՄՆ-ի ամբողջ ակտիվները կազմում են 134,6 տրիլիոն դոլար: Այսինքն ԱՄՆ վաղուց տնտեսական կամ արդյունաբերական երկիր չէ, այլ ֆինանսական[6]: Սա Միացյալ Նահանգների տնտեսության ամենամեծ խնդիրն է, որը նաև գլոբալ նշանակություն ունի:

Դոլարի փոխարժեքի փոփոխությունը գործոններից մեկն է, որն ազդում է ԱՄՆ-ի և ամբողջ աշխարհի առևտրի վրա: Թրամփից առաջ նախկին կառավարությունը Օբամայի ղեկավարությամբ, որդեգրել էր դոլարի ուժեղացման քաղաքականություն: Սակայն Թրամփի վարչակազմի նպատակն է թուլացնել դոլարը, ինչը բավարար չէ տնտեսության կայուն աճի համար: Թրամփը մի անգամ չէ, որ բողոքել է դոլարի բարձր փոխարժեքից, որի պատճառով առևտրի պակասորդը կազմել է 2017 թ.-ին 500 մլրդ. դոլար: Ամերիկյան արտահանումը թանկ է նստում արտասահմանյան գնորդների համար[7]:

Թրամփը սպառնում էր ԵՄ-ից, Չինաստանից, Հնդկաստանից ներմուծման ապրանքների դեմ սահմանափակող տարիֆներ կիրառել, ինչպես նաև ընտրովի դեֆոլտի ենթարկել Չինաստանի 1 տրիլիոն դոլարի չափով ամերիկյան պարտավորությունները: Սակայն Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) կարող է բեկանել ԱՄՆ-ի կողմից տարիֆների սահմանափակումը: Եթե Թրամփին հաջողվի Չինաստանին համոզել բացել սահմանները ամերիկյան արտահանման դիմաց, ապա դա կլինի ԱՄՆ-ի մեծ հաջողությունը: Չի բացառվում ԱՄՆ միակողմանի դուրս գալը բազմաթիվ առևտրային համաձայնություններից:

2018թ.-ի ռիսկերից է Թրամփի քաղաքականությունը, որն իրականացնում է կոշտ պրոտեկցիոնիզմի և առևտրային արգելքների խստացման քաղաքականությունը, որը կհարվածի այլ երկրների արտահանմանը դեպի ԱՄՆ:

Չինաստան: 2018թ.-ին տնտեսական աճը կլինի կայուն մակարդակի վրա: 2017թ.-ի տնտեսական աճը տեղի է ունենում ԱՄՆ և ԵՄ-ի տնտեսության աճի ֆոնի վրա: Չինաստանը իսկապես զարգանում է՝ աճ է գրանցել մարդկային զարգացման ներուժի ցուցիչով՝ 0,738 միավոր և ըստ շնչին ընկնող անվանական ՀՆԱ-ով, որը կազմել է 8,1 հազար դոլար, այս ցուցանիշներով արդեն հասնում է միջազգային ցուցիչներում միջին դասի ցուցանիշներին:

Ներմուծումը նախորդ տարվա համեմատ աճել է 15,6% -ով, իսկ արտահանումը՝ 10,3%-ով, իսկ արտահանման ծավալները բարձր են ներմուծումից և առկա է դրական առևտրային հաշվեկշիռ: Գնաճը ցածր է 1,8%, ցածր է նաև պաշտոնական գործազրկության մակարդակը՝ 3,9%: Հիմնական հիմնախնդիրը մնում է տնտեսության բարեփոխումը՝ տնտեսության կառուցվածքը օպտիմալացվում է: Ներքին շուկան ունի հսկայական ներուժ, կառավարությունը բարելավում է ներդրումային միջավայրը: Ներդրումների և արտահանման վրա հիմնված մոդելը թեև աշխատում է, բայց ավելի ու ավելի վատ է աշխատում և տնտեսական աճ դժվար է ապահովում: Ներքին պարտքային ճնշումը աճում է և ռիսկային է ըստ ռեյտինգային գործակալությունների: Սպասվում է խոշոր ֆիրմաների պարտքային պարտավո-

[5] The Economist: В 2018 году экономика США может "перегреться"

[6] Об экономике США. Наконец-то мы услышали, что "король — голый", https://tsargrad.tv/articles/ob-jekonomike-ssha-nakonec-to-my-uslyshali-chto-korol-golyj_106155

[7] Министр финансов США в Давосе: Слабый доллар поддерживает экономику, Подробнее: https:// eadaily. com/ru/news/2018/01/24/ministr-finansov-ssha-v-davose-slabyy-dollar-podderzhivaet-ekonomiku

րությունների ճնշման թուլացում, ինչպես նաև պետական ընկերությունների ուժեղացում և փոքր և միջին ինովացիոն արտադրությունների ընդլայնում:

Սպառումը 2014թ.-ից ստագնացիա է ապրում Չինաստանում: Խնդիրներից է գերարտադրությունը: Լուծումը առաջարկի բարեփոխումն է, որը նշանակում է ավելցուկային արտադրությունների փակում՝ հատկապես ածխի, պողպատի ճյուղերում: Թեև իշխանությունները փորձում են ազատվել ավելցուկային և բնապահպանական առումով «կեղտոտ» արտադրական հզորություններից և նվազեցնել շրջակա միջավայրի աղտոտման ծավալները, սակայն աճի բարձր տեմպեր ապահովում են հենց «աղտոտող» ճյուղերը, այդ թվում մետալուրգիական, քիմիական: Չինաստանը կուտակել է ոչ միայն ֆինանսական, մարդկային կապիտալ, այլ նաև տնտեսական, սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրներ: Ինչպես հաջողությունները, այնպես էլ հիմնախնդիրները մասշտաբներով ահռելի են: Գյուղատնտեսական հողերի 20%-ը և ստորգետնյա ջրերի 80%-ը աղտոտված են և անպիտան օգտագործման համար: Բնակչությունը ծերանում է, իսկ սոցիալական անհավասարության առումով սոցիալիստական Չինաստանը գերազանցել է կապիտալիստական երկրներին այդ ցուցանիշով[8]:

Չինովնիկների դիմադրությունը և նախկին համակարգի իներցիան դանդաղեցնում են ռեֆորմները: Ցածր պահանջարկը պայմանավորված է տնային տնտեսությունների ցածր եկամուտներով: Կարևոր հիմնախնդիր է ներքին պարտքը, քանի որ համաշխարհային ճգնաժամից հետո կառավարությունը մոտ 568 մլրդ. դոլարին համարժեք յուան է վարկ տվել տեղական իշխանություններին, որը թույլ տվեց տնտեսական աճի տեմպերը պահպանել, սակայն ձևավորվել են հսկայական ծավալի «վատ պարտքեր», քանի որ չինովնիկները մտածում էին պարզապես ինչպես ծախսել այդ վարկերը, արդյունավետ գործարաններ կառուցելու փոխարեն և արդյունքում «վատ պարտքերի» բուրգը աճեց: Զգալի ռեսուրսները ուղղվում էին վնասաբեր նախագծերի վրա: Տարածաշրջանների ղեկավարները շարունակում են կառուցել պողպատագործական գործարաններ, անբնակ թաղամասեր, 10 գոտիանոց մայրուղիներ, որպեսզի տնտեսական աճի ցուցանիշներ ներկայացնեն: Բազմաթիվ ներդրումներ կարծես թե վերածվում են ավելորդ ծախսերի:

Առանց մասշտաբային վերակազմավորման տնտեսական կայունության հնարավոր չէ հասնել: Աճող պարտքերը և բազմաթիվ ֆինանսական փուչիկները՝ ինչպես օրինակ անշարժ գույքի շուկան դարձել են լուրջ խնդիրներ Չինաստանի իշխանության համար: Չինական պարտքի հիմնախնդիրը բարդ է և խճճված, դրա լուծումը հարվածում է որոշ ազդեցիկ շերտերին: Եթե պարտքի խնդրի լուծումը պետք է կատարվի տնային տնտեսությունների հաշվին, ապա հենց տնային տնտեսություններն են ապահովում սպառման աճը: Իսկ դա տեղափոխել փոքր և միջին բիզնեսի վրա նույնպես դժվար է, քանի որ հենց այդ սեկտորն էլ ապահովում է իրական աճը տնտեսության մեջ: Արտասահմանյան ընկերությունների քանակը այս առումով մեծ չէ: Մնում է պետական սեկտորը, որը ներառում է կենտրոնական և տարածաշրջանային նշանակության ձեռնարկություններին, սակայն այստեղ էլ ուժեղ կլինի դրանց կողմից դիմադրությունը:

Սոցիալական խնդիրները սրվում են, քանի որ զանգվածային կրճատումներ են ընթանում արդյունաբերության ոլորտում, զբաղվածների թիվը կրճատվում է, բարձր տարիք ունեցող բնակչության թիվը աճում է: Փորձ է արվում ստեղծել սոցիալական ապահովության նոր համակարգ: Եթե առաջ 4-5 աշխատողին բաժին էր ընկնում մեկ թոշակառու, հիմա 2-3 աշխատողին մեկ թոշակառու: Միտումը շարունակվելու է: Սոցիալական անհավասարությունը և ավելցուկային աշխատուժը կարող է բերել տհաճ հիմնախնդիրների:

Տնտեսական բուռն աճի ժամանակ, քիչ ուշադրություն էին դարձնում էկոլոգիայի խնդրին, որն այժմ դարձել է տնտեսական աճին խոչընդոտ: Չինաստանը պատասխանատու է աշխարհում վնասակար աղտոտումների 27%-ի համար: Բոլոր խոշոր քաղաքներում օդի աղտոտվածությունը բարձր է: Անապատացումը արագորեն ընդլայնվում է գյուղանտնտեսական հողերի հաշվին: Բնապահպանական ծախսերը որոշ գնահատումների

[8]Век с препятствиями, Что нужно преодолеть Китаю для достижения «первой столетней цели», https://www.kommersant.ru/doc/3434430

համաձայն կազմում են ՀՆԱ-ի 6%-ը: Չինաստանը այժմ ընտրություն է կատարում՝ տնտեսության կամ էկոլոգիայի միջև: Օրենքները խիստ են աղտոտվածության դեմ և առաջադիմական: Ներկայումս շատ խիստ բնապահպանական օրենքները և խիստ ուշադրությունը փոքրացնում են շահույթները արդյունաբերական ձեռնարկություններում: 2016թ.-ին իշխանությունների կողմից որոշում ընդունվեց կրճատել արտանետումները: Դա ենթադրում է ոչ միայն արգելող միջոցառումներ, այլ նաև «կանաչ էկոնոմիկայի» տնտեսական խթաններ: Իշխանությունները վստահ են տնտեսական զարգացման մոդելի հիման վրա լուծել այդ խնդիրները՝ կեղտոտ արտադրություններ տեղափոխելով Չինաստանի սահմանից դուրս, անցում կատարել թվային տնտեսության և ծառայությունների էկոնոմիկայի:

Հաջորդ հիմնախնդիրը պետական կառավարման բարեփոխումներն են՝ կենտրոնի և տարածաշրջանի ղեկավարների փոխհարաբերությունները կարգավորելը, քանի որ վերջիններս հաճախ բոյկոտում են կենտրոնի հրահանգները: Հաճախ կենտրոնի հրահանգները կորչում են ահռելի բյուրոկրատական-կոռումպացված ապարատում: Ցածր աշխատավարձը փոխհատուցում են պետական միջոցների հափշտակումների միջոցով:

Չինաստանը աստիճանաբար հրաժարվելու է դոլարից միջազգային հաշվարկներում, պահպանելով յուանի ուժեղացման կուրսը, միջազգային առևտրում գործարքների ծավալը շատացնելով գործընկերների հետ և խստացնելով հսկողությունը ազգային արժույթի փոխարժեքի տատանումների նկատմամբ: Դրանով ամերիկյան դոլարը նույնպես մեծ վտանգի առջև է կանգնած:

Չինաստանում ռազմավարական խնդիր է դրված կատարելագործել կրթության և առողջապահության որակը և սպասարկման ենթակառուցվածքները բարելավել:

Կարևորագույն հիմնախնդիր է դառնում մնում ԱՄՆ-ի կողմից չինական ապրանքների նկատմամբ նոր սահմանափակումները, որի արդյունքում Չինաստանը հարյուրավոր միլիոն դոլարի վնասներ է կրելու: Չինական կողմի պատասխան քայլերը նույնպես ռիսկեր են ստեղծում գլոբալ տնտեսության համար:

Ճապոնիայի տնտեսությունը զարմացրեց բոլորին նախորդ տարի: Այն կարելի է բնութագրել որպես բարելավում: 7 եռամսյակ անընդհատ ճապոնական տնտեսությունը աճ ցույց տվեց, իսկ նախորդ տարվա վերջին 16 տարիների ամենաբարձր աճն է ցույց տվել[9]: Բանկային տոկոսադրույքը կազմում է 0,1%: 5 եռամսյակ շարունակ գործարար ակտիվության ինդեքսը խոշոր, միջին ու փոքր ձեռնարկությունների համար աճում է, սա ցույց է տալիս, որ տնտեսության կոնյուկտուրայի բարելավումը տարածվում է խոշոր, փոքր և միջին ձեռնարկությունների վրա: Սպառողական գների ինդեքսը նույնպես աճում է, այն 0,64 % է կազմել 2017 թ.-ին, 2016 թ.-ի 0,5% -ի համեմատ: Գործազրկության մակարդակը մնում է 2,8% սահմաններում: Թեև պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է 250%, սակայն այն վտանգավոր չէ ճապոնական տնտեսության համար, քանի որ հիմնականում դա ներքին պարտք է:

Ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, ինչպես նաև 2014 թ.-ի հարկերի բարձրացումից հետո, 2016 թ.-ից ճապոնական տնտեսությունը կայուն աճ է ցույց տալիս: Ամեն եռամսյակ այն աճում է 0,9-2,6%-ով: Ենթադրվում է, որ աճը տեղի է ունենում խոշոր ընկերությունների կորպորատիվ ներդրումների աճի արդյունքում: Տնտեսական աճի լոկոմոտիվը դարձավ նաև արտահանման՝ ճապոնական ապրանքների նկատմամբ աճում է վստահությունը: 2012 թ.-ին իշխանության եկած Սինձո Աբէն փորձում է դադարեցնել ճապոնական տնտեսության երկարատև դանդաղ զարգացումը և դեֆլյացիան (գնանկումը): Դա փորձում է անել աշխատավարձի աճով, սպառման խթանմամբ և գնաճի տեմպերի բարձրացմամբ: Թույլ իենը և ուժեղացող տնտեսությունը թույլ տվեցին ճապոնական կորպորացիաներին ավելացնել իրենց շահույթները Չինաստանում և ԱՄՆ-ում: Դա ակնհայտ էր հատկապես բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ընդգրկված ընկերությունների համար: Ճապոնական իենը թանկանում էր մինչև 2016 թ.-ի աշունը, որից հետո այն սկսեց թուլանալ:

Ֆոնդային բորսաներում ինդեքսները վերջին 25 տարում աշխարհի երրորդ տնտեսություն ունեցող երկրում հասան բարձր մա-

[9] Экономика Японии удивила всех, http://expert.ru/2017/11/15/ekonomika-yaponii-ustanovila-rekord-veka/

կարդակի: Իսկ գնաճը դեռևս ցածր է 2%-ից, որը ԿԲ-ի սահմանված թիրախային մակարդակն է, դա իհարկե ավելի լավ է՝ քան տասնամյակներ տևող դեֆլյացիան: Զբաղվածության և աշխատավարձի աճը պետք է մեծացնեն ներքին սպառումը, սակայն միջին աշխատավարձի աճ դեռևս չի նկատվում, դա էլ ստիպում է շատ ճապոնացիների գնումների չշտապել, դա էլ ազդում է սպառման վրա: Աբէն կոչով դիմեց ընկերություններին բարձրացնել աշխատավարձը 3%-ով, որպիսի նպաստեն սպառման աճին: Մինչև 2019 թ.-ի վերջը նախատեսվում է վաճառքից հարկերը աստիճանաբար ավելացնել 8-ից մինչև 10%, որպիսզի հսկողության տակ պահի բյուջեի դեֆիցիտի աճը:

Աբէի կառավարությունը նախատեսում է ավելի խորը կառուցվածքային հիմնախնդիրների լուծում: Մասնավորապես ժողովրդագրական ճգնաժամը, քանի որ բնակչությունը նվազում է և ծերանում, որն ուժեղացնում է աշխատուժի պակասորդը: Դրա համար նախատեսվում է իրականացնել անվճար մինչդպրոցական կրթություն բոլորի համար և բարձրագույն կրթություն ցածր վճարունակություն ունեցող ուսանողների համար: Ճապոնիայի տնտեսությունը այս տարի կընդլայնվի զբոսաշրջիկների աճի շնորհիվ և ներքին պահանջարկի աճի հաշվին[10]:

Եվրամիություն: Եվրամիության և Եվրագոտու երկրները անսպասելի բարձր արդյունք ցույց տվեցին, որը բարձր էր ԱՄՆ-ի և Ճապոնիայի ցուցանիշներից: Այս տարի էլ դրական իներցիան կշարունակվի: Ըստ Eurostat եվրոպական վիճակագրական գործակալության, ինչպես Եվրագոտու 19 երկրներում, այնպես էլ Եվրամիության 28 երկրներում ՀՆԱ-ի ընդհանուր ցուցանիշները 2017 թ.-ին համապատասխանաբար 2,7% և 2,6%-ով աճել են: Սա 2007 թվականից ի վեր գրանցված ամենաբարձր ցուցանիշն է: 2018 թ.-ի առաջին ամսվա տվյալներով նույնպես տնտեսական և ֆինանսական ցուցանիշները թափ են հավաքում: Ընդ որում, նախորդ տարի Իսպանիայի տնտեսությունը աճել է 3,1%-ով, Գերմանիայինը՝ 2,5%-ով, Ֆրանսիայինը՝ 1,8%-ով: Գործազրկությունը Եվրագոտում կազմել է 8,7%: ԵՄ-ի շուկան ավելի շատ ներդրումներ է ներգրավել, քան մյուս շուկաները: Մոտ 424 մլրդ. եվրոյի ուղղակի ներդրումներ են հոսել ԵՄ երկրներ: Դա նպաստեց աշխատանքի արտադրողականության աճին, մրցունակության ուժեղացմանը և արդյունավետության բարձրացմանը: Աճում է նաև ներքին պահանջարկը և արտահանումը: Բրյուսելի արտաքին առևտրի քաղաքականությունը նպաստում է առևտրային արգելքների վերացմանը կամ պարզեցմանը բազմաթիվ երկրների հետ՝ ազատ առևտրի համաձայնագրեր կնքելով[11]: Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրները նույնպես հաջողություններ են գրանցում, օրինակ Էստոնիան թվային տեխնոլոգիաների, Լեհաստանը IT, Սլովակիան, Ռումինիան և Չեխիան մեքենաների արտադրության ոլորտներում: Ավելի շատ են այս երկրները R&D հատկացումներ անում, իսկ ներդրումները տեխնոլոգիաների ոլորտում կազմել է 11,7 մլրդ. դոլար: Եթե նախկինում Ռումինիան հետնամասում էր իր կոռուպցիայի և աղքատության պատճառով, մարդու իրավունքների վատ վիճակի, աշխատանքային միգրացիայի ծավալներով, ապա հիմա տնտեսական աճի տեմպերով առաջին տեղում է՝ 8,8% աճով, որտեղ միջինը ԵՄ-ը 2,6% է: Իսկ ահա եվրոյով եկամուտները Իտալիայում նվազում են, տնտեսական աճը կազմել է 1,6%, արտաքին պարտքը աճում է, որը կազմում է ՀՆԱ-ի 140%-ը, տնտեսական հեռանկարները մռայլ են:

Կարելի է ասել, ԵՄ դարձել է միջազգային առևտրի լոկոմոտիվը, բեկում կատարվեց թույլ տնտեսական աճից դեպի բուռն աճ (ըստ եվրոպական չափանիշների): Աննախադեպ խթանող ծրագրերը ԿԲ-ի կողմից դրական արդյունք տվեցին: Դրական կանխատեսումներ են արվում այս տարվա համար:

ԵՄ մարտահրավերներից են՝ Բրյուսելի հսկողության բացակայությունը անդամ պետությունների բյուջետային միջոցների վրա, բնակչության ժողովրդագրական խնդիրները: Խնդիրներից են սանկցիաները Ռուսաստանի դեմ, քանի որ սանկցիաները ոչ միայն Ռուսաստանի դեմ են, այլ նաև Եվրամիությանը

[10]Такумори Акиёси, Прогноз для экономики Японии на 2018 год: перспективы самого продолжительного расширения конъюнктуры за послевоенный период, https://www.nippon.com/ru/currents/d00375/

[11] Евросоюз дождался экономического подъема, http://www.ng.ru/world/2018-01-25/7_7158_eurosouz.html

թուլացնելու նպատակ ունեն: Վաշինգտոնի պրոտեկցիոնիզմի հնարավոր քաղաքականությունը առևտրային պակասորդի կրճատման նպատակով, նույնպես կարող է վնաս տալ ԵՄ-ին: Արտաքին առևտրի դրական հաշվեկշիռը մեծացել է՝ 2017 թ.-ին կազմելով 386,1 մլրդ. եվրո: Դա արժանացել է Թրամփի քննադատությանը, որը մեղադրում է ԵՄ կառույցներին, ավելի շուտ եվրոպական արտահանողներին անարդարության մեջ և սպառնում է համապատասխան քայլեր կատարել:

Խնդիրներից են՝ բնակչության ծերացումը, գործազրկության բարձր մակարդակը՝ յուրաքանչյուր հինգերորդը աշխատանք չունի, իսկ դա բացասական է ազդում ոչ միայն տնտեսական աճի, այլ նաև քաղաքական կայունության վրա: ԵՄ-ում մեծ պարտքեր են կուտակվել, իսկ բանկային համակարգի վերականգնման համար ժամանակ է պետք:

Կան գործոններ, որոնք կարող են ապաինտեգրացնել ԵՄ-ը: Դրանք են եվրագոտու բարեփոխման անհրաժեշտությունը, մրցակցությունը Ֆրանսիայի և Գերմանիայի միջև, արևելաեվրոպական երկրների բունտարային տրամադրությունները, աջ և ռեգիոնալ անջատողականների շարժումները[12]: Ֆրանսիայում և Նիդեռլանդներում աճում է եվրոսկեպտիկների թիվը: Հաջորդ խնդիրը՝ Եվրագոտու երկրների միջև դիսբալանսի հաղթահարումն է: Միգրացիոն պրոբլեմը ապակայունացնում է սոցիալական, տնտեսական և քաղաքական կայունությունը, կան անհամաձայնություններ եվրոպական երկրների միջև փախստականների քվոտաները բաշխելու հարցերում: ԵՄ-ի զարգացման խոչընդոտող հանգամանք է լինելու նաև Կատալոնիայի շուրջ անորոշությունը և Բրէկզիտը (Brexit), եվրոսկեպտիկների ուժեղացումը:

Ռուսաստանը վերջապես դուրս եկավ ճգնաժամից, տնտեսական աճը կազմել է 1,8%: ՀՆԱ-ն աճ գրանցեց, բայց դեռ այն կայուն անվանել ճիշտ չէ: Ռուսական տնտեսության խնդիրներից են բնակչության եկամուտների նվազումը 1,4%-ով, թեև նոմինալ աշխատավարձը բարձրանում է, իսկ գնաճը ցածր է: Նվազագույն աշխատավարձը բարձրացվեց և ապահովագրական կենսաթոշակների ինդեքսացիա տեղի ունեցավ: Գնաճը կազմել է 2,5%, որը բացատրվում է եկամուտների կրճատմամբ, ցածր վճարունակությամբ, պետական ծախսերի նվազմամբ և ԿԲ-ի չափավոր կոշտ քաղաքականությամբ: Գործազրկությունը կազմում է 5,1%: Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 17%:

Նավթի գները այլևս չեն անհանգստացնում ռուսաստանցիներին: 2017 թ.-ին ռուսական արժույթը դոլարի նկատմամբ ուժեղացավ 9%-ով: 60-61 ռուբլու սահմաններում կմնա ռուբլու փոխարժեքը, իսկ դա կախված է նավթից, որի գինը 65-0 դոլարի սահմաններում կմնա Զարգացման սցենարները նույնպես կախված են նավթի գներից: Նավթի եկամուտները այսուհետ կուղղվեն Ազգային բարեկեցիկության ֆոնդ, որն ուղղված կլինի բյուջեի դեֆիցիտի ծածկմանը[13]:

Սակայն սանկցիաները սահմանափակում են առևտուրը, նոր տեխնոլոգիաների ձեռք բերմանը, իսկ արտադրողականությունը մնում է ցածր: Ընթացիկ տարում ներքին սպառումը կավելանա և վարկավորման պայմանները կլավանան: ԿԲ-ի տոկոսադրույքները կնվազեն, որը նախատեսվում է տարվա ընթացքում 7,75% -ից հասնի մինչև 7%: Սակայն տարիֆները կաճեն, օրինակ՝ տրանսպորտի, մետրոյի համար, ինչպես նաև ակցիզներ՝ օրինակ բենզինի ակցիզը կրկնակի կաճի, կբարձրանա նաև սիգարետների ակցիզը: Ունեցվածքի հարկերը կաճեն: Առանց արմատական բարեփոխումների 2018 թ.-ին տնտեսական աճը չի գերազանցի 1-2%-ը: Բարդ կլինի 2018թ.-ը, քանի որ խնդիրը միայն տնտեսական սանկցիաները չեն, որն կշարունակվի և կխստանան:

Հնդկաստան: Վերջին տարիներին տնտեսական աճը տատանվում էր 6,5-7%-ի միջակայքում: Հնդկաստանի աճը 2018 թ.-ին կկազմի հավանաբար՝ 6,75%: Մոտակա տարիներին աշխարհի 5-րդ տնտեսությունը կդառնա, հետևում թողնելով Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային:

Տնտեսության վիճակը դրական է, մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան աճում է: Գնաճը կազմել է 5,21%: Կառավարությունը ձգտում է, որ գնաճը հատկապես

[12] Распад или расширение? Будущее Евросоюза в 2018 году, http://eurasia.expert/raspad-ili-rasshirenie-budushchee-evrosoyuza-v-2018-godu/

[13] Экономика-2018: Между тощим кошельком и долговой удавкой, https://svpressa.ru/economy/article/189855/

մթերքների շուկայում ցածր լինի: Բնակչության աճը, աղքատության բարձր մակարդակը, թույլ գյուղատնտեսությունը Հնդկաստանի տնտեսության հիմնական խնդիրներն են: Մեծ է դրսից տրանսֆերտների հոսքը, որը փակում է վճարային հաշվեկշռի պակասորդը: Սակայն մի շարք երկրների ոչ բարենպաստ տնտեսական վիճակը, ինչպես օրինակ՝ Պարսից ծոցի երկրներում, որտեղ հնդիկ աշխատավորները շատ են, կբերի այդ հոսքերի կրճատմանը:

Ռիսկերից են նավթի գների աճը և կապիտալի արտահոսքը: Բարենպաստ պայմաններ են ստեղծվում ներդրումների համար, թեև հրաժարվում են չինական ներդրումներից ենթակառուցվածքային նախագծերում: 2017թ.-ին ռեկորդային ներդրումներ են եղել պաշտպանական, շինարարական, կենսաթոշակային և այլ ոլորտներում: «Առևտրային համաձայնությունները փակուղի են մտնում: Աշխարհը մրցարշավի մեջ է մասսայական տեղեկատվության հոսքերի վերահսկողության համար: Իսկ տեխնոլոգիաների զարգացումը աշխարհի համար նոր հիմնախնդիրներ կստեղծի, պետք է համաձայնության գալ»- սրանք Հնդկաստանի վարչապետի Նարենդրա Մոդիի մտքերն էին այս տարվա Դավոսյան համաժողովի իր ելույթից:

Հնդկաստանի տնտեսական և աշխարհատնտեսական հավակնություններնն էլ տնտեսության ընդլայնման հետ աճում են՝ Հնդկաստանը ցանկանում է երրորդ աշխարհատնտեսական կենտրոնը լինել՝ ԱՄՆ-ի և Չինաստանի կողքին: Զգտում է ԱՄՆ-ից անկախ ավելի ինքնուրույն քաղաքականություն վարել, չի խուսափում Չինաստանին մարտահրավերներ նետել, ԱՄՆ-ի կողմից Հյուսիսային Կորեայի շրջափակմանը չի միանում[14]:

Բրազիլիա: Ցածր է տնտեսական աճի տեմպերը, նախորդ տարի վերջապես դուրս եկավ 2 տարուց ավելի տևող ռեցեսիայից՝ գրանցելով փոքր տնտեսական աճ: Չնայած իրականացվող դրամավարկային մեղմ քաղաքականությանը, դժվար է վերականգնվում ծանր ռեցեսսիայից հետո: Սակայն աճը կայուն չէ և քաղաքական ճգնաժամը խորանում է: Գնաճը մնում է ցածր՝ 2,95%, որը գտնվում է Բրազիլիայի ԿԲ-ի կողմից նախատեսված նպատակային միջակայքում, գործազրկությունը դանդաղ նվազում է, սակայն դրա մակարդակը բարձր է՝ 2017 թ.-ին կազմելով 11,8% կամ մոտ 14 մլն. գործազուրկ: Սպառողական պահանջարկը նույնպես դանդաղ է աճում: Ներդրումների տեմպերը նույնպես նվազում են: Բանկային տոկոսադրույքը նվազել է և կազմում է 7%-ի: Կոռուպցիոն սկանդալները բերել են նրան, որ Կոնգրեսը կարող է աջակցություն չտալ նախագահի կողմից իրականացվող հասարակության մեջ հավանություն չվայելող բարեփոխումներին, թեև կառավարությունը պնդում է, որ դա օդի չափ անհրաժեշտ է:

Ամփոփելով նկատենք, որ վերջին տարում համաշխարհային տնտեսության աճի տեմպերը բարելավվել են: Հզոր տնտեսություն ունեցող կենտրոններում, որոնք համաշխարհային տնտեսության շարժիչներն են, վիճակը հուսադրող է, տնտեսությունները գրանցում են աճի տեմպերի բարելավում: Սակայն, տնտեսության համար ներկա պահին կարևոր խնդիրներն են ներքին պահանջարկի, զբաղվածության, եկամուտների ցածր մակարդակները, պարտքային բեռի աճը, պրոտեկցիոնիզմի վտանգը, ներդրումների կրճատումը, քաղաքական անկայունությունը և այլ հարցեր տարբեր տարածաշրջաններում:

Ինչ վերաբերում է **Հայաստանին**, ապա 2017 թ.-ին տնտեսական ակտիվության աճը կազմել է 7,7%, արտաքին առևտրաշրջանառության ծավալներն աճել են 26,9%-ով, որտեղ արտահանումը կազմել է 2,24 մլրդ. Ամերիկյան դոլար: Փաստորեն, ունենք արտահանման մոտ 25,2% էական աճ, որը բացատրվում է սննդի և գյուղատնտեսական արտադրանքների արտահանման զգալի աճով և պղնձի գների աճով՝ 2016-17թթ.-ին պղնձի գները բարձրացել են՝ 4400 դոլարից հասնելով 7100 մեկ տոննայի դիմաց:

Հայաստանին նույնպես բնորոշ են այնպիսի խնդիրներ, որոնք բնորոշ են համաշխարհային տնտեսությանը:: Դրանք են ներքին պահանջարկի ցածր մակարդակը, աղքատության և գործազրկության բարձր մակարդակները, դեմոգրաֆիական խնդիրները՝ ծերացումը և արտագաղթը, կապիտալի արտահոս-

[14] Индия намерена в 2018 году перегнать Китай по скорости роста экономики, https://rossaprimavera.ru/news/ba1d3bf9

քը, պարտքի աճը (պետական, մասնավոր բիզնեսի և տնային տնտեսությունների), սոցիալական անհավասարությունը, տարածաշրջանների անհավասարաչափ զարգացումը, խոշոր ենթակառուցվածքային նախագծերի ձգձգումը և միջոցների վատնումը, տնտեսության ճյուղերի կենտրոնացումը, արտահանման կառուցվածքի կենտրոնացումը և մենաշնորհների առկայությունը:

Մշակվում են նշված բացասական երևույթների դեմ նոր մոտեցումներ և ռազմավարություններ Անհրաժեշտ է հետևել և սթափ գնահատել, թե տնտեսական գործընթացները ինչպես են ընթանում աշխարհում և տարածարջաններում, ինչպես նաև վերլուծել, թե տարբեր երկրներում տարբեր հիմնախնդիրներ ինչպես են լուծվում, ինչ նոր մոտեցումներ են կիրառվում և համապատասխան փորձը խելամիտ հաշվի առնենք մեր ազգային տնտեսության հենքի վրա:

Գրականություն

1. Перспективы развития мировой экономики, www. IMF.org
2. World Economic Outlook Update, January 2018, http://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2018/01/11/world-economic-outlook-update-january-2018
3. http://metallicheckiy-portal.ru/index-cen-lme
4. 10 экономических хайпов года, http://www.vestifinance.ru/articles/95689
5. The Economist: В 2018 году экономика США может "перегреться"
6. Об экономике США. Наконец-то мы услышали, что "король — голый", https://tsargrad.tv/articles/ob-jekonomike-ssha-nakonec-to-my-uslyshali-chto-korol-golyj_106155
7. Министр финансов США в Давосе: Слабый доллар поддерживает экономику, Подробнее: https://eadaily.com/ru/news/2018/01/24/ministr-finansov-ssha-v-davose-slabyy-dollar-podderzhivaet-ekonomiku
8. Век с препятствиями, Что нужно преодолеть Китаю для достижения «первой столетней цели», https://www.kommersant.ru/doc/3434430
9. Экономика Японии удивила всех, http://expert.ru/2017/11/15/ekonomika-yaponii-ustanovila-rekord-veka/
10. Такумори Акиёси, Прогноз для экономики Японии на 2018 год: перспективы самого продолжительного расширения конъюнктуры за послевоенный период, https://www.nippon.com/ru/ currents /d00375/
11. Евросоюз дождался экономического подъема, http://www.ng.ru/world/2018-01-25/7_7158_eurosouz.html
12. Распад или расширение? Будущее Евросоюза в 2018 году, http://eurasia.expert/raspad-ili-rasshirenie-budushchee-evrosoyuza-v-2018-godu/
13. Экономика-2018: Между тощим кошельком и долговой удавкой, https://svpressa.ru/economy article/189855
14. Индия намерена в 2018 году перегнать Китай по скорости роста экономики, https://rossaprimavera.ru/news/ba1d3bf9

ИСТОРИЯ

Памятники армянской архитектуры и топонимики в Аргентине

Погосян /Хахбакян/ Г. Г.
Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона /Армения, Ереван/
gagikp@mail.ru

Ключевые слова: Аргентина, армяне, геноцид, диаспора, архитектура, церковь, часовня, школа, памятник, мемориал, кладбище, надгробие, топонимика, улица, площадь.

Արգենտինայի հայկական ճարտարապետական եւ տեղանվանական հուշարձանները

Պողոսյան /Խաղբակյան/ Գ. Հ.
Սեվծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական եվ սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ /Հայաստան, Երևան/
gagikp@mail.ru

Ամփոփում. Հոդվածում ներկայացված է «*Ճարտարապետական եւ տեղանվանական հայկական հուշարձանները աշխարհում*» բազմահատորյա ատլաս-դիվանից մի գլուխ, որն նվիրված է Արգենտինային: Հոդվածում համառոտ ներկայացվում է գաղթօջախի ստեղծման եւ զարգացման պատմությունը, տարածման աշխարհագրությունը, եկեղեցու, կրթության և պարբերական մամուլի իրավիճակը: Հոդվածի հիմնական մասն է կազմում Չինաստանի հայկական ճարտարապետական ու տեղանվանական հուշարձանների ցուցակ-աղյուսակը, որի վերջում զետեղված է գրականության ցանկ:
Առաջին հիշատակումը հայերի մասին Արգենտինայում վավերագրված է 1729 թ.: Հաջորդ գրավոր հիշատակմանը հանդիպում ենք 1806 թ., Իգնասիո Սարդարյանի կողմից հրդեհված կամուրջի վերականգնման կապակցությամբ: Արգենտինահայ համայնքը սկսել է ձևավորվել 1880-ական թթ.: Այս ժամանակաշրջանի կարկառուն դեմքերից է զինվորական ակադեմիայի հիմնադիր տնօրենը՝ հունգարահայ Յանոշ Ցեցը: Գաղթօջախները ստվարացան Աբդուլհամիդյան ջարդերից եւ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914–18) երիթուրքերի կողմից հայոց ցեղասպանության հետեվանքով: Վերջնականապես համայնքը ձեւավորվեց Երկրորդ (1939–45) համաշխարհային պատերազմից հետո: Վերջին ժամանակներում գաղթօջախները համալրվեցին Արցախյան պատերազմից հետո:
Հանգուցաբառեր՝ Արգենտինա, հայեր, ծեղասպանություն, գաղթօջախ, ճարտարապետություն, եկեղեցի, մատուռ, դպրոց, հուշարձան, գերեզմանատուն, տապանաքար, տեղանուններ, փողոց, հրապարակ:

The Monuments of Armenian Architectures and Toponymy in Argentina

Poghosyan /Khaghbakyan/ G. H.
Public Institute of Political and Social Research of Blacksea-Caspian Region /Armenia, Yerevan/
gagikp@mail.ru

Abstract: The article presents the head of a multi-volume atlas of the catalog «*The monuments of Armenian architecture and place names abroad*». It presents an overview of the history and development of the community, the geography of its settlement, the state of the church, education and Armenian media. The main part of the article is a table-list of Armenian monuments of architecture and toponymy in China, after which a list of literature is given.
The first mention of Armenians on the territory of Argentina dates back to 1729. The next written mention refers to 1806, when a carpenter Ignacio Sardaryan rebuilt the burned bridge. In the middle group of migrants of the middle of the 19th century, General Tzets Jan, who founded the Military Academy in Argentina, stands out. The community was formed after the Abdulgamid pogroms, the Genocide (1915), the subsequent beatings and pogroms (1918-20) in Turkey and the forcible eviction of the Armenians of Cilicia (1920-22). The community was formed after the Second World War (1939-45).
Key words: Argentuna, Armenians, Genocid, Migration, Diaspora, Architecture, Church, Chapel, School, Monument, Cemetery, Tombstone, Toponyms, Street, Place.

История


Первые упоминания об армянах на территории Аргентины[1] восходят к началу XVIII в. В хронике 1729 г. повествующей о переходе из испанского порта Кадис до побережья Рио-де-ла-Плата упоминается некий армянин, который “был большой и страдал от жары". Следующим упоминается некий плотник Игнасио Сардарян, восстановивший мост, сожженый патриотами в 1806 г. с целью предотвращения входа французских колонизаторов в Буэнос-Айрес. В перой группе мигрантов середины XIX века выделяется генерал **Цец Ян** (1822-1904) бежавший из Венгрии после подавления анти-габсбургской революции (1848-49) и обосновавшийся в Буенос-Айресе в 1861 г. Он основал в Аргентине Военную академию став ее первым директором (1870-74). В его честь во дворе Военной академии воздвигнут памятник.

Согласно официальной статистике, основанной на регистрационных списках пассажиров прибывающих в Буэнос-Айрес судов, в первые годы XX века в Аргентину приезжали единицы армян. Лишь к 1923 году кол-во армян достигло 2221 человека. Однако эти цифры не отражали реальность, т. к. многие прибывшие имели турецкие паспорта и соответственно регистрировались местными властями в качестве турок.

Община образовалась после Геноцида (1915), последовавших за ним избиений и погромов (1918-20) в Турции и насильственного выселения армян Киликии (1920-22) (Мараша, Аданы, Аджна, Кесарии, Айнтапа, Кутины). Окончательно же община оформилась после второй мировой (1939-45) войны. К тому времени в Аргентине уже насчитывалось ок. 20 тыс. армян.

География

Аргентинские армяне жили и живут, в основном в столичной агломерации Большой Буэнос-Айрес, в микрорайонах Палермо, Вилла Солдати и Флорес, а так же в пригородах Валентин Асино и Висенте Лопес.



Вторая точка сосредоточения, это второй по велечине и населению в Аргентине город Кордова, центр одноименной провинции. Здесь по некоторым данным проживает 6 ± 1 тыс. армян. Не большие общины имеются в крупных городах Росарио провинции Санта Фе, Мендоса в одноименной провинции, Мар-дель-Плата и Ла-Плата в провинции Буэнос-Айрес. В малых количествах армяне живут так же в городе Неукен (исп. Neuquén) в одноименной провинции и соседнем (в 3 км) маленьком городке Чиполлетти в провинции Рио-Негро.

В 1972 насчитывалось ок. 65 тыс. В последние годы оценки количества армян в Аргентине сильно расходятся и колеблются в

[1] **Аргентина** (исп. Argentina), официальное название **Аргентинская Республика** (исп. República Argentina) — второе (после Бразилии) по размерам территории и населению государство Южной Америки. Федеративная республика административно разделенная на 23 провинции и 1 федеральный столичный округ. Столица и крупнейший город - Буенос Айрес.

районе 100 ± 30 тыс., в том числе ≈ 5 тыс. прибывших из Республики Армения.

В связи с экономическими трудностями возникшими в стране, наблюдалась не значительная репатриация.

Организации

В 1922 группа армян приобрела в Буенос-Айресе на улице Асеведо территорию под строительство церковного и общинного центров. С тех пор большая часть улицы была переименованна в “Армения” (см. табл.).

В 1923 на ней было построено здание “Армянского центра” (арм. “Հայոց տուն”). Центр по сути является Советом управления церкви и одновременно Центром ААЦ в Южной Америки координирующим все примыкающие организации, филиалы которого возникли так же в Кордове и Росарио. Буквально напротив была построена главная церковь Св. Григория Просветителя, а вокруг них в сторону площади Армения, две школы и другие армянские учреждения.

В Аргентине действуют множество общественных и культурных союзов и организаций, таких как Армянский Национальный Совет Южной Америки[2], благотворительные (ՀԲԸՄ[3], ՀՕՄ[4]), культурные[5] и земляческие союзы – Аджна (1915), Мараша (1926)[6], Айнтапа (1929).

В 1962 г. был создан Армянский Спортивный футбольный клуб “Армения”, первоначальное называние “Club Armenio de Fútbol“ было изменено на “Club Deportivo Armenio”[7].

Образование

Первая школа открыта в 1924, в 1929 году их было четыре, а в 1938 году 19, где обучалось 980 учеников. Однако за исключнием двух школ построенных в 1927 г., остальные не имели собственного здания и ютились в помещениях при церкви и в общинном центре. На сегодняшний день община располагает 10 ежедневными обучающими учреждениями разной категории в Буенос-Айресе и одной школой в Кордове, в которых обучается свыше 2200 учеников.

Церковь

Аргентинская епархия Армянской Апостольской церкви основананная в 1983 г. с центром в Буенос Айресе[8] (имеет 6 церквей в агломерации Большой Буенос-Айрес, и одну церковь в Кордове), охватывает 80% адептов. Аналогично ей, здесь же находится и экзархат армяно-католиков (одна церковь в столице). Существует так же и армяно-евангелистская община (2 церкви в столице, 4 дома собраний в пригородах столицы и один в Кордове).

СМИ

В период с 1922 по 1970 издавалось 32 наименования периодики. Ныне издаются “Аздак” (арм. Ազդակ)[9], “Армениа” (исп. Armenia)[10], “3-е Поколение” (исп. Generación 3)[11], “Сардарапат” (арм. Սարդարապատ)[12], “Нор Севан” (арм. Նոր Սեւան), “Нор Аджн” (арм. Նոր Հաճըն)[13], из коих некоторые имеют электронные версии. Кроме того у общины есть ряд испаноязычных веб-порталов[14].

У аргентинских армян есть свой радио эфир, первое радио было создано в Буенос-Айресе, а второе в городе Мар-дел-Плата[15].

---

[2] El Consejo Nacional Armenio de Sudamérica – http://www.cna.org.ar, сайт на исп. языке.

[3] Unión General Armenia de Beneficencia – http://www.ugab.org.ar, сайт на исп. языке.

[4] Asociación Civil de Beneficiencia Armenia para América del Sur – http://www.hom1933.org.ar, сайт на исп. языке.

[5] Unión Cultural Armenia (Արժենթինահայ Մշակութային Միություն) – http://www.uca.org.ar, сайт на исп. языке.

[6] Unión Compatriotica Armenia de Marash (UCAM) – www.marash.com.ar, сайт на исп. и англ. языках.

[7] http://www.deportivoarmenio.com.ar/, сайт на исп. языке. deparmenio@yahoo.com.ar

[8] С 1938 по 1983 г. в Буенос Айресе был центр Южно Американской епархии.

[9] Ежедневная газета на армянском языке. Электронная версия – http://www.aztagdaily.com/ LatestNews.php

[10] Журнал на исп. языке. Основан в 1931 году. Электронная версия журнала – http://www.diarioarmenia.org.ar/ Armenia 1366 PB - (1414) Buenos Aires, Tel/Fax: (54-11) 4775-7494.

[11] Ежеквартальный журнал на исп. языке. Орган молодежного комитета AGBU в Буэнос-Айресе. Armenia 1318 (1030) Ciudad de Buenos Aires, Tel/Fax: (541) 4771-6500 / 4773-2820; generacion3@ugab.org.ar

[12] Еженедельная газета на армянском и испанском языках. Основан в 1975 г. – www.sardarabad.com.ar

[13] Ежеквартальная газета на армянском и испанском языках. Основан в 1933 г.


[14] http://www.armeniosonline.com.ar/; International Armenian Network (IAN) – http://www.ian.cc/; Cámara Argentino-Armenia – http://www.camararmenia.org.ar/; Армянский проводник “Менк” – http://www.guiamenc.blogspot.com/.

[15] Радио “Крунк” основано в сентябре 2000 г., вещает в диапазоне 99,1 FM, по воскресеньям с 11.00 до 13.00.

С 7 сентября 2007 г. каждую пятницу в 9:30 по 13 каналу выходит в эфир программа “Любимая Армения”.



Признание Геноцида

В 2006 г. на основании решений парламентов штатов и городов от 2-го июня и 17-го августа, впредь 24-ое апреля будет отмечаться в штате и столице Буэнос-Айрес как день памяти Геноцида армян. 6-го сентября аналогичное решение было принято и в штате Кордова. 29-го ноября Палата представителей Аргентины приняла законопроект по Геноциду армян, согласно которому 24-ое апреля будет отмечаться как “День толерантности и уважения между нациями”, а для сотрудников, должностных лиц и учеников армянской национальности этот день был объявлен нерабочим. 14-го декабря Сенат Аргентины утвердил решение палаты представителей. 10.01.2007 г. президент страны подписал закон о признании геноцида, совершенного против армян в Турции, и объявлении 24 апреля “Днем толерантности и взаимоуважения между народами”.



Федеральная столица Буэнос-Айрес с планами микрорайонов и пригородов

Таблица памятников армянской архитектуры и топонимики в Аргентине

н/н	Объект	Наименование	Местонахождение (адрес, контакты)	Даты	Вид
1 Федеральная столица Буэнос-Айрес					
1.	*улица*	Армения	Calle Armenia, микрорайон Barrio de **Palermo Viejo**, 1414 **Buenos Aires**[16]		Протяженность: 1600 м Ранее - calle Acevedo
2.	комплекс	Армянский духовно-образовательный	Calle Armenia 1353, Barrio de **Palermo Viejo**[17], 1414 **Buenos Aires**		
3.	епархиальный центр	Св. Григория Просветителя	Calle Armenia 1353, Barrio de **Palermo Viejo** 1414 **Buenos Aires** Tel: +54 11 4 772-8174 /2339/ 3558 / 776-2810 Fax: 776-2816		
4.	церковь	Св. Григория Просветителя	Catedral San Gregorio Iluminador de la Iglesia Armenia, Находится справа от епархиального центра, **Там же**	Осн. 1936 Осв. 19.06.1938	
5.	лапидарная надпись	Памятная билингва двенадцатистрочная [18] на армянском и однострочная[19] на испанском языках	Находится на тимпане церкви Св. Григория Просветителя, **Там же**	1938	
6.	лапидарная надпись	Памятная трехстрочная надпись на армянском[20] языке	Находится на лицевой стороне стола вторичного алтаря установленного в правом углу у западного входа церкви Св. Григория Просветителя, **Там же**		


[16] **Буэнос-Айрес** (исп. Ciudad de la Santísima Trinidad y Puerto de Nuestra Señora de Santa María de los Buenos Aires, букв. «Город Пресвятейшей Троицы и Порт Богоматери Марии Добрых Ветров») – столица Аргентины, административный центр страны и один из крупнейших городов Южной Америки. Город-побратим Еревана (Армения).

[17] **Палермо** (исп. Barrio de **Palermo Viejo**) – автономный район города Буэнос-Айрес.

[18] Է / ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵ- / ՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ԽՈՐԵՆԱՑ ….. ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈ- / ՍԻ ԵՒ ԱՌԱՏԱՁԵՌՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԵԱՄԲ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ՏԻԱՐ / ՀՐԱՆՏ ՆԻՔՕԹԵԱՆԻ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ՏԻԱՐ ԻՍՐԱՅԵԼ / ԱՐԱԼԱՆԵԱՆԻ ԱԻԱՐՏԵՑԱԻ ՇԻՆՈՒԹԻՒՆ / Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ / ԵԿԵՂԵՑԻՈՅՍ Ի 5 ՅՈՒՆԻՍԻ 1938 ԱՄԻ. ՅԱՒՈՒՐ ՊԵՆՏԷԿՈՍՏԷԻ. ՈՐ ԵՒ ԲԱՐԵ- / ՉԱՐԴԵՑԱԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՄԵՐԱՉՆԷԻՑ: Օ՜ՇՈՒՄՆ ՍՈՐԱ ԵՂԵՒ Ի ՁԵՌՆ / ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ՝ ՏԵԱՌՆ ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐՔԵ- / ՊԻՍԿՈՊՈՍԻ ԽԱՉԵՏՐԵԱՆ. Ի 19 ՅՈՒՆԻՍԻ 1938 ԱՄԻ. Ի ՏՕՆԻ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԷՋՄԻԱՁՆԻ: / ՏՈՒՆ ՏԵԱՌՆ ՏՈՒՆ ԱՂՕԹԻՑ ԵՂԻՑԻ:


[19] SAN GREGORIO ILUMINADOR

[20] ԿԱՆԳՆԵՑԱԻ ԽՈՐԱՆՍ / ԱՐԴԵԱՄԲ ՏԻԳՐԱՆԻ ԳՕՋԱՆԼԵԱՆ ԿԵՍԱՐԵՑԻՈՑ … / ՀՕՐՆ ԻՒՐՈՑ ՅԱԿՈԲԻ ԵԻ ԻՋԲՕՐՆ …

7.	придел-колокольня	прицерковная	Органично пристроена с восточной стороны к церкви Св. Григория Просветителя, **Там же**	1938	
8.	памятник		Установлен у стены епархиального центра слева от входа, до 2015 г. находился у южного входа в церковь, **Там же**		
9.	памятник		Установлен в приделе-колокольне слева от входа, до 2015 г. находился у южного входа в церковь, **Там же**		
10.	памятник		Установлен в приделе-колокольне справа от входа, ранее находился у южного входа в церковь, **Там же**		
11.	мемориал	В память жертв геноцида армян 1915 г. с надписями на испанском и армянском языках	Находится рядом с церковью Св. Григория Просветителя слева от епархиального центра, **Там же**	1961	
12.	хачкар	В память святых мучеников геноцида армян 1915 г.	Установлен во дворе церкви Св. Григория Просветителя у стены слева от южного входа между полуколоннами, **Там же**	Осв. 24.04.2015	
13.	лапидарная надпись	Памятная билингва по три сроки на армянском[21] и испанском[22] языках	Находится на постаменте хачкара, **Там же**	2015	
14.	хачкар	В память аргентино-армянских деятелей	Установлен во дворе церкви Св. Григория Просветителя у стены справа от южного входа между полуколоннами, **Там же**	Осв. 16.07.2017	

[21] ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՔԱՐՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ՍՐԲՈՑ / ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ / Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՆԿԵ (2015)

[22] SE ERAGIO ESTE JACHKAR “CRUZ DE PIEDRA” / EN MEMORIA LOS SANTOS MARTIRES / DEL GENOCIDIO ARMENIO (APRIL 2015)

15.	лапидарная надпись	Памятная восьмистрочная на армянском[23] языке	Находится на постаменте хачкара, **Там же**	2017	
16.	здание	институт Св. Григория Просветителя	Instituto Educativo San Gregorio El Iluminador. Находится справа от церкви Св. Григория Просветителя, **Там же** Tel: /Fax: +54 11 4 772-8174 / 2339 / 3853 / 3558 www.iesgei.edu.ar	1976	
17.	здание	Армянский центр	Centro Colonial Armenio. Находится за церковью Св. Григория Просветителя, **Там же**	Осн. 7.05.1922 1932	
18.	здание	Театр Сирануш	Teatro sala Siranush. Находится на первом этаже армянского центра, **Там же**		
19.	памятник	В память героев арцахской войны с восьмистрочной надписью на армянском[24] и трехстрочной на испанском[25] языках	Установлен во дворе комплекса между Армянским центром, церковью и институтом Св. Григория Просветителя, лицом к южному входу в церковь, **Там же**	10.2009	
20.	здание	Комплекс Алекса Манукяна {Филиал Всеобщего Армянского Благотворительного Союза (AGBU)}; институт Мари Манукян (AGBU)	El Complejo Alex Manoogian (Union General Armenian de Beneficencia). Marie Manoogian Institute. Calle Armenia 1352, C1414DKD CABA, Barrio de **Palermo Viejo Buenos Aires** Tel: +54 11 4 771-6500 /773-2820 Fax: +54 11 4 775-4059 agbu-arg@fibertel.com.ar www.ugab.org.ar	1974	


[23] ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՉՔԱՐՍ Ի ՅԻՇԱՏԱԿ / ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ / ԳՈՐԾԻՉՆԵ–ՐՈՒՆ / ԱԶԱՏ ԳԵՐԱԿԷՕՋԵԱՆ ԱԼՊԷՐԹՕ ՃԷՐԷՃԵԱՆ / ՅՈՎՍԷՓ ՕՂՈՒԼԵԱՆ ԱՐՄԷՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ / ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ / ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՅԱԿՈԲ ՉՕՐԵԱՆ / ՎԱՀԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ ՉԱՔԱՐ ԱՆՄԱՀՈՒՆԻ

[24] *Մահ ոչ իմացեալ մահ է, / մահ իմացեալ՝ անմահություն* / ԱՐՑԱԽԻ / ՀԵՐՈՍ / ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ / ՀԻՇԱՏԱԿԻՆ / ԳԱԳԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՀՈՐ՝ ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ / ԵՒ ՆՐԱ ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

[25] A LA MEMORIA DE LOS HEROICOS / COMBATIENTES POR LA LIBERACION DE / ARTSAJ (KARABACK)

21.	здание	Армянская культурная ассоциация. В здании находятся: Армянский национальный совет, Клуб Эдуарда Сеферяна, библиотека, лекционный зал, ресторан “Армения”	Asociación Cultural Armenia. Calle Armenia 1366, C1414DKD CABA, Barrio de **Palermo Viejo** **Buenos Aires** Tel: +54 11 4 775-7595 acaculturalarmenia.org.ar info@acaculturalarmenia.org.ar armeniarestaurant.org.ar		
22.	монумент	В память Сардарапатской битвы	Calle Armenia, **Там же**	1998	
23.	*площадь*	Армения	Plaza Armenia, Находится между улицами Armenia, Nicaragua, Malabia и Costa Rica, **Там же**	До 13.06.2014	Ныне Plaza Inmigrantes de Armenia
24.	*сквер*	памяти жертв Геноцида армян 1915 года	На площади Armenia, **Там же**	08.05.2007	
25.	*площадь*	Эмигрантов из Армении	Plaza Inmigrantes de Armenia, **Там же**	8.07.2014	
26.	мемориал	плитки памяти и справедливости в память о 100-летней годовщине геноцида армян [26]	На площади Armenia, **Там же**	18.04.2015	
27.	здание епархиального центра	Армяно-Апостольский Экзархат Латинской Америки (Епархиальный центр) (католич.)	Calle Charcas 3529, Bar. **Palermo Viejo** 1425 **Buenos Aires** Tél: +54 11 4 824-1613 Fax: +54 11 4 827-1975 exarmal@usa.net exarmal@pcn.net	1922	
28.	церковь	Кафедрал Пресвятой Девы Нарекской (католич.)	Catedral Armenia Católica Nuestra Señora de Narek, Calle Charcas 3529, **Там же** Tél: +54 11 4 824-4518 pararmar@ciudad.com.ar		


[26] En el Centenario del / genocidio de armenio y a / 39 años del inicio de la / dictadura cívico-militar, / homenaje a los / descendientes de / armenios / militantes populares / que fueron / detenidos de sa parecidos y /asesinados por el terrorismo / de Estado. / Barrios por Memoria y Justicia / -Unión Cultural Armenia. / 24 abril 2015

29.	часовня	Св. Экспедита	Capilla San Expedito. Находится в левой части армяно-католического кафедрала Пресвятой Девы Нарекской, **Там же**		
30.	мозаика	с лапидарными надписями на испанском и на армянском языках[27]	Находится на стене с внешней стороны выходящей на улицу, **Там же**		
31.	мемориал	В память 100-летней годовщины жертв геноцида армян 1915 с надписями на испанском[28] и армянском[29] языках	Monumento, Находится справа от входа в церковь Пресвятой Девы Нарекской, **Там же**	24.04.2015	
32.	*маленькая площадь; сквер*	Гора Арарат	Plazoleta Monte Ararat. Находится напротив армяно-католической церкви Пресвятой Девы Нарекской, Calle Charcas, **Там же**		
33.	мемориал	В память жертв геноцида 24.04.1915	Находится в сквере Гора Арарат, Calle Charcas, **Там же**	1990	
34.	здание	колледж Мхитаристов (католич.)	Colegio Mekhitarista, Cal. Virrey del Pino 3511, Bar. **Palermo Viejo** 1426 **Buenos Aires** Tél: +54 11 4 552-3690 Fax: +54 11 4 805-1419 mekhitarista@colegiomekhitarista.edu.ar colegiomekhitarista.edu.ar	1956	

[27] SAN EXPEDÍTO / ՍՈՒՐԲ ԱՐՔԳԱՀԱՍ
[28] EN MEMORIA DE LOS MÁRTIRES / DEL GENOCIDIO ARMENIO / 1915 - 2015
[29] ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ / ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ / 1915 - 2015

35.	здание	Армяно-Аргентинская школа N°8 школьного округа N°9	Escuela N°8 D.E. 9 - "Armenio-Argentina", Calle Arce 611, Bar. **Palermo Viejo** **Buenos Aires** Tel: +54 11 4 771-2047 www.escuelaarmenioargentina.blogspot.ie		
36.	барельефы		Находится на стене школы со стороны угла улицы República de Eslovenia, **Там же**		
37.	здание	Ресторан армянской кухни “Саркис”	Sarquis Restaurant Armenio. Calle Thames esquina Jufré, Barrio de **Villa Crespo**[30], C1414DCX, C1414DCZ, **Buenos Aires**		
38.	здание	Музей Геноцида армян	Museo del Genocidio Armenio. Calle Gurruchaga esquina Jufré, Barrio de **Villa Crespo**, C1414DCX, **Buenos Aires** fmgenocidioarmenio.org.ar/museo/	Осн. 8.07.2014	 
39.	мемориальная доска	Памятная билингва об основании одиннадцатистроч-ная[31] на испанском и восьмистрочная[32] на армянском языках	Установлена на стене здания Музея Геноцида армян, **Там же**	8.07.2014	
40.	здание	институт Исаак Бекчеллян	Instituto Educativo "Isaac Bakchellian" Av. Corrales 2527, Barrio de **Villa Soldati**[33], 1374 **Buenos Aires** Tel: +54 11 4 918-7245 institutobakchellian.esc.edu.ar		
41.	здание	колледж Арцруни (при церкви Св. Креста Варага)	Colegio Arzruní, Calle José Marti 1562, C1416CRQ, Barrio de **Flores**[34], 1406 **Buenos Aires** Tel: +54 11 4 612-1733 / 637-6798	1929	

[30] **Вилла Креспо** (исп. Barrio de **Villa Crespo**) – автономный район города Буэнос-Айрес.
[31] AQUÍ SE CONSTRUIRÁ / EL MUSEO DEL GENOCIDIO ARMENIO / EN EL PREDIO CEDIDO POR EL GOBIERNO DE LA CIUDAD AUTÓNOMA DE BUENOS AIRES / CUYA JEFATURA EJERCE / EL INGENIERO MAURICIO MACRI / ACTO FUNDACIONAL / CON LA PRESENCIA DEL SEÑOR PRESIDENTE / DE LA REPÚBLICA DE ARMENIA, D. SERZH SARGSYAN / BUENOS AIRES, 8 DE JULIO DE 2014 / FUNDACIÓN MEMORIA DEL GENOCIDIO ARMENIO / COMUNIDAD ARMENIA
[32] ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ / ՀԻՄՆԱՐԿԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ / ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ / ՏԻԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ / 8 ՅՈՒԼԻՍ 2014 / ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ / ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ / ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ
[33] **Вилла Солдати** (исп. Barrio de **Villa Soldati**) – автономный район города Буэнос-Айрес.
[34] **Флорес** (исп. Barrio de **Flores**) – автономный район города Буэнос-Айрес.

42.	церковь	Св. Креста Варага	Iglesia Santa Cruz de Varak, Находится с левой стороны колледжа Арцруни, Calle José Marti 1562, C1416CRQ, Bar. **Flores** 1406 **Buenos Aires**	1936	
43.	лапидарная надпись	Памятная билингва двухстрочная[35] на армянском и однострочная[36] на испанском языках	Находится на тимпане церкви Св. Креста Варага, **Там же**	1945	
44.	церковь	Св. Троицы (Конгрегационалистская Евангелическая)	Iglesia Evangelica Armenia. Av. Carabobo 743 C1406DGH, Barrio de **Flores**, **Buenos Aires** Tel: +54 11 4 631-8406 lsvinas@hotmail.com	1950	

[35] ՎԱՐԱԳԱՅ ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ / ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՌՈՒՑԱԻ 1945-ԻՆ
[36] IGLESIA ARMENIA SANTA CRUZ




2 Buenos Aires [37]


45.	церковь	Св. Георгия	Calle Arenales 1631, Barrio de **Florida**, 1602 **Vicente López**[38]		
46.	здание	колледж Армения или Терцакян (при церкви Св. Георгия)	Colegio Armenio & Instituto Privado Terizakian, Находится рядом с церковью Св. Георгия, **Там же** Tel: +54 11 4 795-0125 www.colegioarmenio.edu.ar	1966	
47.	мемориал	В память 100-летней годовщины жертв Геноцида армян	Находится на площадке расположенной на перекрестке улиц calles Bartolomé Cruz e Hipólito Yrigoyen, Av. del Libertador 1600, **Vicente López**	24.04.2015	
48.	хачкар	В память 100-летней годовщины Геноцида армян	Установлен в центре меомориала памяти геноцида армян, **Там же**	24.04.2015	
49.	лапидарная надпись	Памятная билингва трехстрочная[39] наиспанском и четырехстрочная на армянском[40] языках	Находится на постаменте хачкара, **Там же**	24.04.2015	

[37] **Буэнос-Айрес** (исп. Provincia de Buenos Aires) – провинция в Аргентине. Административно подразделяется на 134 района (исп. partidos). Административный центр – город Ла-Плата.

[38] **Висенте Лопес** (исп. Vicente López) – город в одноименном районе провинции Буэнос-Айрес. Входит в состав Большого Буэнос-Айреса.

[39] 1915 – 2015 / MEMORIA Y RECLAMO / CENTENARIO GENOCIDIO ARMENIO


[40] 1915 – 2015 / ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ / 100 - ՏԱՐԵԼԻՑ / ԿԸ ՑԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՄ

50.	мемориальная доска	Памятная двенадцатистрочная на испанском[41] языке	Установлена на стелле смотрящей на улицу Hipólito Yrigoyen, **Там же**	2015	
51.	мемориальная доска	Пояснительная девятистрочная на испанском[42] языке	Установлена на стелле ниже предыдущей мемориальной доски, **Там же**	10. 2015	
52.	*улица*	Армения	Calle Armenia, B1822DRB, **Valentín Alsina**[43]		 Протяженность 1100 м
53.	церковь	Св. Якова	Iglesia Surp Hagop. Calle Coronel Murguindo 252, B1824HLO, **Valentín Alsina**		
54.	церковь	Армянская евангелистская братская	Iglesia Evangélica Armenia. Calle Santiago Plaul 650, B1823CSH Gerli, **Valentín Alsina** Tel.: +54 11 4 209-7067		
55.	часовня	Св. Шушан	La Capilla Surp Shushán, **Valentín Alsina**		

[41] EL **JACHKAR** / (CRUZ DE PIEDRA) / ES EL SÍMBOLO DE LA FE / E IDENTIDAD ARMENIA / EL MONUMENTO / IMPLANTADO EN PIEDRA / **DUF** Y TRAIDO DESDE / ARMENIA EN / CONMEMORACIÓN / AL CENTENARIO DEL /GENOCIDIO ARMENIO.


[42] **VIVAMOS** VICENTE LÓPEZ / LA MUNICIPALIDAD / DE LA CIUDAD DE VICENTE LÓPEZ / INAUGARA EL / **MONUMENTO EN CONMEMORATCION** / **AL GENOCIDIO ARMENIO** / **1915 – 2015** / OCTUBRE 2015 JORGE MACRI / INTENDENTE

[43] **Валентин Алсино** (исп. Valentín Alsina) – город в районе Ланос (исп. partido Lanús) провинции Буэнос-Айрес. Входит в состав Большого Буэнос-Айреса.

56.	здание	Армянский колледж Джримян	Colegio Armenio Jrimián, Calle Choele Choel 555, B1825DYX, 1822 **Valentín Alsina** Tel: +54 11 4 208-2681 / 2114 www.jrimian.edu.ar colegio@jrimian.edu.ar		
57.	мемориальная доска	В память жертв Геноцида армян четыре строки на испанском и армянском языках[44]	Находится внутри помещения на колонне, **Там же**	24.04.1970	
58.	мемориальная доска	Памятная на испанском и армянском языках	Находится внутри помещения на колонне под предыдущей мемориальной доской, **Там же**		
59.	мемориальная доска	В благодарность Нестору Кирхнеру за закон признания Геноцида армян тринадцатистрочная надпись на испанском языке[45]	Находится на стене внутри помещения, **Там же**	14.10.2015	
60.	здание	Армянская культурная ассоциация	Cultural Assn Armenia, Calle Jean Jeaures 3111, B1824AFK, **Valentín Alsina** info@jrimian.edu.ar Tel.: +54 11 4 208-2681		
61.	*площадка*	Армения	Plazoleta Armenia, Находится на газоне проспекта Av. Rivadavia в месте пересечения с улицей Senador Jose Pallares, **Valentín Alsina**		
62.	монумент	“Цицернакаберд” в память жертв Геноцида армян 1915	El Monumento al Genocidio Armenio “Dzidzernagapert”. Находится на площадке Армения, Plazoleta Armenia, **Там же**		


[44] HOMENAJE A LOS MARTIRES ARMENIOS / ՀԱՅՑ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ / 1915 – APRIL 24 – 1970 / UNION JUVENTUD ARMENIA – FUNDACION EDUCACIONAL JRIMIAN

[45] EN EL AÑO / CENTENARIO / DEL GENOCIDIO ARMENIO / LA ASOCIACIÓN CULTURAL ARMENIA / EN HOMENAJE AL / **DR. NESTOR CARLOS KIRCHNER** / POR LA PROMULGACIÓN DE LA LEY NACIONAL 26.199 / EL 11 DE ENERO DE 2007 QUE DECLARA EL 24 DE ABRIL / DE TODOS LOS AÑOS COMO “DÍA DE ACCIÓN / POR LA TOLERANCIA Y EL RESPETO ENTRE LOS PUEBLOS” / EN CONMEMORACIÓN DEL GENOCIDIO / DEL QUE FUE VÍCTIMA PUEBLO ARMENIO. / 14 DE OCTUBRE DE 2015

63.	здание	Ресторан армянской кухни “SABORES DE ARMENIA Lo de Sīlva”	Restaurante SABORES DE ARMENIA Lo de Sīlva, Calle Pres. Tte. Gral. Juan Domingo Perón 3157, B1822AGU, **Valentín Alsina** Tel.: +54 11 4 209-4201		
64.	кладбище	армянское	Cementerio Armenio de San Justo. 4649, Pedro León Gallo, B1754, **San Justo**, **La Matanza**[46] Tel. 2073-4846	1970-е	
65.	часовня	кладбищенская	Находится при входе на кладбище, **Там же**		
66.	мемориал	В память жертв геноцида 24.04.1915	Находится на армянском кладбище, **Там же**	1985	
67.	*улица*	Армения	Calle Armenia, B1707CPN, **Villa Sarmiento**[47]		Протяженность: 350 м
68.	здание	Армянский Генеральный союз физической культуры	Unión General Armenia de Cultura Física (Homenetmen) Calle Armenia 1247, B1707CPM, **Villa Sarmiento** Tel. +54 11 4 658-4591 www.homenetmen.org.ar		

[46] **Ла Матанза** (исп. La Matanza) – муниципалитет в Аргентине в провинции Буэнос-Айрес. Административный центр – Сан-Хусто (исп. San Justo). Входит в состав Большого Буэнос-Айреса.

[47] **Вилла Сармиенто** (исп. Villa Sarmiento) – город в районе Морон (исп. partido Morón) провинции Буэнос-Айрес. Входит в состав Большого Буэнос-Айреса.





6 Córdoba [48]

69.	*улица*	Армения	Calle Armenia, в квартале **Pueyrredón**, **Córdoba**		 Протяженность: 1400 м
70.	церковь	Св. Георгия	Iglesia Armenia San Jorge. Calle Armenia 2050, X5004FBN, **Pueyrredón**, **Córdoba**[49] Tel: 1-451.3586	1926	
71.	лапидарная надпись	Однострочная на армянском[50] языке	Находится на восточной стене над алтарем в церкви Св. Георгия, **Там же**		
72.	памятник		Находится во дворе, слева от входа в церковь Св. Георгия, **Там же**		
73.	монумент	В память жертв геноцида армян	Находится во дворе, справа перед входом в церковь Св. Георгия, **Там же**	24.04.1915	
74.	мемориальная доска	Памятная билингва четырехстрочная на армянском[51] и шестистрочная на испанском[52] языках	Установлена на стенке монумента памяти жертв геноцида армян, справа от хачкара, **Там же**	24.04.2015	

[48] **Кордова** (исп. Córdoba) – провинция в центральной части Аргентины, разделенная на 26 департаментов.
[49] **Кордова** (исп. Córdoba) – город, столица одноимённой провинции.
[50] ԹԱԳԱՒՈՐ ԵՐԿՆԱՒՈՐ ՉԵԿԵՂԵՑԻ ՔՈ ԱՆՇԱՐԺ ՊԱՀԵԱ
[51] Ի ՅԻՇԱՏԱԿ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑՆ, / ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅՂՆԹԱՑՍ ՀԱՅՈՑ / ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ / ՀԱՎԱՏՈՑ ԵՒ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ
[52] EN RECUERDO LOS SANTOS MARTIRES QUE DIERON SU VIDA / POR LA FE Y POR LA NACION ARMENIA EN LE / GENOCIDO ARMENIO DE 1915 / IGLESIA APOSTOLICA ARMENIA / COLECRIVIDAD ARMENIA DE CORDOBA / 24 de APRIL de 2015

75.	здание	Армянский культурный центр Салон Бакиргян	Colectividad Armenia Salon Bakirgian. Calle Armenia 2055, X5004FBN, **Pueyrredón**, **Córdoba**		
76.	здания	Учебный комплекс	Colectividad Armenia Establecimiento Escolar. Находится на углу улиц Armenia и Eufrasio Loza, **Córdoba**	1975	
77.	здание	колледж Саак и Месроп	Colegio Armenio Sahag-Mesrob, Calle Armenia 2089, X5004CPE, **Pueyrredón**, **Córdoba**		
78.	здание	Армянский институт генерала Мануэля Белграно	General Manuel Belgrano Institute – Armenian Calle Eufrasio Loza 885, X5004CPE, **Pueyrredón**, **Córdoba**		
79.	здание	Филиал Всеобщего Армянского Благотворительного Союза	Union General Armenia de Beneficencia, Av. Patria 921, 5000 **Córdoba** Tel: (54)(3)(51)(4) 516-958 Fax: (54)(3)(51)(4) 210-561 prensa@ugabcordoba.com.ar		
80.	церковь	“Маранатха” (Евангелистская)	Iglesia Evangélica Armenia “Maranatha”. Av. Patria 1257, X5004CFD квартал **Pueyrredón**, **Córdoba** Tel: 1-427.7354 miriamfervenza@yahoo.com.ar		
81.	*площадь*	Республика Армения	plaza República de Armenia, в квартале **Pueyrredón**, **Córdoba**		
82.	мемориал	В память 102-й годовщины жертв Геноцида армян 1915 -1923 гг.	Находится на площади plazoleta de avenida Hipólito Yrigoyen esquina Crisol, en el barrio Nueva Córdoba, **Córdoba**	20.04.2017	
83.	хачкар	В память 90-летия первой армянской церкви Св. Георгия в Южной Америке	Находится в центре мемориала, **Там же**	2016	

84.	лапидарная надпись	Памятная четырехстрочная на испанском[53] языке	Находится на лицевой стороне постамента хачкара, **Там же**	2016	
85.	лапидарная надпись	Памятная шестистрочная на армянском[54] языке	Находится на тыльной стороне постамента хачкара, **Там же**	2016	
86.	мемориальные доски	Три доски с поясняющими надписями на испанском языке[55]	Находятся перед хачкаром, **Там же**	20.04.2017	
87.	*улица*	Яна Цеца	Calle Juan Czetz, в квартале **Pueyrredón**, **Córdoba**	1966	Протяженность: 250 м





15 Neuquén[56]

88.	*маленькая площадь; сквер*	Республика Армения	Plazoleta República de Armenia. Находится на газоне проспекта Av. Coronel Olascoaga 1540, в месте пересечения с улицей Cabildo, **Neuquén**[57]	24.04.2007	

[53] JACHKAR “CRUZ DE PIEDRA” COMUNIDAD ARMENIA / DE CORDOBA 90 ANIVERSARIO DE LA IGLESIA ARMENIA / SURP KEVORK. 1ra IGLESIA ARMENIA DE SUD AMÉRICA. / EN GRATITUD AL …… DE CORDOBA. /1926 - 2016

[54] ԱՅՍ ԽԱՉՔԱՐԸ ԿՈՐԴՈԲԱՅԻ / ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՆՔԵՐՈՎ / ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ / ԱՌԱՋԻՆ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ / ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 90 ԱՄԵԱԿԻՆ / 1926 - 2016

[55] На первой слева мемориальной доске: JACHKAR / “Cruz de Piedra” - / Acto Inagural y de Uncion / COLECTIVIDAD ARMENIA DE CORDOBA / 102 Aniversario / GENOCIDIO ARMENIO / 19 de Abril 2017. На средней: JACHKAR / “CRUZ DE PIEDRA” / Simbolo de la identidad Armenia. / En agradeclmiento a la comunidad / Armenia de la cludad de Córdoba. / DR. RAMÓN JAVIER MESTRE / INTENDENTE DE LA CIUDAD DE CÓRDOBA / Abril de 2017. На правой доске надпись практически повторяет предыдущие.

[56] **Неукен** (исп. Neuquén) – провинция в аргентинской Патагонии, разделенная на 16 департаментов.

[57] **Неукен** (исп. Neuquén) – город, административный центр департамента Конфлуенсия (исп. departamento Confluencia) и столица одноимённой провинции.




21 Santa Fe[58]

89.	мемориал	В память 90-летия годовщины жертв геноцида1915.	Установлен в городском парке Parque de las Colectividades близ перекрестка улиц Dorrego и Wheelwright, рядом с рестораном “Riomio”, S2000ADR **Rosario**[59]	30.07.2005	
90.	мемориальная доска	Памятная с изображением мемориала в Ереване и двухстрочной надписью на испанском[60] яз.	Закреплена на верхней стороне постамента, **Там же**	30.07.2005	
91.	мемориальная доска	Памятная девятистрочная надпись на испанском[61] языке	Закреплена на лицевой стороне постамента, **Там же**	30.07.2005	
92.	мемориальная доска	Двадцатиоднастрочная надпись[62]	Первоначально была установлена с правой стороны постамента, затем на ней добавлена карта Армении и перенесена в левую сторону, **Там же**		
93.	мемориал	«Не забудь меня» В память 102-й годовщины 1.5 млн жертв Геноцида армян	"No Me Olvides", Установлен с левой стороны предыдущих памятников, **Там же**	24.04.2017	

[58] **Санта-Фе** (исп. Santa Fe) – провинция в восточной части Аргентины, разделенная на 19 департаментов.

[59] **Росарио** (исп. Rosario) – город, административный центр одноименного департамента в провинции Санта-Фе. Вместе с пригородами и ближайшими городами образует агломерацию, являющейся третьей по численности в стране, после Буэнос-Айреса и Кордовы.

[60] MONUMENTO A LOS MARTIRES / EREVAN - ARMENIA

[61] COLECTIVIDAD ARMENIA / DE ROSARIO / EN EL 90° ANIVERSARIO / DEL GENOCIDIO /DE 1.500.000 / DE ARMENIOS / PERPETRADOS POR / LOS TURCOS / 1915-2005

[62] PRIMER GENOCIDIO DEL SIGLO XX / COLECTIVIDAD ARMENIA DE ROSARIO / Monumento en memoria de los más / de 1.500.000 ARMENIOS muertos en / el que fuera el "PRIMER GENOCIDIO / DEL SIGLO XX". / A manos del Imperio Turcotomano / primero y del Estado Turco posteriormente, gran parte de los ARMENIOS / que habitaban sus tierras por más de / 2000 años fueron sistemáticamente / aniquilados y deportados a los 4 puntos / cardinales del mundo. / Este es un homenaje a los que cayeron, / a los que sobrevivieron y a las generaciones / que los sucedieron, defendiendo / La Causa Armenia. Promoviendo esos / valores a las generaciones actuales y / comprometiendo a las que vendrán. / EN SU 90° ANIVERSARIO / 1915-2005





16 Río Negro[63]

94.	*маленькая площадь; сквер*	Республика Армения	Plazoleta República de Armenia. Находится на газоне проспекта Av. Leandro N. Alem, в месте пересечения с улицей España, 8324 **Cipolletti**[64]	24.04.2007	
95.	табличка	В память о наименовании площади	На площади República de Armenia, **Там же**	24.04.2007	
96.	мемориал	В память жертв Геноцида армян 1915 г.	На площади República de Armenia, **Там же**	2008	





Tierra del Fuego[65]

97.	*ороним*	Гора Арарат	Mount Ararat, **Westpoint island**[66]		51°20'57.76"S 60°43'3.12"W

[63] **Рио-Негро** (исп. Río Negro) – провинция в центральной части Аргентины, на северной окраине Патагонии, разделенная на 13 департаментов.

[64] **Чиполлетти** (исп. Cipolletti) – город в в департаменте Генерал-Рока (исп. departamento General Roca) провинции Рио-Негро. Чиполлетти вместе с Неукеном и Плоттьером является самой населённой агломерацией в аргентинской Патагонии.

[65] **Огненная Земля** (исп. Tierra del Fuego), официальное название - **Огненная Земля, Антарктида и острова Южной Атлантики** (исп. Provincia de Tierra del Fuego, Antártida e Islas del Atlántico Sur) — самая южная провинция Аргентины. Административно разделена на 4 департамента. Административный центр – Ушуая (исп. Ushuaia).

[66] **Остров Вестпоинт** (англ. Westpoint island), один из Фолклендских островов в департаменте Острова Южной Атлантики (исп. Islas del Atlántico Sur).

Условные сокращения:
Av (Avenida) – проспект
Cal. (Calle) – улица
Bar. (Barrio) – микрорайон

Условные цветовые обозначения:

Армяно-католические
Армяно-евангелистские

Библиография:

1. **Ագառյան Հրայր**, Հայ գաղթօջախների պատմություն: *Հարավային Ամերիկա,* էջեր 762-764: - Եր., Զանգակ-97: 2002: - 768 էջ:
2. **Հայ եկեղեցի. նվիրապետական աթորներ, թեմեր**: - Եր.: Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբ.: 2001: - 220 էջ:
3. **Հայ Սփյուռք** հանրագիտարան: *Արգենտինա*, էջեր 100-110: - Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. 2003: - 732 էջ:
4. **Հայկական Սովետական Հանրագիտարան**: Հ. 1, *Արգենտինա,* էջեր 714-715: - Եր., 1974; Հ. 2, *Բուենոս-Այրես,* էջ 586: - Եր., 1976:
5. **Մալխասյան Մ.**, Հայերն աշխարհում: - Եր., Հեղինակային հրատարակություն: 2007: - 144 էջ:
6. **Քրիստոնյա Հայաստան** հանրագիտարան: *Արգենտինայի թեմ*, էջ 143: - Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. - 2002: - 1076 էջ:
7. Итоги армянской внешней политики за 2006 год: Отчет МИД Армении. // Информ-Агенство REGNUM. 10.01.2007.
8. **Kazandjian Christian**, L'Arménie et l'Argentine, quelques repères. // “Nouvelles d’Arménie Magazine”, numéro 73 Mars 2002.
9. **Ojunian Julieta**, Comunidad Armenia de Río Negro y Neuquén. // http://www.efectotabano.com.ar/A-92-ANOS-DEL-GENOCIDIO-PERPETUADO.
10. **Zenian David**, The Armenians of Argentina: the early days of a new community. // 11/1/2000 http://www.agbu.org/publications/article.asp?A_ID=223&image=3

Արտաշես Էնֆիաջյան(ց)

Եսայան Վ. Բ.
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/
vardanesayan@yahoo.com

Վճռորոշ բառեր՝ Արտաշես Էնֆիաջյան, քաղաքական, հասարակական, տնտեսական գործունեություն, ազգասեր, բարերար

Арташес Энфиаджян(ц)
Есаян В.Б.
Институт истории НАН РА (Армения, Ереван)
vardanesayan@yahoo.com

Резюме: Статья рассказывает о политической, общественной и патриотической деятельности одного из известнейшгих армянских семей начала 19-го века в Тифлисе – Энфиаджянах, в частности о Арташесе Энфиаджяне, который развернул широкую промышленную и финансовую деятельность (производство табачных изделий, основание банков), а также политическую активность (являлся одним из основателей Армянской народной партии).
Ключевые слова: Арташес Энфиаджян, политическая, общественная, экономическая деятельность, патриот, меценат

Artashes Enfiadjian
Esayan V.B.
Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan)
vardanesayan@yahoo.com

Abstract: The article tells about the political, social and patriotic activities of one of the most famous Armenian families of the early 19th century in Tiflis - Enfiadjian, in particular Artashes Enfiadjian, who launched a wide range of industrial and financial activities (production of tobacco products, establishment of banks), as well as political activity (he was one of the founders of the Armenian People's Party).
Keywords: Artashes Enfiadjian, political, social, economic activities, patriot, philanthropist

XIX դարի II կեսից սկսած Թիֆլիսի նահանգում և մասնավորապես արևելահայ կյանքի կենտրոն Թիֆլիս քաղաքում բուռն վելեք ապրող տնտեսությունում իրենց վճռական դերակատարությունն ունեին հայերը: Տնտեսության շատ ճյուղերում և հատկապես բանկային կապիտալի ոլորտում մեծ ազդեցություն ունեին Բեզիրջանյան, Մանթաշյան, Էնֆիաջյան(ց)[1] և մի քանի այլ նշանավոր հայ ընտանիքներ: Նրանց կապիտալ ներդրումների շնորհիվ տարածաշրջանում մեծ առաջընթաց ապրեցին ոչ միայն ավանդական տնտեսության ճյուղերը, այլև սկիզբը դրվեց Բաքվի նահանգում նավթի արդյունահանմանը: Բանկային, առևտրական և արդյունաբերական կապիտալի մեծ մասին տիրում էին հայերը: Այդ վիճակը շարունակվեց նաև XX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում:

Էնֆիաջյանները[2] դեռևս 18-19-րդ դարերից քաղաքական և հասարակական ու ազգանվեր ակտիվ գործունեություն էին ծավալել Անդրկովկասում: Մասնավորապես, հանդիսանալով «Էնֆիաջյան» ֆաբրիկայի հիմնադիրները, որի արտադրանքն արտահանվել է Եվրոպա և Միացյալ նահանգներ: Համբարձում Էնֆիաջյանը եղել է Թիֆլիսի Վաճառական բանկի հիմնադիրներից մեկը, դումայի պատգամավոր, քաղաքային Հասարակական կառավարչության և Փոխադարձ վարկի ընկերության

[1] Ժամանակի բոլոր աղբյուրներում գրվում էր Էնֆիաջյանց, իսկ հետագայում շրջանառվում է նաև Էնֆիաջյան տարբերակը: Երկուսն էլ համազոր են և ճիշտ:

[2] Ազգանունը ծագել է Էնֆիաճի՝ <<քթախոտ պատրաստող և վաճառող>> թուրքերեն բառարմատից, տե'ս Ավետիսյան Տիգրան, Հայոց ազգանունների բառարան, հեղինակային հրատարակություն, Ե., 2010, էջ 121:

անդամ, ինչպես նաև՝ թիֆլիսյան Վերնատան գլխավոր հովանավորներից մեկը[3]:

1860-1863 թթ. Համբարձում Էնֆիաջյանի հովանավորությամբ և տնօրինությամբ լույս է տեսել «Կռունկ Հայոց աշխարհի» «բարոյական, բանասիրական, նկարագրական և վիճակագրական» «Նախնի եւ արդի Հայաստանեայց» նվիրված ամսագիրը[4]: Եվ, առհասարակ, Էնֆիաջյանների ողջ գերդաստանը գիտության և մանկավարժության ոլորտում մեծ նվաճումներ գրանցած մասնագետներ է տվել: Սարդարապատի ազգային թանգարանում՝ Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակմանը նվիրված ցուցադրության հատվածում, առկա են պատմական փաստեր և բացառիկ ցուցանմուշներ, որոնք փաստում են Էնֆիաջյանների գերդաստանի անցած ուղին: Սրանք այնպիսի փաստեր են, որոնք խոսում են Էնֆիաջյանների ծավալած ազգանպաստ գործերի մասին:

Դեռևս 1855 թ. **Համբարձում Էնֆիաջյանը Թիֆլիսում գլանակի երկու կրպակ ուներ,** (մեկը Երևանյան հրապարակում, Թամամշյանի տան առաջին հարկում էր, մյուսը՝ Վելյամինովսկայա փողոցում, Խոջամինասյանի տանը): Սրանք քաղաքում ծխախոտի առաջին քաղաքակիրթ վաճառատեղիներն էին: Հ. Էնֆիաջյանցն առաջինն էր, որ զբաղվեց ծխախոտի արդյունաբերական արտադրությամբ: 1866 թ. ապրիլին Թիֆլիսի առևտրական «Վաճառական» հայերեն շաբաթաթերթում, հայտնի կովկասագետ Ալ. Երիցյանը գրում էր. «Կովկասի կողմերը թութունը բերում են Տաճկաստանից, բայց թանկ լինելու պատճառով գործ է ածվում միայն բարձր և միջին կարգի ժողովրդի մեջը, բայց ստորին կարգի ժողովուրդը, խեղճերը զուրկ են մնում էդ թութունից…»[5]:

Նա ուներ ընդարձակ պլանտացիաներ, որտեղ աշխատում էին բազմաթիվ փորձառու համշենահայ ծխախոտագործներ: 1895 թ. Հ. Էնֆիաջյանը հիմնում է «Միր» ֆաբրիկան, որը 1901-ին վաճառում է ազգակիցներին, իսկ ինքը հիմնում նորը: Նա մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում Թիֆլիսում. 2-րդ գիլդիայի վաճառականը քաղաքային Հասարակական կառավարչության անդամ էր և դումայի պատգամավոր (1864թ.), 1895-ից Փոխադարձ վարկի ընկերության անդամ[6]:

Հոր հիմնած բիզնեսը հաջողությամբ շարունակեց ու որակական նոր աստիճանի բարձրացրեց **որդիներից Արտաշեսը**: Նա ծնվել է Թիֆլիսում 1866 թվականին: Ավարտել է տեխնիկական դպրոցը: Արդյունաբերական տարբեր հիմնարկություններում վարել է մի շարք պատասխանատու ընտրովի պաշտոններ: Եղել է Թիֆլիսի շրջանի ֆաբրիկանտների և գործարանատերերի ընկերության անդամ, Թիֆլիսի բիրժայի նախագահ, կենտրոնական հաշտարար ատյանի նախագահի օգնական, վաճառականների ավագ վաճառականական բանկի վարչության անդամ, Թիֆլիսի առևտրական դպրոցի հոգաբարձության անդամ, Թիֆլիսի Մանթաշյան առևտրական դպրոցի հոգաբարձության փոխնախագահ: Բացի սրանցից, նա Թիֆլիսի արքունական պալատի ընդհանուր ատյանի, ինչպես նաև եկամտային հարկի համար կազմված նահանգական ատյանի անդամն էր[7]:

Ա. Էնֆիաջյանը խորապես ազգասեր մարդ էր: Լինելով Թիֆլիսի քաղաքային խորհրդի պատգամավոր, փոխադարձ վարկի ընկերության անդամ, վաճառականական ատյանի (купеческая камера) ավագի տեղակալ, սակարանային կոմիտեի անդամ, նա միաժամանակ Ալ. Մանթաշյանցի առևտրական դպրոցի հոգեբարձական խորհրդի անդամ էր, 1-ին առևտրական ուսումնարանի հոգեբարձուների խորհրդի անդամ, տեխնիկական և երկաթուղային ուսումնարանի չունևոր աշակերտների օժանդակության ընկերության նախագահ: 1909 թ. Ա. Էնֆիաջյանը հանգուցյալ հորը պատկանող 300 կտոր հայերեն գրքերը նվիրաբերեց «Թբլիսի հայոց բարեգործական ընկերությանը»[8]:

---

[3] Տե՛ս Նորավանք, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (19), 2008, էջ 135,136, 139,140:

[4] Տե՛ս «Կռունկ Հայոց աշխարհի», խմբագիր Մարկոս Աղաբեկյան, տնօրեն և հրատարակիչ՝ Համբարձում Էնֆիաջյան: Հանդեսի մատենագիտությունը տե՛ս Զեյթունցյան Ա. Ս., «Կռունկ Հայոց աշխարհի» և «Հայկական աշխարհի կռունկ» կամ «Հայկական աշխարհ» ամսագրերի մատենագիտություն» աշխատությունում< Ե., 1982, էջ 1-48:

[5] Տե՛ս Համբարյան Ա., Ալեքսանդր Երիցյան, Պատմաբանասիրական հանդես, 60-1(179), էջ 181:

[6] Տե՛ս Устав Тифлиского коммерческого банка, Тифлис, 1913.

[7] Տե՛ս Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հ. Բ, Էջմիածին, 1922:

[8] Տե՛ս <<Ժողովրդի ձայն>>, :

Համբարձում Էնֆիաջյանցի «Միր» ֆաբրիկայի հիման վրա 1901թ. Թիֆլիսում ստեղծվեց նույնանուն բաժնետիրական ընկերությունը, որի վարչության նախագահն էր Բ. Եղիազարյանը, անդամներ էին Գ. Տեր-Ասատրյանը և Մ. Անտոնյանը (մեկ տարի անց վարչության անդամներ դարձան Գ. Բայանդուրյանը, Ռ. Գոքինյանը)։ 500 հազար ռուբլի հիմնադիր կապիտալով այդ ֆիրման արտադրում էր «Ատլաս» մակնիշի ծխախոտ ու գլանակներ, որոնք վաճառվում էին Թիֆլիսի ու Բաքվի սեփական խանութներում։ Ընդամենը 79 բանվոր ունեցող այս ֆաբրիկան տարեկան թողարկում էր 750 հազար ռուբլու ծխախոտ[9]։

1912 թ. Թիֆլիսի նահանգում ամենամեծը «Ա. Հ. Էնֆիաջյանց» ֆաբրիկան էր, որտեղ քանակով ամենամեծաթիվ (280) բանվորներ էին աշխատում։ Այստեղ արտադրվում էր տարեկան 1 մլն ռուբլու ծխախոտ։ Ֆաբրիկան թողարկում էր «Սոլիդնիյե», «Ինտելիգենտնիյե», «Էքստրա» անվանումներով ընտիր գլանակներ, որոնք արտահանվել են Եվրոպա և ԱՄՆ[10]։

1912 թ. նոյեմբերի 30-ին հայերը 5 մլն ռուբլի հիմնադիր կապիտալով **ստեղծեցին** նաև **Թիֆլիսի Վաճառականական բանկը**[11]։ Հիմնադիրներն էին Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը, Ա. Միլյանցը, Ա. Բաղդասարյանը, Մ. Բոզարջյանցը, Հ. Մեյլանյանը, Մ. Դոլուխանյանը, **Ա. Էնֆիաջյանը**, Ս. Գյուլբենկյանը, Ե. Թյունիբեկյանը, Գր. Համբարդանյանը, Հ. Կամոյանը, Ս. Տեր-Հովհաննիսյանը, Մ. Քալաեթարյանը, Մ. Մարաիրոսյանցը։ Համեմատության համար նշենք, որ այս նույն թվականին վրաց վերնախավը ստեղծեց իր առաջին՝ Թիֆլիսի Ազնվականական հողային բանկը, որի հիմնադիր կապիտալն ընդամենը 147.300 ռուբլի էր։

Ա. Էնֆիաջյանը երկար ժամանակ եղել է Թիֆլիսի Քաղաքային Դումայի պատգամավոր։ 1905 թվականից ակտիվ մասնակցություն է ունեցել Ռուսաստանի Ժողովրդական ազատության կուսակցության (Կադետների) «Մշակ» թերթի շուրջ համախմբված խմբի (ապագա Հայ Ժողովրդական կուսակցության կորիզն էր) գործունեությանը։ Իսկ ավելի ուշ եղել է Հայ Ժողովրդական կուսակցության հիմնադիր անդամներից և իր ներդրումն է ունեցել այդ քաղաքական ուժի ծրագրերի մշակմանն ու իրականացմանը։ Ա. Էնֆիաջյանը հատկապես գործուն մասնակցություն է ունեցել ՀԺԿ-ի ծրագրի տնտեսական հատվածի մշակմանը, որում[12] ՀԺԿ-ն հայտարարեց, որ պաշտպանում էր կապիտալի, մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների գերակայությունը[13]։

Փորձառու գործարար ու տնտեսության գիտակ Ա. Էնֆիաջյանը հարազատ կուսակցությանը հորդորում էր, որ շրջահայաց լրջությամբ կշռադատի ստեղծված քաղաքական իրավիճակը։ Որդեգրի գործունեության այնպիսի ուղի, որն ամբողջությամբ համապատասխաներ հայության շահերին, կապահովեր նրանց համար խաղաղ ստեղծագործական աշխատանքի հնարավորություններ, զերծ կպահեր անակնկալներից և միշտ հարազատ մնար «եվոլիւցիական ճանապարհով, աստիճանական զարգացման եվ հետզհետե եկող յաղթանակների շնորհիվ»[14]։

Խելացի տնտեսագետն ու պատվարժան հայը միաժամանակ համոզված էր և նույնն էլ հորդորում էր իր կուսակիցներին, որ բոլոր հարևանների հետ համերաշխ, խաղաղ աշխատանքը և անկեղծ բարեկամությունը հնարավորություն կտան «պատուով դուրս գալու այն փակուղիից, որի մէջ գտնվում էր հայութիւնը»[15]։

Ա. Էնֆիաջյանը հաճախակի հանդես էր գալիս տնտեսությանն ու ֆինանսական բնագավառներին նվիրված շահեկան զեկուցումներով, որոնք տպագրվում էին կուսակցության «Ժողովուրդ» և «ժողովրդի ձայն» պաշտոնաթերթերում։ Բերենք մի օրինակ՝ «Մեր տընտեսական ներկան և ապագայի հեռանկարները»[16]։ Նա շեշտում էր, որ Հայաստանը ֆինանսական և առևտրաարդյունաբերական ճյուղերում ծանր ժառանգություն է ստացել, որը հնարավոր կլիներ փոխել միայն ֆինանսական խոշոր ներդրումների միջոցով։ Իսկ այդպիսի մեծ գումարներ հնարավոր կլիներ

[9] Տե՛ս Նորավանք, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (19), 2008, էջ 140։
[10] Տե՛ս Նորավանք, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (19), 2008, էջ 138։
[11] Տե՛ս Устав Тифлисского купеческого банка, Тиф., 1913.
[12] Տե՛ս «Մշակ», 26 սեպտեմբերի 1917։
[13] «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ.։
[14] Չթենց Գ., Մեր աշխարհայացքը, տե՛ս <<Ժողովուրդ>>, թիվ 8, 8 սեպտեմբերի 1918։
[15] Տե՛ս նույն տեղում։
[16] Տե՛ս «Ժողովուրդ» № 28, 6 նոյեմբերի 1918։

ունենալ միայն երկրի բնական հարստությունների, ջրային էներգիայի անսպառ քանակության օգտագործմամբ խոշոր արդյունաբերության զարգացնելով: Ինչպես նաև Հայաստան կապիտալի ներհոսքի համար նպաստավոր պայմաններ ապահովելով: Նա անհրաժեշտ էր համարում նաև համապատասխան մասնագետներ պատրաստելն և մտավորականության ողջ ներուժը օգտագործելը[17]:

Հայաստանի Առաջին հանրապետության գոյության հենց սկզբից, Ա. Էնֆիաջյանը մյուս բոլոր հայերի նման ոգևորված էր սեփական պետականության ստեղծման փաստով, սակայն կառուցողական ընդդիմության դիրքերից հաճախակի հանդես էր գալիս նաև ՀՀ կառավարության գործունեության քննադատությամբ: Իսկ երբ Հ. Քաջազնունու կազմած Առաջին կառավարությունը հրաժարական տվեց և ՀԺԿ-ն մաս կազմեց կոալիցիոն կառավարությանը, նա դարձավ ֆինանսների նախարար: Երբ կառավարությունը մեծ ոգևորությամբ Երևան փոխադրվեց, նորանշանակ ֆինանսների նախարար Ա. Էնֆիաջյանը հայտարարեց, որ նոր տարում ներկայացնելու է կայուն պետական բյուջեի նախագիծ և միջոցներ կձեռնարկի սեփական դրամ ստեղծելու ուղղությամբ: Սակայն ոգևորությունը երկար չտևեց, ընդամենը մի քանի շաբաթ: Ժողովրդական նախարարները՝ այդ թվում նաև Ա. Էնֆիաջյանը, ուղղակի լքեցին Երևանը, քանի որ մի կողմից կյանքի պայմաններն էին շատ ծանր՝ նրանք կարոտ էին նույնիսկ սև հացին, քնում էին գետնին և վարժված չէին ոջիլներին, իսկ մյուս կողմից հատկապես Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի մենատիրական գործունեության պատճառով կային ներքին միջկուսակցական լուրջ տարակարծություններ:

Այնուամենայնիվ Ա. Էնֆիաջյանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ ծրագրվեց պետության բյուջեն և մշակվեց համապատասխան օրինագիծ, որը Քաջբերունին[18] ներկայացրեց Հայաստանի Խորհրդարանին: Այդ ծրագիրը կյանքի կոչելու համար խորհրդարանը փետրվար 4-ին որոշեց հանձնարարել վարչապետ Քաջազնունուն մեկնել Եվրոպա, այնուհետև Ամերիկա, որպեսզի Հայաստանի իշխանությունների անունից դիմի դաշնակից պետություններին և Ամերիկային ու նրանցից օգնություն խնդրի: Այդ միջոցով թերևս հնարավոր կլիներ սովի ու հիվանդությունների ճիրաններում գալարվող Հայաստանի համար պարեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ ներկրել: Ուղևորության ծախսերը հոգալու համար վարձապետին տրվեց 550 հազար ռուբլի վարկ, որը նախատեսված էր Էնֆիաջյանի նախագծում:

Ավելի ուշ՝ փետրվարի 15-ին, երբ վարչապետի պաշտոնակատար նշանակվեց Ալեքսանդր Խատիսյանը, Քաջբերունին մեկնեց Թիֆլիս, որտեղից անգլիական հրամանատարության միջամտությամբ կարողացավ ապրիլ 16-ին վերադառնալ Երևան՝ «իր հետ տանելով ելեւմտական նախարար Արտաշէս Էնֆիաջեանը, գիւղատնտես Յ. Փիրալեանը եւ սպայ Ս. Մելիքեանը»[19]: Սակայն երբ ընդունվեց հայտնի Մայիս 28-ի ակտը, Ժողովրդական Կուսակցությունը հիմնավորելով, որ այն միակողմանի բնույթ է կրում, չունի Պողոս Նուբարի հավանությունը, չի բխում Հայկական հարցի միջազգային իրավիճակից, չի համապատասխանում հայ ժողովրդի շահերին, հետևաբար չի ընդունում այն և պահանջեց չեղյալ հայտարարել այդ ակտը: Կառավարությունը մերժեց ընդունել այդ պահանջը և հունիս 24-ին ՀԺԿական չորս նախարարներ Ս. Հարությունյանը, Ա. Էնֆիաջյանը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը և Ք. Վերմիշյանը կառավարության կազմից դուրս եկան, որով և կոալիցիան վերջ գտավ:

Ի վերջո, քաղաքական փոփոխությունների և անկայուն վիճակի պատճառով Ա. Էնֆիաջյանը ստիպված արտագաղթեց և հիմնվեց Բելգիայում: Բրյուսելում նա հիմնեց «Էնֆի» անունով ծխախոտի ֆաբրիկա, որտեղ հիմնականում աշխատում էին բազմաթիվ գաղթական կովկասահայեր[20]:

[17] Տե՛ս «Ժողովուրդ» № 29, 9 նոյեմբերի 1918:

[18] **Գաբրիել Տեր-Հովհաննիսյան (1837-1920), հայ գրող, հրապարակախոս:**

[19] Տե՛ս «Ժողովուրդ», 4 հունիսի 1919:

[20] Նշենք, որ 1925թ., «Էնֆիից» բացի Բելգիայի մայրաքաղաքում հայերին էին պատկանում ևս չորս ծխախոտարդյունաբերական ձեռնարկություններ Ա. և Հ.Գոյունճյան եղբայրների «Էլմաս», Դ.Մսրյանի «Տավրոս», Տ. Մուրադյանի «Կարս», Ա.Մաթոսյանի «Մարուֆ» ֆաբրիկաները:

Ա. Էնֆիաջյանը չհեռացավ նաև քաղաքական կյանքից: Քիչ հետո նրան տեսնում ենք Սևրի մեջ, որտեղ օգոստոսի 10-ին ստորագրվեց հռչակավոր դաշնագիրը, որով ստեղծվում էր Միացյալ Հայաստանը և թվում էր, թե հայության նվիրական երազը իրականություն էր դառնալու: Նա դոկտոր Նևրուզի հետ որպես խորհրդական Ավետիս Ահարոնյանի պատվիրակության մեջ էր և որպես պետական պաշտոնատար անձ մասնակցում էր Խաղաղության Համաժողովին:

Հայ ժողովրդի ապագայով մտահոգ հաջողակ գործարարը, լավագույն հատկություններով օժտված մարդն ու բարերարն իր մահկանացուն կնքեց 1924 թ. մարտի 4-ին: Նրա կյանքի պատմությունը շատ ուսանելի կողմեր ունի և կարող օգտակար լինել տնտեսական ու բանկային գործով հոտաքրքրվողների համար:

Регион и мир, 2018, № 3

Հայաստանի Առաջին Հանրապետությունը և ռամկավարները

Սարգսյան Ս.Թ.
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ /Հայաստան, Երևան/
sargsyansuren@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ Ռամկավար կուսակցություն, Հայկական առաջին հանրապետություն, խորհրդարան

Первая армянская республика и рамкавары

Саргсян С.Т.
Институт истории НАН РА (Армения, Ереван)
sargsyansuren@yandex.ru

Резюме: Статья посвещена описанию некоторых исторических фактов столетней давности, касающихся парламентской деятельности армянской либерально-демократической партии (Рамкавар) в период русской февральской (буржуазной), октябрьской (социалистической) революций и существования Первой Армянской Республики.
Ключевые слова: партия Рамкавар, Первая армянская республика, парламент

The first Armenian republic and the Ramkawars

Sargsyan S.T.
Institute of History of NAS of RA (Armenia, Yerevan)
sargsyansuren@yandex.ru

Abstract: The article is devoted to the description of some historical facts of a hundred years ago, concerning the parliamentary activity of the Armenian Liberal Democratic Party (Ramkavar) during the Russian February (bourgeois), October (socialist) revolutions and the existence of the First Armenian Republic.
Keywords: Ramkavar, First Armenian Republic, Parliament

Ռուսաստանում 1917 թ. Փետրվարյան «մեծ ու անարյուն» հեղափոխության հաղթանակից հետո, իշխանության հին կառույցների վերացումը և նորերի ստեղծումն առաջ բերեցին խառնաշփոթ ու խիստ անկայուն վիճակ: Հեղափոխության մեղրամիսը կարճ տևեց և Ժամանակավոր կառավարության նշանակած Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ՕԶաԿոմ, նախագահ՝ Խառլամով) շատ արագ հեղինակազրկվեց: Իսկ երբ հաստակվեց Ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքական ուղղվածությունը, ստեղծված խառը կացությունից ելք գտնելու նպատակով հայ ազգային կուսակցությունները հրավիրեցին Արևելահայերի 1-ին համագումարը, որը տեղի ունեցավ 1917թ. սեպտեմբերի 28-հոկտեմբերի 3-ը Թիֆլիսում:

Համագումարի պատվիրակների կեսից ավելին ՀՅ Դաշնակցություն կուսակցության անդամներ էին: Համագումարը քննության առավ արտաքին ու ներքին բնույթի (ինքնապաշտպանության, գաղթականության, պարենավորման և այլն) մի շարք կարևոր խնդիրներ: Վերջում բազմակուսակցական սկզբունքով ընտրվեց Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդ (այսուհետև՝ ՀԱԽ): Խորհրդի նախագահ ընտրվեց հասարակական-քաղաքական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանը: Նշենք, որ պատմական դեպքերի բերումով համախորհրդակցությունը ստեղծելով համազգային միասնական պատասխանատու մարմին՝ հանձին Հայոց ազգային խորհրդի, իրականացրեց իր հիմնական և գլխավոր նպատակը: Ավելացնենք, որ Հայոց ազգային խորհուրդը փաստորեն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանությունը մինչև Հայաստանի անկախության հռչակումը:

Այստեղ էին կենտրոնացել արևելահայ մտավորականության սերուցքը և տարածաշրջանի հայ քաղաքական և գործարար աս-

պարեզի գործիչների հիմնական մասը: ՀԱԽ-ը կազմված էր 15 անդամից՝ 6 դաշնակցական (Ավետիս Ահարոնյան, Աբրահամ Գյուլխանդանյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Խաչատուր Կարճիկյան, Նիկոլ Աղբալյան, Կորյուն Ղազազյան), 2 սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ Հովհաննես Տեր-Օհանյան, Լևոն Աթաբեկյան), 1 հնչակյան (Ղազար Տեր-Ղազարյան), 1 մենշևիկ (Արամայիս Երզնկյան), 3 անկուսակցական (Տիգրան Բեկզադյան, Ստեփան Մամիկոնյան, Պետրոս Զաքարյան) և Հայ ժողովրդական կուսակցության 2 ներկայացուցիչ (Սամսոն Հարությունյան, Հարություն Այվազյան)[1]:

Բացի Թիֆլիսում ստեղծված Հայոց կենտրոնական ազգային խորհրդից, տեղերում նույնպես ստեղծվեցին ազգային խորհուրդներ՝ որպես մասնաճյուղեր և տեղական իշխանություն: Այսպես, հայ ազգային խորհուրդներ ստեղծվեցին Բաքվում, Երևանում, Ղարաբաղում, Ախալքալաքում և այլուր:

ՀԱԽ-ի առաջին կոչում նշվում էր. «Ազգային խորհուրդը ստանձնում է ազգային բոլոր գործերի գերագույն ղեկավարությունը որպես գործադիր մարմին»: Հայոց ազգային խորհուրդն ուներ իր բաժինները կամ կոմիսարիատները՝ զինվորական, գաղթականության, բժշկական, դպրոցական, պարենավորման և այլն: ՀԱԽ-ի զինվորական միությունն ստեղծեց Հայկական ազգային կորպուս՝ գեներալ Թովմաս Նազարբեկովի (Նազարբեկյան) գլխավորությամբ, որն ստանձնեց Հայաստանի պաշտպանությունը 1918 թ-ի ծանր ժամանակաշրջանում:


1917 թ. սեպտեմբերի 26-ին Արտիստական ընկերության դահլիճում տեղի է ունենում հետփետրվարյան շրջանում կարևոր դերակատարություն ստանձնած ՀԺԿ առաջին համագումարը: Նախագահներ ընտրվեցին պետական դումայի (Ռուսաստանի պառլամենտ) երեք հայ պատգամավորները՝ Մ. Պապաջանյանը, բժ. Հ. Այվազյանը, Գ. Տեր-Պետրոսյանը: Ներկա էին ՀԺԿ վարչության և խորհրդի 60 ներկայացուցիչներ, ընդունվեց կուսակցության ծրագիրը[2]: Համագումարից առաջ «Մշակը» ՀԺԿ-ի մասին հոդված հրապարակեց, որտեղ ասվում էր, որ «ծրագրի հեղինակները թողարկված ձևով պահանջում են Ռուսահայաստանի քաղաքական ավտոնոմիա, որը ՀԺԿ-ն համարում է քաղաքական մոմենտի մոտակա, իրագործելի պահանջ»[3]: Ծրագրում ՀԺԿ-ն պաշտպանում էր կապիտալի, մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների գերակայությունը[4]: Դեմ էր արտահայտվում դասակարգային պայքարին և չէր հանդուրժում, որ «մի ամբողջ պատմական ազգ զոհաբերվի այդ լոզունգներին»[5]: Հայկական հարցում համերաշխվելով ՀՍՌԿ-ի ծովից ծով Հայաստանի պահանջին՝ձգտում էր դրա կենսագործմանը՝ մշտապես որպես բացառիկ գործոն՝ հայերին վերապահելով պատերազմից ամենից շատ տուժած ժողովուրդներից մեկը, թերևս՝ ամենատուժվածը:

1918 թ. Մայիսի 26-ին մի քանի ժամ տևած Հայոց Ազգային Խորհրդի նիստում, որի օրակարգում հիմնականը՝ «հայկական գաւառների ապագայի» հարցն էր, առաջարկված վեց կետերից, այդ թվում Հայաստանի անկախության հռչակում, ոչ մեկը բավարար ձայն չի հավաքում և չի ընդունվում, բացի մեկից: Դրա հեղինակը **ՀԺԿ անդամ Լևոն Թումանյանն էր և այն տվյալ պահի համար թերևս լավագույն լուծում էր.** «Նկատի ունենալով որ Վրաստանի եւ Ատրպէյճանի անկախութեան հրապարակումով լուծարուած է Անդրկովկասեան անկախութիւնը, Հայոց Ազգային խորհուրդը ժամանակաւորապէս իր վրայ վերցնում է կառավարչական գործառոյթներ հայկական գաւառների նկատմամբ»: Առաջարկն ստանում է 7 ձայն և համարվում ընդունված[6]: Իսկ անկախության մասին ՀՀ կառավարությունը հայտարարեց ավելի ուշ՝ 1918 թ. հունիսի 13-ին[7]:

1918 թ. հունիսի 7-ին Հայոց Ազգային խորհուրդը (13 կողմ և 2 դեմ) կառավարության նախագահ ընտրեց Հովհաննես Քաջազնունուն: Դեմ քվեարկեցին և կառավարության կազմի մեջ մտնելուց հրաժարվեցին ՀԺԿ երկու ներկայացուցիչները (Մ. Պապաջանյան, Ս. Հարությունյան)[8]: Նրանք ցանկանում էին, որ իրենց կուսակից Մ. Պապաջանյանին տրվի

[1] ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 1-3:
[2] Տե'ս «Մշակ», 26 սեպտեմբերի 1917:
[3] Տե'ս «Մշակ», 23 սեպտեմբերի 1917:
[4] «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ.:
[5] Տե'ս «Մշակ», 14 մայիսի 1917:
[6] ՀԱԱ, ֆ. 222, ցուցակ 1, գործ 141
[7] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 146:
[8] «Հորիզոն», 13 հունիսի 1918 թ.:

վարչապետի պաշտոնը և դա պատճառաբանում էին հետևալ փաստարկներով.



ա) առաջացել էին նոր սոցիալ-տնտեսական, քաղաքական և իրավական պայմաններ,

բ) այդ պայմաններում ավելի շատ կիրթ, համալսարանավարտ, տնտեսագիտական և իրավաբանական գիտելիքներ ունեցող մարդկանց անհրաժեշտություն էր զգացվում, իսկ այդպիսիք ամենաշատը կային ՀԺԿ-ում,

գ) ճիշտ կլիներ, որ ֆիդայական պայքարը ղեկավարած ՀՅԴ-ն գոնե առժամանակ հեռանա քաղաքական ասպարեզից, որպեսզի հնարավոր լինի թուրքերի հետ լեզու գտնել,

դ) պետություն կերտելու համար նոր ուժ է պետք (նկատի ունեին իրենց)[9]:

Այսինքն՝ նրանք գտնում էին, որ նշված բոլոր պայմանները և իբրև ավելի խելացի և չափավոր գործելակերպ ունեցող կուսակցության, **բավարարում է միայն ՀԺԿ-ն, հետևապես իրենց էին վերապահում ՀՀ կառավարություն ստեղծելու իրավունքը**: Նրանք նաև փորձում էին համոզել, թե իրենք իշխանատենչ չեն, որ կառավարություն կազմելու և ղեկավարելու նրանց պահանջն իբր թելադրվում է հայ ժողովրդի շահերով[10]: Իմիջիայլոց նկատենք, որ չնայած ՀԺԿ-ի որդեգրած այս մերժողական կեցվածքին, այնուամենայնիվ ՀՀ առաջին կառավարության արդարադատության նախարար դարձավ ՀԺԿ համակիր Գ. Պետրոսյանը[11]:

1918 թ. հուլիսի 17-ին Ազգային խորհուրդն ու ՀՀ կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվեցին Հայաստան, որի հետևանքով **հայ քաղաքական կյանքի կենտրոնը դարձավ Երևանը:** Այստեղ կազմվեց Հայաստանի խորհրդարանը, որի 46 պատգամավորներից 18-ը ՀԺԿ-ականներ էին (ՀԺԿ-ականները որպես աջ ուժ՝ խորհրդարանում նստում էին նախագահությունից աջ հատվածում)[12]: Ի դեպ՝ ՀԺԿ-ն երկու մանդատ էլ ուներ Վրաստանի խորհրդարանում[13]:

Նորակազմ խորհրդարանն ընդունեց մի շարք կարևոր որոշումներ, այդ թվում ՀԺԿ անդամ **Ստ. Մալխասյանի առաջարկով հայկական եռագույնը համարվեց ՀՀ պետական դրոշ**: Խորհրդարանի ընտրված երկու փոխնախագահներից մեկը ՀԺԿ անդամ Գրիգոր Խաչատրյանն էր:

Նորակազմ կառավարությունը ներկայացրեց հայտագիր, որի համաձայն իր գործունեության առաջնահերթ խնդիրներն էր համարում. ա) կասեցնել երկրի տնտեսության հետագա քայքայումը, բ) հաստատել կարգ ու կանոն ամեն ինչում, գ) իրականացնել դատաիրավական բարեփոխումներ, դ) բացել հաղորդակցության ուղիները, ե) վերականգնել կապի միջոցները, զ) հնարավորինս մեղմացնել սովն ու գաղթականների ծանր վիճակը, է) ստեղծել սեփական դրամական համակարգ, ը) վերակառուցել երկրի ռազմուժը, թ) կարգավորել հարաբերությունները հարևան երկրների հետ և այլն[14]: ՀԺԿ խմբակցությունը հիմնականում հավանություն տվեց կառավարության այդ նախագծին: Միևնույն ժամանակ խորհրդարանում ստեղծվեց **Պետական վերահսկիչ մարմին**, որի ղեկավար 26 ձայնով ընտրվեց **ՀԺԿ անդամ Մինաս Բերբերյանը[15]:**

Նկատենք, որ ՀՀ խորհրդարանում գործել են ազգային երկու՝ ՀՅԴ և նրան ընդդիմադիր ՀԺԿ-ն և ոչ ազգային՝ Սոց.-դեմ (մենշևիկյան և բոլշևիկյան թևերով) և էսեռական կուսակցությունները[16]: ՀՀ խորհրդարանում ամենաաջա-

[9] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պեյրութ, 1958, էջ 178:

[10] «Մշակ», 12. VI. 1918:

[11] «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ.:

[12] Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 50:

[13] «Հորիզոն», 20 սեպտեմբերի 1918 է.:

[14] «Հորիզոն», 15 օգոստոսի 1918 թ.:

[15] «Բանբեր Հայաստանի արխիվների» 1991, թիվ Զ, էջ 74:

[16] Ազգայիններն իրենց ծրագրերում հենվում էին սեփական ժողովրդի վրա, կարևում էին ազգային ազատագրությունն ու պետական անկախությունը, ապա ոչ ազգայինները, հենվելով Ռուսաստանի վրա, հայ ժողովրդի ազատագրության երաշխիքը տեսնում էին համառուսաստանյան հեղափոխական-դասակարգային պայքարի հաղթանակը:

կողմյան կուսակցությունը ՀԺԿ-ն էր, որի նախագահը Մ. Պապաջանյանն էր, իսկ փոխնախագահը՝ Ս. Հարությունյանը[17]: Ընդհանուր առմամբ, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Հակոբյանը, չնայած իրենց ընդդիմադիր կեցվածքին, ՀԺԿ-ականների գործունեությունը խորհրդարանում հիմնականում պատասխանատու էր և կառուցողական[18]:

1918 թ. օգոստոսի 14-ից Երևանում սկսեց լույս տեսնել ՀԺԿ Երևանի կոմիտեի օրգան «Ժողովուրդ» լրագիրը: Արդեն 1918 թ. աշնանից ՀԺԿ տեղական կառույցներ հիմնվեցին Ապարանի, Փամբակի, Համամլուի, Լոռիի, Դիլիջանի, Քարվանսարայի, Ն. Բայազետի, Ծաղկաձորի, Եղվարդի, Աշտարակի և այլ շրջաններում[19]:

ՀՅԴ-ի վարած հակառուսական քաղաքականության դեմ բուռն գործունեություն ծավալած Համբարձում Առաքելյանը 1918թ. Մայիսին, երբ «հերթական մէկ ճառը կ՛արտասանէր, դաշնակցական գնդակէ զարնուելով սպաննուեցաւ»[20]: Այդ սպանությունից հետո «Մշակ»-ի վերաբերմունքը որոշ չափով մեղմացավ ՀՅԴ-ի նկատմամբ: 1918 թ. սեպտեմբերի 1-ից Թիֆլիսում սկսեց լույս տեսնել ՀԺԿ ԿԿ-ի օրգան «Ժողովրդի ձայն» թերթը: Նկատենք, որ ՀՀ իշխանությունների նկատմամբ ՀԺԿ թիֆլիսյան և երևանյան հատվածների վերաբերմունքը տարբեր էր: 1919 թ. հունիսին ՀԺԿ Կենտկոմը որոշեց պետական կյանքի վերաբերյալ իր բոլոր իրավունքներն ու լիազորությունները հանձնել Հայաստանի կոմիտեին: Այսինքն՝ **ՀԺԿ ծանրության կենտրոնը ևս փոխադրվեց Երևան**:

1918 թ. **սեպտեմբերին տեղի ունեցավ կուսակցության Բ համագումարը:** Այն ընդունեց նոր ծրագիր և **արձանագրեց՝ հայ ժողովուրդը պետք է ունենա միայն մեկ՝ հայկական կողմնորոշում:** Նոր ծրագրում առաջ էր քաշվում «միացյալ և ամբողջական» Հայաստանի ստեղծման խնդիրը. «Դրա մէջ պէտք է մտնէին՝ Արեւելեան Հայաստանը, Արեւմտեան Հայաստանը իր վեց նահանգներով եւ Կիլիկիան»[21]: Հայաստանը պետք է լիներ ժողովրդավարական, խորհրդարանական հանրապետություն, որի պետական լեզուն պետք լիներ հայերենը: Հայաստանից դուրս ապրող հայության համար ՀԺԿ-ն պիտի ջանար հասնել նրան, որ բավարարվեին նրա ազգային և մշակութային պահանջները: Ժողովրդականներն ընդունում էր ազգային շահերի գերակայությունը դասակարգայինի նկատմամբ: Հանդես էին գալիս ազգային դիմագծի և նրա օրինական շահերի ու պատմաքաղաքական իրավունքների պաշտպանությամբ:

[17] ՀԱԱ, ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 1, Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Դ. Անանունի դոնդ, գ. 78, թ. 1:

[18] Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 63:

[19] <<Ժողովրդի ձայն>>, 8 դեկտեմբերի 1918 թ.:

[20] Վարդիվառյան Հ., նշվ. աշխ., էջ 332:

[21] Վարդիվառյան Հ., նշվ. աշխ., էջ 333:

Եվրոպական քաղաքական գործընթացների և ընդհանուր արտաքին քաղաքականության ձևավորման և զարգացման միտումները 1950-1990 թթ. պատմաիրավական համատեքստում

Խուդոյան Գ. Մ.
ՀՀ ոստիկանության ՄՀՎ ԱՊՀ երկրների հետ համագործակցության բաժին, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն /Հայաստան, Երևան/
khudoyan@police.am

Վճռորոշ բառեր՝ Եվրոպական քաղաքական հանրություն, Միասնական եվրոպական ակտ, համատեղ գործողություններ, Եվրոպական խորհրդարան, Սոլեմնի հռչակագիր, Լոնդոնյան զեկույց, Լյուքսեմբուրգյան զեկույց

Тенденции формирования и развития европейских политических процессов и общей внешней политики ЕС в историко - правовом контексте 1950-1990 гг.

Худоян Г. М.
Отдел по сотрудничеству со странами СНГ управления международного сотрудничества Штаба Полиции Республики Армения,
кафедра теории государства и права и конституционного права Образовательного комплекса полиции Республики Армения (Армения, Ереван),
khudoyan@police.am

Резюме: В научной статье рассматривается вопрос формирования и деятельности Европейского Политического Сообщества и Общей внешней политики ЕС. В работе проанализированы правовые акты, доклады и иной инструментарий, формирующие и регулирующие сферу политической общности и Общей внешней политики ЕС 50-90-х годов 20 века. На основе анализа материала, автором обобщаются исторические факты в хронологической последовательности, и констатируется логическая обоснованность проделанной правовой и политической деятельности, с изложением соответствующих оценок.
Ключевые слова: Европейское Политическое Сообщество, Единый Европейский Акт, совместные действия, Европейский Парламент, Декларация Солемна, Лондонский доклад, Люксембургский доклад.

European Political Processes and Common Foreign Policy Formation and Development Trends In Historical Legal Context of 1950-1990

Khudoyan G. M.
The CIS Cooperation Division of International Cooperation Department of the Headquarters of Police of the Republic of Armenia,
Department of Theory of State and Law and Constitutional Law of Educational Complex of Police of the Republic of Armenia (Armenia, Yerevan)
khudoyan@police.am

Abstract: The formation and operation of European Political Community and EU common foreign policy have been discussed in the scientific article. The legal documents, Reports and other toolkit forming and regulating the sphere of political cooperation and European foreign policies of 50-90s of the twentieth century have been analyzed also. Based on analyze of the studied data, author summarizes the historical facts in a chronological sequence, the author has put forward approaches and opinions related to the political legal regulation of European community, and establishes the logical validity of the legal and political activities carried out, with providing the relevant assessments.
Keywords: European Political Community, Single European Act, joint action, European Parliament, Solemn Declaration, London report, Luxemburg report.

20-րդ դարի երկրորդ հատվածը Արևմտյան Եվրոպայի համար կարևորվեց ոչ միայն ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման, Հիմնադիր Պայմանագրերի կնքման, ժողովրդավարության կայացման տեսանկյունից, այլ նաև այն քաղաքական գործընթացներով, որոնք զուգորդում, փոխլրացնում և իրավաքաղաքական հենք են հանդիսանում ցանկացած այլ տիպի համագործակցության համար: Առանցքային կարևորություն ունեն տնտեսական արդյունավետ համագործակցության օրինակով արտաքին քաղաքականության միասնականացման և համախմբմանն ուղղված ջանքերը, որը հետագայում կվերածվի ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության՝ ԵՄ պայմանագրի ներքո: Իսկ մինչ այդ՝ գաղափարների, արժեքների, նպատակների համընդհանրությունը թույլ տվեց նախաձեռնելու միասնական Եվրոպական ընտանիքի ինտեգրման գործընթացները:

Այսպես, Ադխի և Պողպատի Եվրոպական Ընկերակցությունը (այսուհետ՝ ԱՊԵԸ) մարմնավորելով վերպետական կազմակերպության մոդելը, հենք հանդիսացավ, 1955 թ.-ին Իտալիայի Մեսինա[1] քաղաքում գումարված միջկառավարական կոնֆերանսի ժամանակ 6[2] անդամ պետությունների ղեկավարների որոշման համար՝ ընդարձակելու համագործակցությունը՝ տարածելով այն տնտեսության այլ ոլորտների վրա: Դրա արդյունքում 1957 թ.-ին Հռոմում կնքված պայմանագրերով հիմնադրվեցին Եվրոպական տնտեսական (այսուհետ՝ ԵՏԸ) և Եվրոպական ատոմային էներգիայի (այսուհետ՝ Եվրատոմ) ընկերակցությունները[3]:

Այս վերպետական հիմնադիր պայմանագրերի ստորագրումից հետո ընկած ժամանակահատվածը՝ 1957-1986 թթ.-ը Եվրոպական միության իրավունքի գրականության մեջ հայտնի է որպես «քաղաքական լճացման» և ինտեգրման գործընթացների դադարի ժամանակաշրջան[4]: Հիմնադիր պայմանագրերը փոխլրացնող հաջորդիվ փաստաթղթեր հանդիսացան՝ 1965 թ.-ին կնքված «Միաձուլման մասին» պայմանագիրը[5], 1966 թ.-ի «Լյուքսեմբուրգյան համաձայնագիրը»[6], 1970 թ.-ի թիվ 1 և 1975թ.-ի թիվ 2 բյուջետային պայմանագրերը[7], 1986 թ.-ի «Միասնական եվրոպական ակտը»[8] և այլ առանցքային զեկույցներ:

---

[1] Տե՛ս http://www.internationaldemocracywatch.org/attachments/296_The%20Messina%20Declaration%20195 5.pdf (16.04.2018 թ., ժամը 12: 20); Տե՛ս նաև՝ European Union Law / Alina Kaczorowska. (Published 2008 by Routledge-Cavendish), էջ 9:

[2] Հիմնադիր անդամ պետություններն էին՝ Ֆրանսիան, Արևմտյան Գերմանիան, Իտալիան, Նիդերլանդների Թագավորությունը, Բելգիան և Լյուքսեմբուրգը:

[3] Տե՛ս https://www.cvce.eu/en/obj/treaty_establishing_the_european_atomic_energy_community_rome_25_ march_1957-en-a3390764-3e75-421b-9c85-f52de5a14c2f.html; Տե՛ս նաև՝ https://www.cvce.eu/obj/treaty_ establishing_the_eec_convention_on_certain_institutions_common_to_the_european_communities_rome_25_march_1957-en-903872ca-002c-4ba4-b845-c25bbcb0f60f.html (16.04.2018 թ., ժամը 12: 30) :

[4] Տե՛ս Արման Սարգսյան, Տերիկա Մխիթարյան / Եվրոպական միության իրավունք ուսումնական նյութերի ժողովածու. (U-259 – Երևան), էջեր 16-18:

[5] «Միաձուլման մասին» պայմանագրով միասնականացվեցին եվրոպական ընկերակցություններից յուրաքանչյուրի շրջանակներում ստեղծված մարմինների համակարգը՝ հիմնելով մեկ Խորհուրդ և Հանձնաժողով երեք ընկերակցությունների համար՝ որն էլ իր հերթին փոխարինվեց 1997 թ.-ի Ամստերդամի պայմանագրի 9-րդ հոդվածով: Տե՛ս https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri =CELEX:11965F&qid= 1523882386924&from=EN (16.04.2018 թ., ժամը 16: 45) : Տե՛ս նաև՝ Alina Kaczorowska նշվ. աշխ., էջ 13:

[6] Տե՛ս https://www.cvce.eu/en/recherche/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/78472 15b-b917-472d-beb1-a266c1a49f03 (16.04.2018 թ., ժամը 18: 33) ; Տե՛ս նաև՝ Alina Kaczorowska նշվ. աշխ., էջ 12: Նշենք նաև, որ այդ փուլում Ֆրանսիայի պատվիրակների կողմից Եվրոպական միության Խորհրդի նիստերին չներկայանալն անհնարին էր դարձնում նիստերի անցկացումը, և այս դեպքը պատմության մեջ մտավ «բաց աթոռի ճգնաժամ» անվանումով: Այս խնդիրը լուծելու համար կնքվեց «Լյուքսեմբուրգյան համաձայնագիրը», որով նախատեսվեց, որ եթե անդամ պետությունը գտնում է, որ ձայների որակյալ մեծամասնությամբ ընդունման ենթակա որոշման նախագիծն առնչվում է իր կենսական կարևոր շահերին՝ ապա նա կարող է պահանջել, որ նման որոշման նախագիծն ընդունվի ձայների միաձայնությամբ:

[7] Տե՛ս https://www.cvce.eu/content/publication/1999/1/1/93a76f6b-b740-40f0-8b30-2c7c25fa625d/publishable _en.pdf (16.04.2018 թ., ժամը 17: 33); Տե՛ս նաև՝ http://www.europarl.europa.eu/facts_2004/1_1_2_en.htm (16.04.2018 թ., ժամը 17: 33): Նշենք, որ այս պայմանագրերով ուժեղացվում էր ընկերակցությունների վերպետականության աստիճանը՝ նրանց որոշ չափով՝ ֆինանսապես, անկախացնելով անդամ պետություններից:

[8] Տե՛ս https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=LEGISSUM:xy0027&from=EN (16.04.2018 թ., ժամը 18: 07) ; Տե՛ս նաև՝ https://www.cvce.eu/en/collections/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/23bbb26c-a69c-40f1-954c-6b3cb1392b4d (16.04.2018 թ., ժամը 18: 17): «Միասնական եվրոպական ակտը» հանդիսացավ եվրոպական ընկերակցությունների ստեղծումից հետո դրանց հիմնադիր փաստա-

Անշուշտ, Եվրոպայի միավորման գործընթացների զարգացման համար չափազանց կարևոր էր Եվրոպական Քաղաքական Համագործակցության (այսուհետ՝ ԵՔՀ) շրջանակներում իրականացվող գործընթացները: Կարելի ասել, որ ԵՔՀ-ը մշակվել է որպես լրացուցիչ պայմանագրային մեխանիզմ՝ արտաքին գործերում միավորվելու համար[9]: Այսպես, ԵՔՀ պայմանական առաջին, ոչ պաշտոնական փուլը սկիզբ առավ 1959 թ.-ի նոյեմբերի 23-ին Ստրասբուրգում, վեցյակի արտաքին գործերի նախարարների ձեռք բերված համաձայնությամբ՝ հանդիպել յուրաքանչյուր եռամսյակը մեկ[10]: Հաջորդ փուլը, որը ներառում էր 1970-1986 թթ. ընկած ժամանակահատվածը և սկիզբ առավ 1970 թ.-ի հուլիսի 20-ի Լյուքսեմբուրգի կամ Դավինյոնի[11] զեկույցով՝[12] բաղկացած էր ԵՔՀ ձևավորման և զարգացման քաղաքական շրջանակներից՝ զերծ պայմանագրային կարգավիճակից: Եվ վերջապես երրորդ փուլը՝ ներառելով 1986-1993 թթ.-ը բնութագրվում է «Միասնական եվրոպական ակտ»-ին ԵՔՀ - ինկորպորացիայով[13], որին նախորդել էին Կոպենհագենի[14] 23.07.1973 թ., Լոնդոնի[15] 13.10.1981 թ. Զեկույցները, Գենշեր - Կոլոմբոյի պլանը[16], Սոլեմնի Հռչակագիրը[17] և այլ:

Անդրադառնալով «Միասնական եվրոպական ակտ»-ին[18] (այսուհետ՝ ՄԵԱ), անհրաժեշտ է նշել, որ փաստաթղթի III գլխում (հոդված 30) արտացոլված դրույթները ստացան պայմանագրային ձև՝ ձեռք բերելով իրավական հիմք՝ դառնալով իրավաբանորեն պարտադիր[19]: ՄԵԱ-ի մաս կազմող անդամ պետությունները պարտավորվեցին միմյանց հետ խորհրդակցել ցանկացած «արտաքին քաղաքականության ընդհանուր շահի» վերաբերյալ, ավելին, ՄԵԱ-ում հիշատակվում էր նաև անվտանգության ոլորտը՝ նախատեսելով անվտանգության հարցերում ավելի սերտ համա-

---

թղթերում արմատական փոփոխություններ և լրացումներ կատարող առաջին փաստաթուղթը:

[9] Տե՛ս Daniel T. Murphy, European Political Cooperation After the Single European Act: The Future of Foreign Affairs in the European Communities, (12 B.C. Int'l & Comp. L. Rev.335 - Vol. XII, No.2, 1989) էջ 336; Տե՛ս նաև՝ Elizabeth Duquete, "Te European Union's Common Foreign and Security Policy: Emerging from the U.S. Shadow," (7 U. C. Davis J. Int'l L. & Pol'y 2001), էջ 171:

[10] Տե՛ս R. Bernardt Encyclopedia of Public International Law (North Holland, Amsterdam, 1983, Vol.6), էջ 199:

[11] Զեկույցի անվանումը առաջացել է Բելգիայի ԱԳՆ քաղաքական ղեկավար՝ Վիկոմպտ Էտյեն Դավինյոնի, ով լիազորված էր զեկույցի պատրաստման համար՝ անվան շնորհիվ:

[12] Տե՛ս Bulletin of the European Communities. (Vol. 3, No. 11, November 1970), էջեր 9-15, հասանելի աղբյուր՝ http://aei.pitt.edu/64720/1/BUL224.pdf (18.04.2018 թ., ժամը 17: 20) : Զեկույցը հանդիսանում էր 02.12.1969 թ. Հաագայի Կոնֆերանսի կոմյունիկեյի 15-րդ պարագրաֆի իմպլեմենտացիա; Տե՛ս նաև՝ https://www.cvce.eu/obj/second_report_on_european_political_cooperation_in_foreign_policy_matters_copenhagen_23_july_1973-en-8b935ae1-0a38-42d4-a97e-088c63d54b6f.html (20.04.2018 թ., ժամը 17: 30) ; Տե՛ս նաև՝ European foreign policy: key documents/ [edited by] Christopher Hill & Karen E. Smith. (Routledge, 2000), էջեր 74-80:

[13] Տե՛ս Panos Koutrakos Trade, Foreign Policy and Defence in EU Constitutional Law (Hart publishing Oxford and Portland, 2001), էջ 8:

[14] Կոպենհագենում ընդունված որոշումները հիմք դրեցին հավաքական դիվանագիտության գործուն համակարգի աշխատանքին; Տե՛ս Christopher Hill & Karen E. Smith. նշվ. աշխ., էջեր 83-89:

[15] «Լոնդոնի զեկույցը» երրորդն էր զեկույցներից, որով հիմնադրվում և կոդիֆիկացվում էր ԵՊՀ-ը և, որով բացի այլնից նախատեսվում էր անվտանգության քաղաքականության ասպեկտների ճգնաժամային բանակցությունների իրագործման մեխանիզմ; Տե՛ս Christopher Hill & Karen E. Smith. նշվ. աշխ., էջեր 114-119:

[16] 1981 թ.-ին Հանս-Դիետրիխ Գենշերը և Էմիլիո Կոլոմբոն հանդիսանում էին Գերմանիայի և Իտալիայի ԱԳ նախարարներ և իրենց պլանով առաջարկելով «Եվրոպական Ակտի» նախագիծ, փորձ կատարեցին խորացնել ԵՔՀ շրջանակները ու շոշափել՝ բացի դրամական ու ինստիտուցիոնալ համակարգերից՝ մինչ այդմ տաբույի տակ գտնվող պաշտպանական ոլորտը՝ ՆԱՏՕ-ի կոնտեքստից դուրս; Տե՛ս Christopher Hill & Karen E. Smith. նշվ. աշխ., էջեր 120-125:

[17] Հռչակագրով կարևորվում է արտաքին քաղաքականության համակարգումը՝ որպես Եվրամիության դյուրացման միջոց: Այն ընդլայնել է «անվտանգության» հասկացությունը՝ նախկինում քննարկված «քաղաքական ասպեկտներից» մինչև «անվտանգության քաղաքական և տնտեսական կողմերը»; Տե՛ս Daniel T. Murphy, նշվ. աշխ., էջ 336; Տե՛ս նաև՝ Christopher Hill & Karen E. Smith. նշվ. աշխ., էջեր 125-132:

[18] ՄԵԱ-ը հանդիսացավ մի փաստաթուղթ, որը կնքվեց 12 անդամ երկրների՝ Բելգիա, ՄԹ, Դանիա, Ֆրանսիա, Գերմանի, Իտալիա, Նիդերլանդներ, Հունաստան, Իռլանդիա, Լյուքսեմբուրգ, ինչպես նաև նոր միացած Իսպանիա և Պորտուգալիա՝ կողմից վերջին 30 տարիների ընթացքում, որով միավորվեցին ԱՊԵԸ, ԵՏԸ և Եվրոատոմի գործադիր մարմինները: Տե՛ս From Common Market to European Union: Creating a New Model State? / Peter Moloney (Boston, 2014), էջ 223:

[19] Տե՛ս Document 2/15 The Single European Act, Luxembourg, 17 February 1986, and The Hague, 28 February 1986. ՄԵԱ-ի առավել կարևոր առանձնահատկությունն այն էր, որ այն միասնական էր՝ միավորում էր մեկ իրավական ակտում դրույթներ քաղաքական համագործակցության և լրացումներ Ընկերակցության Պայմանագրերում:

գործակցություն[20], ներառելով նաև պաշտպանական արդյունաբերությունը[21]: Այդուհանդերձ, խոսքը չէր գնում ԵՔՀ և Եվրոպական Ընկերակցության (այսուհետ՝ ԵՀ) շրջանակներից պաշտպանական ինտեգրման տարանջատման մասին[22], իսկ ԵՔՀ վրա հիմնված ԵՄԱ-ը նպատակ չուներ ստեղծելու ընդհանուր արտաքին քաղաքականություն[23]: Հաշվի առնելով, որ ԵՔՀ դուրս էր ԵՀ շրջանակից, այն չէր կարող նաև մասնակից լինել Ընկերակցությունների վերպետական կառուցակարգերին՝ մնալով միջկառավարական համագործակցության մեխանիզմի շրջանակներում[24], որը հիմնականում հիմնված էր անդամ պետությունների ստանձնած անորոշ և ոչ միանշանակ ձևակերպումներով՝ խորհրդակցությունների վրա[25]: Որպես հիմնական հիշատակվող մեխանիզմ և վարչական բարելավում կարելի է նշել Բրյուսելում տեղակայված Քարտուղարության ձևավորումը[26]: Վերջապես, խոսելով անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների բնույթի մասին, համաձայն որոշ մոտեցման՝ առկա է անորոշ ձևակերպում ԵՔՀ կառուցվածքի բացառապես միջկառավարական բնույթի և Դատարանի իրավասության բացառման վերաբերյալ, ինչը հավաստում էր, որ այն ունի ավելի շատ սիմվոլիկ, քան իրավական նշանակություն[27], և որի ուշագրավ մաս կարելի է համարել Իռլանդական Գերագույն դատարանի մոտեցումը առ այն, որ ՄԵԱ 30-րդ հոդվածը պարտադիր էր անդամ պետությունների համար միջազգային իրավունքի տեսակետից՝ «ակտիվորեն ներգրավվելու» այնտեղ շարադրված ընթացակարգերին համապատասխան[28]: Իհարկե, համաձայն որոշ պնդումների՝ ՄԵԱ-ին դրա III-րդ գլխի ներառումը լոկ փաստաթուղթ էր, որը լրացնում էր ԵՏԸ Պայմանգիրը՝ հանդիսանալով բացառապես քաղաքական փոխզիջման արդյունք, իսկ նրա այս գլխի նպատակները հստակ համընկնում էին ՄԵԱ-ի նպատակներին[29] :

Քննարկելով ԵՄ արտաքին քաղաքականության ձևավորումը՝ նշենք, որ դեռևս 1952 թ.-ի դեկտեմբերի 15-ին Կոնրադ Ադենաուերը[30] ընդգծեց Ընդհանուր Եվրոպական արտաքին քաղաքականություն ունենալու անհրաժեշտության մասին՝ ասելով, որ անհնարին է ունենալ ընդհանուր պաշտպանական քաղաքականություն՝ առանց արտաքին քաղաքականության[31]: Նշենք, որ քաղաքական գործընթացների զարգացումը՝ ներառյալ ԵՔՀ ձևավորումը՝ տնտեսական առաջընթացը հավասարակշռելու տրամաբանական քայլերի արդյունք էր: ԵՔՀ հայեցակարգը կոնկրետ իմաստով՝ տարանջատելով նրա անկախությունը ԵՀ-ից՝ ներկայացնում է կառույցի առաքելությունը և կառուցվածքի նկարագիրը, որը կարող էր դյուրացնել արտաքին քաղաքականության համակարգումը և հետագա քաղաքական միավորումը վեցյակի միջև՝ ակնհայտորեն բացառելով ԵՀ-ի ինստիտուցիոնալ կառուցվածքը[32]: ԵՔՀ համալրվեց մի շարք փաստաթղթերով, որոնց շարքից է 1970 թ.-ի Լյուքսեմբուրգի զեկույցը[33], որի արտաքին բաղադրիչը համարվում էր որոշ իմաստով ձևականացված: Զեկույցով նախատեսված արտաքին քաղաքականության համակարգի կամ մեխանիզմի ձևականացման հիմնական

[20] Տե՛ս Document 2/15 The Single European Act, Title III Article 30, point 6. (a)՝ «Պայմանավորվող Բարձր Կողմերը պատրաստակամ են ավելի սերտ համակարգել իրենց դիրքորոշումները անվտանգության քաղաքական և տնտեսական ասպեկտներում»:

[21] Տե՛ս նույն տեղում՝ Title III Article 30, point 6. (b)՝ «..անվտանգության ապահովման համար կողմերը պատրաստ են աջակցել տեխնոլոգիական և արդյունաբերական ոլորտներին, համագործակցելով՝ թե ազգային մակարդակում, թե այլ մարմինների ու կառույցների հետ»:

[22] Տե՛ս նույն տեղում՝ Title III Article 30, point 6. (c)՝ «վերոգրյալից ոչինչ չի կարող խոչընդոտել կողմերին անվտանգության բնագավառում ավելի խորը համագործակցելու ՆԱՏՕ և ԱԵՄ շրջանակներում»:

[23] Տե՛ս նույն տեղում՝ Title III Article 30, point 1՝ «..կողմերը, լինելով Եվրոպական համայնքների անդամներ, պետք է ձգտեն համատեղ մշակել և իրականացնել եվրոպական արտաքին քաղաքականությունը»:

[24] Տե՛ս Elizabeth Duquete, նշվ. աշխ., էջ 172:

[25] Տե՛ս The Single European Act, Title III Article 30 - point 1; point 2 (c, d), point 3 (c), point 7 (a).:

[26] Տե՛ս նույն տեղում՝ Title III Article 30, point 10 (g):

[27] Տե՛ս Panos Koutrakos նշվ. աշխ., էջ 14:

[28] Տե՛ս Raymond Crotty Plaintiff v. An Taoiseach and Others, Defendants [1986 No. 12036P].

[29] Տե՛ս Daniel T. Murphy, նշվ. աշխ., էջ 343:

[30] 1949-1963 թվականներին՝ ԳՖՀ ֆեդերալ կանցլեր:

[31] Տե՛ս A Chronology of European Security and Defence 1945-2005 Julian Lindley-French, Katja Flöckiger (Geneva, May 2005), էջ 40:

[32] Տե՛ս Peter Moloney նշվ. աշխ., էջ 175:

[33] Տե՛ս http://aei.pitt.edu/45409/1/European.Political.Cooperation.pdf (29.04.2018 թ., ժամը 10: 20) էջ 5:

պատճառ հանդիսացավ գիտակցված անհրաժեշտությունը՝ Ընկերակցությունների միջազգային ներկայությունը հավասարակշռելու իրենց տնտեսական հզորությանը՝ համախմբելով ազգային տեսակետները[34]: Նպատակին հասնելու համար անդամ պետությունների ԱԳ նախարարները (անհրաժեշտության դեպքում երկրի ղեկավարները) խորհրդակցություններ անցկացնելու համար յուրաքանչյուր վեց ամիսը մեկ իրականացնում էին հանդիպումներ[35], որոնք նախապատրաստում էր անդամ պետությունների արտաքին քաղաքական գերատեսչությունների քաղաքական հարցերով գլխավոր տնօրենների Քաղաքական կոմիտեն (COREPER, այսուհետ՝ ՔԿ)[36]: Զեկույցի 3-րդ մասի V-րդ հոդվածի համաձայն, եթե նախարարների աշխատանքը ազդելու է ԵՀ վրա, ապա Հանձնաժողովին կառաջարկվի ներկայացնելու սեփական կարծիքը: ՔԿ և ԵՀ Խորհուրդը որպես արտաքին գերատեսչություններ պետք է քննարկեին արտաքին քաղաքականությունը Եվրոպական Պառլամենտի Քաղաքական Կոմիտեի հետ՝ տարեկան երկու անգամ՝ ժողովրդավարական լեգիտիմության պահանջը բավարարելու նպատակով[37]: Ընկերակցությունների առավել վերպետական ինստիտուտների սահմանափակ դերակատարումը արտացոլում էր ԵՔՀ-ի և Ընկերակցությունների միջև տարբերությունը. արտաքին քաղաքականությունը, որը հետագայում համախմբվեց անվտանգության հետ՝ Ընդհանուր Արտաքին և Անվտանգության Քաղաքականության շրջանակներում, դեռևս առանձնացված և դուրս էր իրականացվող Եվրոպական ինտեգրման հիմնական ուղղություններից[38]: Բայց և, նշենք, որ ԵՔՀ շրջանակներում այս երկու հոսքերի համեստ ներգրավումը սկիզբ հանդիսացավ հաջորդ տասնամյակների ընթացքում նրանց միաձուլման տրամաբանական գործընթացի գործում: Հատկանշական է, որ ԱԳ նախարարները նշում էին, որ Լյուքսեմբուրգի զեկույցով ստեղծված բնութագրիչ, պրագմատիկ մեխանիզմներն ցույց տվեցին իրենց ճկունությունը և արդյունավետությունը[39]: Չնայած բոլոր դժվարություններին, ԵՔՀ կազմակերպումը վերանայվեց և կոդիֆիկացվեց 1973 թ.-ի «ԵՔՀ արտաքին քաղաքականության 2-րդ՝ Կոպենհագենյան» ընթանրական անվամբ զեկույցով[40]: Զեկույցում մի շարք փոփոխություններ էին կատարվել ԵՔՀ վերաբերյալ. նախ, նախարարական հանդիպումները ավելի հաճախակի դարձան, իսկ ՔԿ նիստերը՝ ըստ անհրաժեշտության, այնուհետ պաշտոնական տելեքս համակարգի «COREU»[41] անվանմամբ կապ հաստատվեց ինը մասնակից պետությունների մայրաքաղաքների միջև՝ ԱԳ նախարարների միջև անմիջական հաղորդակցություն ապահովելու և նրանց միասնականությունը հավաստելու նպատակով[42]:

Դրան հաջորդած 1973թ. հուլիսի 23-ի Կոպենհագենի զեկույցով նախատեսված համագործակցության նպատակներն էին. ա) պարբերաբար խորհրդատվությունների և տեղեկատվության փոխանակման միջոցով ապահովել փոխըմբռնման բարելավումը, որպես միջազգային հարաբերությունների գլխավոր հիմնախնդիր; բ) կառավարությունների միջև միասնության ամրապնդման խթանումը, իրենց տեսակետների ներդաշնակեցման և դիրքորոշումների հավասարեցման միջոցով, ինչպես նաև հնարավորության և ցանկության դեպքում՝ համատեղ գործողությունը[43] (joint action): Իսկ, ԵՔՀ ներքո անդամ երկրների

[34] Տե՛ս Panos Koutrakos ն շվ. աշխ., էջեր 9-10:

[35] Տե՛ս First Report of the Foreign Ministers to the Heads of State and Government of the Member States of the European Community (The Davignon or Luxembourg Report), Luxembourg, 27 October 1970թ.-ի 2-րդ մասի 2-րդ ենթամասի 1-3-րդ հոդվածները և 3-րդ ենթամասը:

[36] Տե՛ս Michael E. Smith / Institutionalization, Policy Adaptation and European Foreign Policy Cooperation (SAGE and ECPR- Publications 2004, Vol. 10(1)), էջ 105:

[37] Տե՛ս Second Report of the Foreign Ministers to the Heads of State and Government of the Member States of the European Community (The Copenhagen Report), Copenhagen, 23 July 1973թ.-ի մաս 2-րդ հոդված 10:

[38] Տե՛ս Panos Koutrakos նշվ. աշխ., էջ 10:

[39] Տե՛ս https://www.cvce.eu/en/obj/second_report_on_european_political_cooperation_in_foreign_policy_matters_copenhagen_23_july_1973-en-8b935ae1-0a38-42d4-a97e-088c63d54b6f.html (23.04.2018 թ., ժամը 19: 45) :

[40] Տե՛ս Bulletin of the European Communities. September 1973, No 9. (Luxembourg: Office for official publications of the European Communities) :

[41] Տերմինը Ֆրանսերեն «Correspondance Européenne»-ի (թարգմանաբար՝ Եվրոպական հաղորդակցում) հապավումն էր: COREU telex-ի միջոցով ուղարկվում էր տարեկան մոտ 4800 հաղորդագրություն արտաքին քաղաքականության զգայուն հարցերով, որը հետագայում՝ 1990թ.-ին հասավ 13000-ի:

[42] Տե՛ս Peter Moloney, նշվ. աշխ., էջ 180; Տե՛ս նաև՝ Michael E. Smith նշվ. աշխ., էջ 107:

[43] Տե՛ս Christopher Hill & Karen E. Smith. նշվ. աշխ., էջ 84:

միջև բանակցությունների վարման կարգը մեկնաբանվում է զեկույցի 11-րդ հոդվածում[44]: Փաստաթուղթը նախատեսում էր նաև քաղաքական համագործակցության մեխանիկական ձևաչափ միջկառավարական մակարդակում՝ տարբերակվող իր իրավաբանական պարտավորություններով Հռոմի Պայմանագրից[45]: Այս երկու կարգավորումներով մեխանիկորեն գործելը նպատակ էր հետապնդում աջակցելու Եվրոպական «միասնականության» զարգացմանը[46]: Եվ, 1972 թ.-ի հոկտեմբերի 19-21-ին կայացած Փարիզի կոնֆերանսին[47] պետությունների ղեկավարների ընդունած վերջնական հռչակագիրը, inter alia, արտահայտեց այն համոզմունքը, որ Եվրոպան պետք է կարողանա համաշխարհային հարցերում իր ձայնը լսելի դարձնի, ինչպես նաև հաստատեց՝ սեփական տեսակետը միջազգային հարաբերություններում[48]: ԵՔՀ զարգացման երրորդ փուլը կազմող փաստաթուղթ հանդիսացող Լոնդոնի 1981 թ.-ի հոկտեմբերի 23-ի զեկույցը[49]՝ հանդես եկավ ավելի շահեկան դիրքերում քան նախորդ երկուսը: Զեկույցով ընդգծվեցին ԵՔՀ շրջանակներում անդամ պետությունների պարտավորությունները՝[50] սահմանելով որ, համատեղ գործողությունները պետք է ձևակերպվեն ավելի հաճախ և ներկայացնեն կամ պաշտոնապես նախատեսեն տարբեր ընթացակարգային բարելավումներ[51]: Փաստաթղթի նախաբանում ներկայացված ԵՔՀ և Ընկերակցությունների միջև փոխհարաբերությունները ստացան նոր ձևակերպում՝[52] առաջարկելով Ընկերակցությունների գործիքակազմի օգտագործումը՝ թարմացնելով Հանձնաժողովի դերակատարումը[53] և այս երկու շրջանակներում իրականացվող համակարգման պատասխանատվությունը վերահասցեագրելով Նախագահությանը[54]: Պաշտպանության քաղաքական և տնտեսական կողմերը կարող են քննարկվել «ճկուն և պրագ-

[44] Կառավարությունները միմյանց հետ կքննարկեն արտաքին քաղաքականության վերաբերյալ բոլոր կարևոր հարցերն ու կմշակեն առաջնահերթություններ, հետևյալ չափանիշներին համապատասխան. ա) խորհրդատվության նպատակն է գործնական խնդրի վերաբերյալ ձևավորել ընդհանուր քաղաքականություն; բ) առարկայական խնդիրը պետք է վերաբերի եվրոպական շահերին, Եվրոպայում կամ այլ վայրերում, եթե ընդհանուր դիրքորոշումի ընդունումը անհրաժեշտ կամ ցանկալի է: Այս հարցերի վերաբերյալ յուրաքանչյուր պետություն պարտավորվում է որպես ընդհանուր կանոն, առանց իր գործընկերների հետ նախնական խորհրդակցություններ անցկացնելու՝ մեխանիկորեն չընդունել վերջնական դիրքորոշում քաղաքական համագործակցության շրջանակներում: Տե՛ս Second Report of the Foreign Ministers to the Heads of State and Government of the Member States of the European Community (The Copenhagen Report), Copenhagen, 23 July 1973, մաս 2, հոդված 11:

[45] Տե՛ս նույն տեղում՝ The Copenhagen Report՝ մաս 2, հոդված 12:

[46] Տե՛ս Panos Koutrakos նշվ. աշխ., էջ 10:

[47] Տե՛ս Document 2/3 Statement of the Conference of the Heads of State and Government of the Member States of the European Union, Paris, 21 October 1972:

[48] Տե՛ս Christopher Hill & Karen E. Smith. նշվ. աշխ., էջ 85:

[49] Տե՛ս Report Issued by the Foreign Ministers of the Ten on European Political Co-operation (The London Report), London, 13 October 1981:

[50] Անդամ պետությունները պարտավորվում էին չստանձնել ազգային դիրքորոշումը մինչև այն չվիճարկվի ԵՔՀ խորհրդատվական մեխանիզմին համապատասխան:

[51] ԱՄՆ-եվրոպական հարաբերությունները վատթարացել են 1973-ին և 1974-ի առաջին մասում, մասամբ որպես Դոկտոր Քիսինջերի «Եվրոպայի տարվա» և «նոր ատլանտյան խարտիայի» անխոհեմ ելույթների արդյունք, մասամբ՝ Միջին Արևելքի պատերազմի և OPEC-ի հետ կտրուկ քաղաքական տարաձայնությունների պատճառով: Այս իրավիճակում Եվրոպացիները մտադրություն չունեին Միացյալ Նահանգներին թույլ տալու՝ բոլոր մակարդակներում մասնակցելու իրենց քաղաքականության իրագործմանը: Կողմերը եկան փոխզիջման այսպես կոչված «Գիմնիչի ֆորմուլայով»՝ ընդունելով OPEC-ի կողմից առկա ընդհանուր սպառնալիքը՝ Շլոս-Գրիմնիչում ԱԳ նախարարների առաջին ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ, որից հետո դրանք սկսեցին անցկացվել յուրաքանչյուր նախագահության ժամանակ մեկական հանդիպմամբ:

[52] Ընկերակցությունների քաղաքականության պահպանման և զարգացման համար՝ Պայմանագրերին համապատասխան՝ շահավետ կլինի արտաքին քաղաքականության ոլորտում ավելի արդյունավետ համակարգումը և կընդլայնի տասը անդամ պետությունների տրամադրության տակ գտնվող գործիքակազմը:

[53] Սահմանված կանոնների և ընթացակարգերի շրջանակներում Տաս անդամ պետությունները ընդգծում են Եվրոպական Ընկերակցության Հանձնաժողովի ամբողջապես կապակցված լինելու կարևորությունը ԵՔՀ-ը բոլոր մակարդակներում Տե՛ս The London Report մաս 2-րդ, հոդված 12:

[54] «…Նախագահությունը կապահովի, Ընկերակցությունների քաղաքական համագործակցության ասպեկտներով որոշ հարցերի քննարկումների կոորդինացումը, եթե շոշափվող առարկան պահանջում է դա»: Տե՛ս The London Report մաս 2-րդ, հոդված 12:

մատիկ մոտեցմամբ»[55], այդպիսով, առաջին անգամ ներառվելով ԵՔՀ շրջանակներում:

Հաջորդիվ, 1983 թ.-ի Սոլեմնի կամ Շտուտգարտի[56] Հռչակագրում հնչեցված ընթացակարգերը հանգեցրել էին արտաքին գործերի հարցերով Ընկերակցության համակարգային դիրքորոշման ձևավորման և ընդհանուր եվրոպական քաղաքականության ընկալման[57] գործում սեփական ավանդի ներդրմանը: Սոլեմնի Եվրոպական Միության[58] Հռչակագիրը ճանաչեց անդամ պետությունների համար անհրաժեշտությունը՝ ընդհանուր սկզբունքների, նպատակների և հետաքրքրության համար, որոնցով կսահմանվեն և կճանաչվեն տարբեր ընթացակարգային բարելավումներ՝ նախատեսելով. «Եվրոպական Խորհրդարանի կողմից ավելացող ներդրման ճանաչումը՝ տասնյակի համախմբված արտաքին քաղաքականության իրագործման զարգացման համար»[59]: ԵՔՀ և ԵՀ շրջանակների միջև առկա անջրպետը համահարթեցման կարիք ուներ, ինչը ամրագրվեց փաստաթղթի եզրափակիչ դրույթներում[60]: Վերջապես, անդամ պետությունների անվտանգության քաղաքական և տնտեսական ասպեկտներով ազգային դիրքորոշումների կոորդինացումը, որպես առաջնահերթություն, որը ազդում էր ԵՔՀ զարգացման և ուժեղացման վրա՝ երկրորդ անգամ առաջ մղվեց[61]:

Ի վերջո, Սոլեմնի Հռչակագրի փոխլրացված բովանդակությունը և երկրորդ փուլի Զեկույցները ստացան Պայմանագրի տեսք՝ «Միասնական եվրոպական ակտում», որի մասին արդեն խոսվել է: Ինչևէ, անդրադառնալով ակտի արտաքին քաղաքականության ընթացակարգերին, հարկ ենք համարում ընդգծել նաև հետևյալը. նախ ակտի նախաբանում նշվում է՝ «..վճռեցին իրագործել այս ԵՄ-ը հետևյալ հիմքով՝ առաջին հերթին, Ընկերակցությունների, որոնք գործում են իրենց սեփական կանոններով, և երկրորդ՝ ստորագրող պետությունների շրջանակներում՝ արտաքին քաղաքականության բնագավառում Եվրոպական համագործակցության և այս միության համար անհրաժեշտ գործողությունների նշանակության ներդրմամբ»: Արտաքին քաղաքականության կարգավորումների վերաբերյալ իրավական ամրագրումը իր հետագա զարգացումը ստացավ ՄԵԱ-ի 30-րդ հոդվածում[62]: Նախատեսվեց նաև, որ ԱԳ նախարարները և Հանձնաժողովի անդամները հանդիպումներ իրականացնեն տարեկան առնվազն 4 անգամ՝ ԵՔՀ շրջանակներում[63], իսկ Հանձնաժողովը լիովին մասնակցի Քաղաքական համագործակցության ընթացակարգերին[64]: Ընդհանուր դիրքորոշումների արագ ընդունման և համատեղ գործողությունների իրագործման նպատակով կողմերը, հնարավորության սահմաններում, պարտավորություն ստանձնեցին ձեռնպահ մնալ կոնսենսուսի ձևավորումից և այն համատեղ գործողություններից, որոնք դրանք կարող են առաջացնել[65]: Ուշագրավ է նաև, փոքր ինչ

[55] Տե՛ս Christopher Hill & Karen E. Smith. նշվ. աշխ., էջ 115; Տե՛ս նաև՝ https://www.cvce.eu/content/publication/2002/1/18/869a63a6-4c28-4e42-8c41-efd2415cd7dc/publishable_en.pdf (26.04.2018 թ., ժամը 13: 45):

[56] Տե՛ս Solemn Declaration on European Union by the European Council (The Stuttgart Declaration), Stuttgart, 19 June 1983:

[57] Տե՛ս Daniel T. Murphy, նշվ. աշխ., էջ 338:

[58] ԵՄ բառակապակցությունը օգտագործվում է Հռչակագրի նախաբանում և տեքստում՝ ընդգծելով անդամ պետությունների ցանկությունը երկրների միջև առկա հարաբերությունների ողջ համալիրը վերածելու Եվրոպական Միության:

[59] Օրինակ՝ «Տասնյակի և երրորդ երկրների առաքելությունների միջև վարչական և դիվանագիտական հարցերում առավել սերտ համագործակցություն» և այլ: Տե՛ս Solemn Declaration հոդված 3.2:

[60] «Եվրոպական Միությունը ձգտում է Եվրոպական գործունեության ոլորտների խորացմանը և ընդլայնմանը, որպեսզի նրանք միահամուռ կերպով ընդգրկեն, թեև տարբեր իրավական հիմքերով, անդամ պետությունների փոխհարաբերությունների աճող մասնաբաժինը և նրանց արտաքին հարաբերությունները»: Տե՛ս Solemn Declaration հոդված 4.2:

[61] Տե՛ս Panos Koutrakos նշվ. աշխ., էջ 12:

[62] «Եվրոպական համագործակցությունը արտաքին քաղաքականության ոլորտում պետք է իրականցվի հետևյալ դրույթներին համապատասխան՝ Բարձր պայմանավորվող կողմերը, հանդիսանալով Եվրոպական Ընկերակցությունների անդամներ պետք է ջանքեր գործադրեն Եվրոպական արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման համար»: Տե՛ս The Single European Act, Title III Article 30, point 1:

[63] Տե՛ս The Single European Act, Title III Article 30, point 3 (a):

[64] Տե՛ս The Single European Act, Title III Article 30, point 3 (b):

[65] Տե՛ս The Single European Act, Title III, Article 30, point 3 (c); Տե՛ս նաև՝ John J. Kavanagh, Atempting to Run Before Learning to Walk: Problems of the EU's Common Foreign and

ավելի ուշ ընդունված որոշումը ԵՔՀ և Եվրոպական Պառլամենտի փոխհամագործակցության վերաբերությամբ, որը նախատեսում էր նախագահությանը՝ ԵՔՀ կոնտեքստում քննարկվող արտաքին քաղաքականության թեմաների վերաբերյալ պարբերաբար տեղեկացնել[66] և տարեկան մեկ անգամ ԵՔՀ առաջընթացի վերաբերյալ ուղարկել գրավոր հաղորդագրություն Եվրոպական պառլամենտին, ինչպես նաև նախարարական մակարդակով մասնակցել Եվրոպական պառլամենտի ընդհանուր քննարկումներին՝ արտաքին քաղաքականության վերաբերյալ[67]:

Այսպիսով՝ ԵՄ արտաքին քաղաքականությունը խրախուսում էր ԵՄ անդամ պետությունների միջև տեղեկատվության փոխանակումը՝ ձևավորելով ընդհանուր հասկացություններ և դրանց հիման վրա ստեղծելով հատուկ արտաքին քաղաքականության գործիքակազմ՝ յուրահատուկ սեփական հարթակ՝ coodination reflex, acquis politique, COREU, coutumier, receuil, domaines réserves և այլն[68]:

Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ արտաքին հարաբերություններում համատեղ գործողություններ ձեռնարկելու, պարբերաբար հանդիպում խորհրդակցություններ անցկացնելու, կառավարությունների մակարդակով դիրքորոշումների համաձայնեցման միտված քայլերն գործուն մեխանիզմ հանդիսացան՝ միասնական ԵՄ քաղաքականության մշակելու ճանապարհին: Այս փուլում խոսքը գնում է ԵՄ շրջանակներում քաղաքականության համակարգման (ոչ թե և ոչ միայն քաղաքականության արդյունավետության և միասնականացման) մասին:

Համընդհանուր արժեքների հիման վրա ինտեգրման ուղղված քայլերը՝ ստեղծեցին նոր՝ կոլեկտիվ ինքնություն արտաքին քաղաքականության հարցերում՝ դրսևորելով միասնականություն դիվանագիտական լեզվի, մոտեցումների, հասկացությունների, ինստիտուցիոնալ ընթացակարգերի, կոլեկտիվ գործողությունների միջոցով: Այս ինքնության կրողները պատրաստակամ դարձան ստանձնելու սեփական պարտականությունները և կրելու պատասխանատվություն ընդհանուր՝ ԵՄ ընտանիքի շրջանակներում:

Կարելի է վիճարկել հանգամանքը, որ ունենալով ուրույն ազգային յուրահատկություն, ինստիտուցիոնալ կառուցակարգեր, ինքնիշխանության գիտակցում՝ անդամ պետությունները չցանկացան և չդրսևորեցին բավարար վճռականություն՝ ավելի վաղ համախմբվելու այս միասնական ընտանիքում: Բայց անհրաժեշտ է արձանագրել, որ տիրող բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում՝[69] հաշվի առնելով թվարկած մարտահրավերները՝ կատարված այս առաջին փոքր, շարունակական քայլերը բերեցին Միասնական Եվրոպայի Կայացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. European Union Law / Alina Kaczorowska. (Published 2008 by Routledge-Cavendish), 950 էջ:
2. Daniel T. Murphy, European Political Cooperation After the Single European Act: The Future of Foreign Affairs in the European Communities, (12 B.C. Int'l & Comp. L. Rev.335 -Vol. XII, No.2, 1989) էջեր 335-355:
3. From Common Market to European Union: Creating a New Model State? / Peter Moloney (Boston, 2014), 377 էջ:
4. Panos Koutrakos Trade, Foreign Policy and Defence in EU Constitutional Law (Hart publishing Oxford and Portland 2001), 245 էջ:
5. Elizabeth Duquete, "Te European Union's Common Foreign and Security Policy: Emerging from the U.S. Shadow," (7 U. C. Davis J. Int'l L. & Pol'y 2001), էջեր 169-196:
6. R. Bernardt Encyclopedia of Public International Law (North Holland, Amsterdam, 1983, Vol.6), էջ 199:
7. A Chronology of European Security and Defence 1945-2005 Julian Lindley-French, Katja Flöckiger (Geneva, May 2005) 284 էջ:
8. Michael E. Smith / Institutionalization, Policy Adaptation and European Foreign Policy Cooperation (SAGE and ECPR- Publications 2004, Vol. 10(1)), էջեր 95-136: European foreign

Security Policy, (20 B.C. Int'l & Comp. L. Rev. (1997)), է ջ 356: Հանձնաժողովը «լիովին ընդգրկված էր» և հանդես էր գալիս ինչպես «13-րդ մասնակից» ԵՔՀ որոշումների կայացման ընթացակարգերին, որոնք կայացվում էին կոնսենսուսով:

[66] Տե՛ս Document 2/16 Decision of the Foreign Ministers, Meeting in the Framework of European Political Co-operation, 28 February 1986, Title I, Article 1.

[67] Տե՛ս նույն տեղում՝ Title I, Article 3.

[68] Տե՛ս Michael E. Smith նշվ. աշխ., էջ 109:

[69] Այստեղ հեղինակը նկատի ունի Եվրոպայի վերականգնումը 2-րդ համաշխարհային պատերազմի ջախջախիչ արհավիրքներից, ձևավորվող երկբևեռ աշխարհակարգը (ՆԱՏՕ - Վարշավյան Պակտի երկրներ) Սառը պատերազմի ժամանակ և այլն:

policy: key documents / [edited by] Christopher Hill & Karen E. Smith. (Routledge, 2000), 477 էջ:
9. John J. Kavanagh, Atempting to Run Before Learning to Walk: Problems of the EU's Common Foreign and Security Policy, (20 B.C. Int'l & Comp. L. Rev. (1997)), էջեր 353-367:
10. Արման Սարգսյան, Տերիկա Մխիթարյան / Եվրոպական միության իրավունք ուսումնական նյութերի ժողովածու. (U-259 – Երևան), 244 էջ:
11. Bulletin of the European Communities. (Vol. 3, No. 11, November 1970), 150 էջ:
12. Bulletin of the European Communities. September 1973, No 9. (Luxembourg: Office for official publications of the European Communities).
13. Document 2/3 Statement of the Conference of the Heads of State and Government of the Member States of the European Union, Paris, 21 October 1972:
14. Document 2/15 The Single European Act, Luxembourg, 17 February 1986, and The Hague, 28 February 1986:
15. Second Report of the Foreign Ministers to the Heads of State and Government of the Member States of the European Community (The Copenhagen Report), Copenhagen, 23 July 1973:
16. First Report of the Foreign Ministers to the Heads of State and Government of the Member States of the European Community (The Davignon or Luxembourg Report), Luxembourg, 27 October 1970:
17. Report Issued by the Foreign Ministers of the Ten on European Political Co-operation (The London Report), London, 13 October 1981:
18. Solemn Declaration on European Union by the European Council (The Stuttgart Declaration), Stuttgart, 19 June 1983:
19. Document 2/16 Decision of the Foreign Ministers, Meeting in the Framework of European Political Co-operation, 28 February 1986:
20. Case: Raymond Crotty Plaintiff v. An Taoiseach and Others, Defendants [1986 No. 12036P].
21. http://www.internationaldemocracywatch.org/attachments/296_The%20Messina%20Declaration%201955.pdf (16.04.2018 թ., ժամը 12: 20);
22. https://www.cvce.eu/en/obj/treaty_establishing_the_european_atomic_energy_community_rome_25_march_1957-en-a3390764-3e75-421b-9c85-f52de5a14c2f.html;
23. https://www.cvce.eu/obj/treaty_establishing_the_eec_convention_on_certain_institutions_common_to_the_european_communities_rome_25_march_1957-en-903872ca-002c-4ba4-b845-c25bbcb0f60f.html (16.04.2018 թ., ժամը 12: 30) :
24. https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:11965F&qid=15238 82386924&from=EN (16.04.2018 թ., ժամը 16: 45) :
25. https://www.cvce.eu/en/recherche/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/7847215b-b917-472d-beb1-a266c1a49f03 (16.04.2018 թ., ժամը 18: 33) ;
26. https://www.cvce.eu/content/publication/1999/1/1/93a76f6b-b740-40f0-8b30-2c7c25fa625d/publishable_en.pdf (16.04.2018 թ., ժամը 17: 33) ;
27. http://www.europarl.europa.eu/facts_2004/1_1_2_en.htm (16.04.2018 թ., ժամը 17: 33):
28. https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=LEGISSUM:xy0027&from =EN (16.04.2018 թ., ժամը 18: 07) ;
29. https://www.cvce.eu/en/collections/unit-content/-/unit/02bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/23bbb26c-a69c-40f1-954c-6b3cb1392b4d (16.04.2018 թ., ժամը 18: 17)
30. http://aei.pitt.edu/64720/1/BUL224.pdf (18.04.2018 թ., ժամը 17: 20) :
31. http://aei.pitt.edu/45409/1/European.Political.Cooperation.pdf (29.04.2018 թ., ժամը 10: 20)
32. https://www.cvce.eu/obj/second_report_on_european_political_cooperation_in_foreign_policy_matters_copenhagen_23_july_1973-en-8b935ae1-0a38-42d4-a97e-088c63d54b6f.html (20.04.2018 թ., ժամը 17: 30) ;
33. https://www.cvce.eu/content/publication/2002/1/18/869a63a6-4c28-4e42-8c41-efd2415cd7dc/publishable _en.pdf (26.04.2018 թ., ժամը 13: 45) :

Хаусхофер К. Панидеи в геополитике
Karl Haushofer, Geopolitik der Pan-Ideen (“Weltpolitische Bűcherei”. Bd 21. Berlin, 1931)

ГЛАВА VIII
Панидеи и международная организация; между лигой наций и национализмом

Придирчивое исследование показывает, что панидеи, учитывая время и пространство их рождения, получали различные по пространственным потенциям жизненные ростки в зависимости от того, какая тенденция брала верх в отправной точке – рационалистическая или же идеологическая, в зависимости от того, каким было родовое (Kernraum) пространство – узким или широким, малым или большим, испытывающим избыточное давление центром, как Европа, или же обескровленным и пустым, изголодавшимся по людям (dead heart[1] Азии, Австралии; “wide lone lands”[2] Северной Америки и Австралии; гилея Южной Америки, Африки). Можно также различать искусственно вызванные к жизни продуманной государственной мудростью в качестве инструмента упомянутые панидеи вроде пантихоокеанской, которые по природе своей являются эволюционными (как в большинстве случаев океанские образования), и порожденную недовольством, революционную по природе вроде паназиатской, которую, конечно, никто не назвал бы искусственной в силу ее изначальной спонтанности.

Однако сообразно своему происхождению и унаследованному характеру панидеи в совершенно различной степени подходят для поддержки международной организации в зависимости от того, к чему они ближе – к Лиге Наций или к национализму. Панидеи островных частей Света, крупных ландшафтов, как панамериканский или панавстралийский, вполне самодостаточны, склонны к автаркии, к изоляции: они забывают о том, что миллиарды людей не захотят умирать с голоду, не смирятся с “недопущенными к заявке” (“ausgeclaimten”) резервными пространствами, закрашенными в атласе красным цветом, – только потому, что эти пространства когда-то, во время успешных морских разбоев, были приобретены под видом главного правоос-нования, когда не поступало иных настойчивых заявок, продиктованных высочайшей заботой о лучшем использовании пространства и об уходе за ним. Носители морских панидеи, чья сила основана на разбросанном владении (Streubesitz), с трудом понимают, что целые части Света неохотно расстаются со своей “золотой бахромой на нищенском рубище” (Азия, согласно лорду Керзону) и требуют прекращения чужеземной эксплуатации. Оттого и трудности для иберов, голландцев, французов, британцев воздать должное паназиатскому движению, которое со своей стороны используется Советами, чтобы “держать в брожении” обширные азиатские пространства (ленинский завет Китаю!).

Далее, из выражений “mare nostrum” и “orbis terrarum”[3], присущих мышлению Древнего Рима, понятно, что в господствовавшем там латинском языке нет общепринятого обозначения для понятия “наднародный”, “наднациональный”, воспроизводимого как международное. Однако примечательно: ведь органически живущая линия развития, которой принесли политико-морфологическую жертву и централизованно сплоченные нации, а не только прочие, чужда латинскому пространственному мышлению. Об этом напоминает принимавшая разные формы, потерпевшая крах панидея, слишком трудная в его восприятии.

Германское государственное мышление (Staatsdenken) испытало на собственном опыте одно такое панобразование, ставшее неуемным (panlustig) лишь благодаря норманнской закваске анг-лосаксонства, хотя и весьма способном к преобразованиям. Вопреки всем воплям по поводу Пангерманского союза[4] и его влияния, которое было весьма скромным, это мышление никогда не проникало на европейскую континентальную почву в виде некоего панпредставления. В своей старинной “Священной Римской империи германской нации” собственную народную энергию к огромному ущербу для себя оно принесло в жертву “наднациональной” имперской идее, пока та не превратилась в иллюзию.

Из столь различных опытов становится ясно, что уже в Центральной Европе в этом коренном вопросе – о возможности будущего панъевропейского образования – нет понимания и еще меньше его в выработке понятия “права меньшинств”[5], в связи с чем Мелло Франко обнародовал потрясающе простое в латинском восприятии решение: целесообразно как можно быстрее ассимилировать меньшинства! Вероятно, Южная Америка еще познает в связи с проблемой цветного населения, как такое решение скажется на ее собственной шкуре; но пока, правда, обнаруживается, что правомочие чуждых региональных сил участвовать в разработке пан-Европы на

пути, проходящем через Лигу Наций, должно быть так же отклонено, как его отклонила пан-Америка и ему отказывает пан-Азия.

Поэтому из многих трудностей, противостоящих образованию пан-Европы после создания Лиги Наций, с непредвзятой, географической точки зрения, выделены особенно легко постижимые.

